Սույն գիրքը թվայնացվել է Գրքասեր ՀԿ-ում՝ հայերենով գրականության պահպանման, հանրայնացման և ժամանակակից թվային միջավայրում հասանելի դարձնելու նպատակով:

Կազմակերպության նախաձեռնությունը միտված է հայերեն գրքերի և տեքստերի տարածմանը, ընթերցանության խթանմանը և մշակութային ոչ նյութական ժառանգության պահպանությանը՝ ապահովելով դրանց հասանելիությունը հնարավորինս լայն շրջանակների համար:

Մենք հավատում ենք, որ թվայնացումը ոչ միայն պահպանման միջոց է, այլև գիտելիքի, գրականության և մշակույթի շարունակական փոխանցման կարևոր ուղի:

Գրքասեր ՀԿ-ն գրքերը ձայնագրում և թվայնացնում է բացառապես Ձեր նվիրատվությունների շնորհիվ: Կազմակերպությանը կարող եք օժանդակել հետևյալ հղումով՝

https://grqaser.org/hy/donate

Ստուգված
Հայ գրականություն, Թատերգություն
13+

Շիրվանզադե
Իշխանուհի
դրամա 4 գործողությամբ
1891 թ.

Գործող անձինք

ՄԱՐԻԱՄ ԲԵԳՄՈՒՐՅԱՆ, 55 տարեկան.

ՄԻՔԱՅԵԼ, նրա որդին 34 տարեկան.

ՀԵՂԻՆԵ, Միքայելի ամուսինը, Իշխանուհի, 24 տարեկան.

ՕԼԳԱ, Միքայելի քույրը, 27 տարեկան.

ՍՈՒԼԻԿՅԱՆ, Միքայելի հասակակից ընկերը.

ՀՈՌՈՄ, Հեղինեի մայրը, 52 տարեկան,

ԳԱՐԵԳԻՆ, Հեղինեի եղբայրը, 26 տարեկան.

ՁԱՐԲԱԲՅԱՆ, Հոռոմի շատ հեռավոր ազգականը, 42 տարեկան,

ԴԱԼԱԼՅԱՆ, Միքայել Բեգմուրյանի կաթնընկերը, 34 տարեկան.

ԱՆՅՈՒՏԱ, աղախին Բեգմուրյանների տանը, երիտասարդ

ՍԻՄՈՆ, ծառա Բեգմուրյանների տանը, երիտասարդ.

Հյուրեր.

Սպասավորներ.

Գործողությունը կատարվում է Թիֆլիսում:

1-ին գործողություն

(Սի բավական մեծ սենյակ իշխան Բեգմուրյանների տանը:

Մեջտեղ, աջ և ձախ կողմերում դռներ: Սենյակը զարդարված է անխառն եվրոպական ոճով):

ՏԵՍԻԼ Ա.

ՍԻՄՈՆ, հետո ԱՆՅՈՒՏԱ

ՍԻՄՈՆ. (Սենյակի կահ-կարասին դասավորելով) Տասնումեկ ժամն է, պետք է շուտով կարգի բերել: Օրիորդը հրամայել է հագնվել, կառքով ուրիշ տեղ է գնալու: Զարմանալի է. այս տանը հինգ ծառա կա, ամենից շատ ես եմ աշխատում, ամենից քիչ էլ ես եմ ստանում: Ինձ այստեղ չեն սիրում, բացի նոր իշխանուհուց: Նա ինձ հետ լավ է: Այո, նա լավ կին է, բայց էլի ծիծաղս գալիս է, երբ հիշում եմ, թե ո՛ւմ աղջիկն է: Աշխարհ է. փող ուներ, եկավ ու դարձավ նորին պայծառափայլություն: (Աջ դռներից ներս է մտնում Անյուտան):

ԱՆՅՈՒՏԱ. Ինչ ես ինքդ քեզ մրթմրթում: Շո՛ւտ արա, վերջացրու, թե չէ օրիորդը կգա ու կնախատի, որ դեռ չես հագնվել:

ՍԻՄՈՆ. Աստված սիրես նրա անունը մի՛ հիշիր: Ես նրան ատում եմ:

ԱՆՅՈՒՏԱ. Ում, Օլգայի՞ն,

ՍԻՄՈՆ. Հենց նրան:

ԱՆՅՈՒՏԱ. Ինչպես ես համարձակվում:

ՍԻՄՈՆ. Գոռոզ, փքված, քացախած, ամեն չնչին բանի համար մեզ վրա գոռում, ինչպե՞ս սիրեմ նրան: Ա՛յ ուրիշ բան է նրա եղբոր կինը:

ԱՆՅՈՒՏԱ. Դու հավանում ես այն մարդու աղջկան, որի անունը ամաչում են հիշել այս տանը:

ՍԻՄՈՆ. Ինչ անենք, որ հայրը վատ անուն է թողել աշխարհում, թող աղջիկը լավ լինի: Հիշո՞ւմ ես, զատկին ի՞նչ թանկագին նվերներ տվեց մեզ: Չէ՛, նա այս տունը մրափելուց հետո մեր բանը շատ լավ է գնում: Մոռացե՞լ ես՝ առաջ ինչպես էր կառավարվում այս ընտանիքը, ամիսներով ռոճիկ չէինք ստանում: Իսկ այժմ կանխիկ ենք վերցնում, ամեն օր հյուրեր, երեկույթ, ճաշ: Բայց գիտե՞ս, Անյուտա, ես մի բան եմ նկատում:

ԱՆՅՈՒՏԱ. Ի՞նչ բան:

ՍԻՄՈՆ. Երդվիր, որ ինձ չես մատնի:

ԱՆՅՈՒՏԱ. Լավ, երդվում եմ:

ՍԻՄՈՆ. (Շուրջը նայելով) Մեր նոր իշխանուհու դրությունը այս տանը լավ չէ:

ԱՆՅՈՒՏԱ. Ինչպե՞ս:

ՍԻՄՈՆ. Այնպես, լավ չէ: Նրան չեն սիրում:

ԱՆՅՈՒՏԱ. Ով:

ՍԻՄՈՆ. Ամենից առաջ մարդը:

ԱՆՅՈՒՏԱ, Դու ո՞րտեղից գիտես:

ՍԻՄՈՆ. Օհ՛ , Անյուտա ինձ այդպես մի՛ տեսնի, ես շատ բան գիտեմ, մի օր կպատմեմ: Սու՛ս, կարծես մեկը գալիս է:

ԱՆՅՈՒՏԱ. Օրիորդն է (Ներս է մտնում աջ դռներից Օլգան դրսի հագուստով):

ՏԵՍԻԼ Բ.

ՆՐԱՆՔ և ՕԼԳԱ

ՕԼԳԱ. Անյուտա, դու այստե՞ղ ես: Քանի անգամ եմ քեզ ասել չհեռանաս ինձանից, երբ ես տանն եմ: Կառապանին հրամայեցի՞ր:

ԱՆՅՈՒՏԱ. Այո, լսում է:

ՕԼԳԱ. (Տեսնելով Սիմոնին) Օ՛, mon Dieu! դու դեռ հագնված չես, այդ ի՞նչ անկարգություն է:

ՍԻՄՈՆ. Իսկույն, օրիո՛րդ, իսկույն:

ՕԼԳԱ. Ծույլ, կոպիտ հայ: Դուք միշտ այդպես եք, մինչև որ մի բան տասն անգամ չհրամայեն, չեք կատարի: Հազար անգամ ասել եմ, որ այս տանը հայ ծառա չպիտի լինի: Եղբորս կինն է մեղավոր, որ քեզ պահում է: Գնա , շուտ հագնվիր: Տե՛ս, լավ լվացվիր, մաքուր շապիկ հագիր: Չլինի թե այն օրվա պես ցիլինդրի փոխարեն ֆուրաժկա դնես: Ձեռնոցդ էլ չմոռանաս:

ՍԻՄՈՆ. Աչքիս վրա, աչքիս վրա: (Մի կողմ) Օ՛հ, օ՛հ օ՛հ, վա՛յ այն մարդուն, որ քեզ հետ կամուսնանա: (Գնում է միջին դռներով):

ՕԼԳԱ. (Անյուտային) Իսկ դու գնա, տուալետիս սեղանը կարգի բեր: Անուշահոտ յուղերիս ձեռ չտաս: Հետո շուտով եկ, ինձ ճանապարհ դիր մինչև կառքը: (Անյուտան գնում է) Արդյոք ուշ չէ՞: (Նայում է ծոցի ժամացույցին) Տասնումեկից տասը րոպե անց է: Դեռ ժամանակ կա: (Նայում է հայելուն) Լիզա Պանովսկայային խոսք եմ տվել մեր տնային կառքով գնալ երաժշտական դպրոց: Այսօր այնտեղ նվագահանդես է: Եղանակը լավ է, տանը նստել չեմ կարողանում: Եվ ի՞նչ գործ ունեմ կամ ո ւմ հետ մնամ այստեղ. Եղբորս կնո՞ջ հետ... Ֆիդո՛ն... շատ տաղտկալի: Երկուուկես տարի է իշխանուհի է, դեռ չի ընտելացել մեր շրջանի կյանքին: Ահա ձեզ բախտ, այն տեսակ մարդու աղջիկը եղբորս պես մեկ մարդու ամուսինը դառնա, իսկ ես և ինձ նմանները մնան տանը... Ա՛հ, (նայելով հայելուն) այսօր ի՞նչ գրավիչ եմ... (ներս է մտնում աջ դռներից Մարիամը):

ՏԵՍԻԼ Գ.

ՕԼԳԱ և ՄԱՐԻԱՄ

ՄԱՐԻԱՄ. Դու դեռ տանն ես։

ՕԼԳԱ. Անպիտան ծառաների շնորհիվ։

ՄԱՐԻԱՄ. Այսօր էլ մենա՞կ պիտի կառք նստես։

ՕԼԳԱ. Մենակ, ինչպես միշտ . ծառան նստած կառապանի մոտ, ինքս ազատ, համարձակ։ Այդ շատ դուր է գալիս ինձ, բոլոր արիստոկրատները այդպես են անում։

ՄԱՐԻԱՄ. Բայց տիկինները և ոչ թե օրիորդները։

ՕԼԳԱ. Ինձ համար միևնույնն է։

ՄԱՐԻԱՄ. Օլգա, դու շատ համարձակ ես պահում քեզ։

ՕԼԳԱ. Քո կարծիքով ինչպե՞ս պետք է լինեի։ Չլինի՞ թե ուզում ես մեր բազազների աղջկերանց պես դեդիդես առաջից, մամիդես հետևից գցած ման գամ, ֆի՛ ի... զզվում եմ։ Ոչ, մամա, ձեր ժամանակը անցավ, թող անեմ, ինչ որ գիտեմ։ Ես ուզում եմ ապրել այնպես, ինչպես ապրում են մայրաքաղաքներում։

ՄԱՐԻԱՄ. Լա՛վ. արա, ինչ որ ուզում ես, չեմ կարող սրտիդ դիպչել։ Բայց, փա՛ռք աստուծո, որ այժմ կարողություն ունենք մի քիչ շքեղ ապրելու։ Ինչ պետք է անեինք, եթե եղբայրդ ամուսնացած չլիներ։

ՕԼԳԱ. Եղբայրս գիտե սիրել իր մորն ու քրոջը։ Նա իր կնոջ օժիտը մենակ իր համար չի ծախսում, մեզ էլ է օգնում։

ՄԱՐԻԱՄ. Այո, ամբողջ քաղաքն էլ իմանում է, որ Միքայելը փողի համար առավ այն աղջկան։ Եթե հարուստ լիներ, մեր ազգի անունը չէր կապի նրա խայտառակ հոր անվան հետ։

ՕԼԳԱ. Մամա, այդքան ասում եք խայտառակ, խայտառակ, բայց ուղիղն ասած, ես չգիտեմ Հեղինեի հայրը ի՞նչ է արել, որ վատ անուն է թողել աշխարհում։

ՄԱՐԻԱՄ. Եվ լավ է, որ չիմանաս և չխոսես այդ բանի մասին։

ՕԼԳԱ. Դու ասա, Հեղինեն հենց ինքը անարժան էր այս տանը։

ՄԱՐԻԱՄ. Ինքը դեռ, Է՛հ, մի բան է. գիմնազիայումն է ուսում առել, ռուսերեն, ֆրանսերեն խոսում է Իսկ մա՛յրը, մայրը. ծիծաղս գալիս է, երբ տեսնում եմ նրան հպարտ-հպարտ այս դռներով ներս մտնելիս։

ՍԻՄՈՆ. (Միջին դռների մեջ երևում է ցիլինդրով և երկար կոճակավոր սյուրտուկով) Կառքը և ես պատրաստ ենք։

ՕԼԳԱ. Լավ, մի՛ գոռա։ Անյո՛ւտա։ (Գալիս է Անյատան աջ դռներից) Գնանք վերարկուս հագցրու։

ՄԱՐԻԱՄ. Շո՞ւտ կվերադառնաս։

ՕԼԳԱ. Երբ կուզենամ, (Գնում է միջին դռներով, Անյուտան ն Սիմոնը հետևից)։

ՏԵՍԻԼ Դ.

ՄԱՐԻԱՄ (միայնակ)

ՄԱՐԻԱՄ. Զուգիր, զարդարիր, ազատություն տուր ամեն տեղ գնալ, բայց ի՞նչ օգուտ: Նա մնում է տանը և պառավում, որովհետև օժիտ չունի: Ա՞խ, եթե աստված այդ Սուլիկյանի սիրտը դարձներ Օլգայիս կողմը, ես բախտավոր կլինեի: Որդուս ամուսնացրի, մնաց աղջիկս: Բայց բախտավո՞ր է որդիս. չեմ իմանում: Ահա մի քանի ամիս է տեսնում եմ, որ մարդ ու կին լավ չեն վարվում: Անցյալները ականջովս լսեցի, ինչպես Հեղինեն նախատում էր Միքայելին: Նա՞, իմ որդո՞ւն: Ահա գալիս է, տխուր, աչքունքը թթվացրած... (Ներս է մտնում ձախ դռներից Հեղինեն):

ՏԵՍԻԼ Ե.

ՄԱՐԻԱՄ ԵՎ ՀԵՂԻՆԵ

ՀԵՂԻՆԵ. (Մեկուսի, առանց Մարիամին տեսնելու) Նա գնաց, առանց բացատրություն տալու: Իսկ այդ ես սպասում էի ամենաջերմ փափագով: Ոչ, իմ կասկածը արդար է, ես հետզհետե համոզվում եմ, որ,... (Հանկարծ նկատելով Մարիամին) Մամա՛ա:

ՄԱՐԻԱՄ. Նա ինքն է: Այնքան մտքով զբաղված էիր, որ հազիվ, վերջապես տեսար: Այդ ի՞նչ նոր քամի է փչել, որ տխուր ես:

ՀԵՂԻՆԵ. Ես... տխուր չեմ:

ՄԱՐԻԱՄ. (Հեգնորեն) Իհարկե, ինչպե՜ս չէ, տեսնում եմ: Ամուսինդ տա՞նն է:

ՀԵՂԻՆԵ. Ոչ, գնաց:

ՄԱՐԻԱՄ. Ո՞ւր,

ՀԵՂԻՆԵ. Ես չգիտեմ նա ուր է գնում:

ՄԱՐԻԱՄ. Չգիտես, բայց ո՞ւմ պարտքն է իմանալ:

ՀԵՂԻՆԵ. Կկամենայի այդ պարտքը ունենալ և կատարել: Բայց Միքայելը ինձ երբեք չի հայտնում, թե ուր է գնում և երբ կվերադառնա: (Մի կողմ): Զգում եմ, որ չար կասկածը ինձ դարձնում է ջղային, բայց պետք է զսպեմ ինձ:

ՄԱՐԻԱՄ. Նա քեզ չի՞ հայտնում, ա՛յ նորություն: Նա քո առաջ մի երեխայի պես է պահում իրեն, նա քեզ սիրում է ավելի, քան ինձ՝ իր մորը: Իսկ դու մի՞թե դժգոհ ես նրանից:

ՀԵՂԻՆԵ. Երբե՜ք, ո՞վ ասաց, որ դժգոհ եմ:

ՄԱՐԻԱՄ. Այդ երևում է քո ձայնից, խոսքերից և վերջապես դեմքից: Ասա՛ , դու այսօր կռվե՞լ ես նրա հետ:

ՀԵՂԻՆԵ. Ոչ, ինչո՛ւ պիտի կռվեի:

ՄԱՐԻԱՄ. (Հեգնորեն) Ով գիտե, դու նրա կինն ես, իրավունք ունես:

ՀԵՂԻՆԵ. (Մեկուսի) Ծաղ՜ր, միշտ ծաղր...

ՄԱՐԻԱՄ. Բայց նա առո՞ղջ է:

ՀԵՂԻՆԵ. Առողջ, ինչպես միշտ:

ՄԱՐԻԱՄ. Ուրա՞խ դուրս եկավ տնից։

ՀԵՂԻՆԵ. Ուրախ, ինչպես ամեն օր։

ՄԱ1ԻԱՄ. Ուրեմն ինչո՞ւ դու տխուր ես, չլինի թե հիվանդ ես։

ՀԵՂԻՆԵ. (Մեկուսի) Պետք է ստել այդ հարցուփորձից ազատվելու համար։ (Բարձր) Այո, մի փոքր տկար եմ, գլուխս սաստիկ ցավում է։

ՄԱՐԻԱՄ. Հենց այդ. իմ գլուխս ամեն օր ցավում է։ Զբաղվիր տնային գործերով, կանցնի։ Մայրդ գալո՞ւ է այստեղ։

ՀԵՂԻՆԵ. Երևի, կգա։

ՄԱՐԻԱՄ. Եթե չեկա՛վ, մարդ ուղարկիր հետևից. Այսօր մի քիչ տխուր եմ, ուզում եմ նրա հետ թուղթ խաղալ, կարելի է սիրտս բացվի։ Դե՛հ, ես գնում եմ իմ սենյակը, հենց որ մայրդ եկավ, իսկույն ուղարկիր այնտեղ։ Նայիր, իմ որդուս առաջ այդ դեմքով չդուրս գաս այսուհետև։ (Գնում է աջ դռներով)։

ՏԵՍԻԼ Զ.

ՀԵՂԻՆԵ (միայնակ)

ՀԵՂԻՆԵ. Այսպես, ուրեմն, միշտ պետք է թաքցնեմ իմ վիշտը։ Եվ ո՞ւմ հայտնեմ, ինչո՞ւ համար, ո՞վ կարող է ինձ օգնել։ Նա ինձ չի սիրում, այդ ինձ համար պարզ է։ Նա հրապուրվեց իմ օժիտով, իսկ ես նրանով, և՛ միմիայն նրանով։ Քսանումեկ տարեկան հասակում, սիրտս լի սիրո ցանկությամբ հանդիպեցի նրան։ Նա գեղեցիկ էր, կրթված, նուրբ, սիրալիր։ Նրա կերպարանքից, նրա ձայնից, նրա խոսակցությունից և, վերջապես, նրա ձևերից բուրում էր ինձ համար մի անծանոթ աշխարհ։ Այն շրջանը, ուր ես ծնվել ու սնվել էի, չուներ յուր մեջ այդ աշխարհի հրապույրը։ Իմ շուրջը տիրում էր կոշտը, կոպիտը, իսկ իմ սիրտը ձգտում էր դեպի նուրբը, կրթվածը և մեղմը։ Ահա, ասացի ինձ, տեսնելով նրան, այդ մարդու մեջ կարող եմ գտնել այն, ինչ որ չեմ տեսնում ինձ սնուցանող դասակարգի մեջ։ Եվ ես, անփորձս, շլացա արտաքին փայլով, երևակայեցի մի ապագա ընտանեկան կյանք, ուր սերը, քաղցրությունը և մեղմ զգացմունքներն են տիրում։ Հորս գռեհիկ վարվողությունը մորս հետ արդեն իմ մեջ վաղուց պատրաստել էր մի տեսակ ատելություն դեպի ամուսնական խստությունը։ Թո՛ղ, ասում էի, Բեգմուրյանը ունենա ուրիշ թերություններ, բայց նա կվարվի ինձ հետ ինչպես ժամանակակից քաղաքակրթված ամուսին։ Կզոհեմ նրան ամեն ինչ, նա չքավոր է, ես կազատեմ չքավորությունից, կդառնամ նրա պաշտպանը, կտամ հագեցում նրա փառասիրական ձգտումներին, իսկ նա ինձ կերջանկացնե յուր սիրով, և միմիայն սիրով, և մենք կապրենք բախտավոր կյանքով, յուրաքանչյուրս երախտապարտ զգալով միմյանց առաջ։ Բայց ո՞ւր է իմ երևակայածը, մի՞թե ես սխալվեցի, մի՞թե, մի՞թե նա ինձ խաբում է, օ՜ , դառն է այդ մասին մտածելն անգամ։ Երբեմն միտքս պղտորվում է, սիրտս սաստիկ բաբախում, իսկ երբեմն արյունը, կարծես, պաղում է երակներիս մեջ, և այդ բոլորը միայն մի կասկածից, որ ինձ սարսափեցնում է... (Միջին դռներից ներս է մտնում Հոռոմը)։

ՏԵՍԻԼ Է.

ՀԵՂԻՆԵ և ՀՈՌՈՄ

ՀԵՂԻՆԵ. Ա՛խ, մայրի՛կ, դու ուրախ ես երևում։

ՀՈՌՈՄ. Որովհետև ուրախալի լուր եմ բերել։

ՀԵՂԻՆԵ. Եղբորս մասի՞ն։

ՀՈՌՈՄ. Այո։ Ա՛ռ կարդա՛, (տալիս է մի հեռագիր) ես կարդալ տվել եմ ինձ համար։

ՀԵՂԻՆԵ. (Կարդալուց հետո) Պետերբուրգից է, հաջողությամբ քննությունները ավարտել է և շուտով այստեղ կլինի։

ՀՈՌՈՄ. Վերջապես կտեսնեմ սիրելի Գարեգինին։

ՀԵՂԻՆԵ. Իսկ ես որքա՜ն կարոտել եմ, որքա՜ն փափագում եմ տեսնել նրան։

ՀՈՌՈՄ. Այդ ի՞նչ է, դու այսօ՞ր էլ միայնակ ես։

ՀԵՂԻՆԵ. Սկեսուրս տանն է։

ՀՈՌՈՄ. Բայց դու ինչո՞ւ չես գնացել զբոսնելու։ Եղանակը շատ սիրուն է, փողոցները լիքն են։

ՀԵՂԻՆԵ. Չեմ ուզում դուրս գալ ։

ՀՈՌՈՄ. Ինչո՞ւ։

ՀԵՂԻՆԵ. Ով մայր է ու տանտիրուհի, ստիպված է տանը մնալ։

ՀՈՌՈՄ. Երեխայիդ համար դայակ ունես, իսկ գործերիդ համար ծառաներ և աղախին, թո՛ղ նրանք կատարեն իրենց պարտքը։ Ոչ, որդի՛, այդ դատարկ պատճառ է, դու աշխարհից փախչում ես։ Ես քեզ տվի սրանց, որ կյանք վայելես, իսկ դու միշտ միայնակ ես և տխուր։ Չգիտեմ ինչ է նշանակում այդ։

ԱՆՅՈՒՏԱ. (Ներս է մանում աջ դռներից) Իշխանուհի Մարիա Իսաևնան ձեզ խնդրում է յուր սենյակը։ (Գնում է միջին դռներով)։

ՀԵՂԻՆԵ. Ա՛խ, մոռացա, մայրի՛կ, գնա, նա վաղուց է սպասում քեզ։

ՀՈՌՈՄ. Ի՞նչ գործ ունեմ նրա հետ, ես իմ աղջկա մոտ եմ եկել։

ՀԵՂԻՆԵ. Գնա՛, մայրի՛կ։ նրա բնավորությունը գիտես, կարող է նեղանալ։

ՀՈՌՈՄ. Այո, միշտ ես պետք է հնազանդվեմ նրա կամքին; Գնում եմ, միայն թև երեսիդ չխոսեն։ (Գնում է աջ դռներով)։

ՀԵՂԻՆԵ. (Միայնակ) Եղբայրս գալիս է, որքա՜ն ուրախ եմ։ Նա միշտ եղել է իմ խորհրդատուն և պաշտպանը։ Այժմ, կյանքի դժվար հանգամանքներում, նա միայն կարող է ինձ օգնել։ (Անյուտան միջին դռներից գալիս է)։

ԱՆՅՈՒՏԱ. Պարոն Սուլիկյանը հարցնում է կարելի՞ է ներս գալ։

ՀԵՂԻՆԵ. (Մեկուսի) Դարձյալ նա, ինչու այդպես հաճախ է այցելում։ (Անյուտային) հրավիրիր ներս։ (Անյուտան դնում է) Նա Միքայելի մտերիմ ընկերն է, որին նա շատ է զովում։ Սկեսուրս իր աղջկա համար հույս ունի նրա վրա։ Իսկ նա Օլգային չի հավանում, այդ երևում է։ Այսպես, թե այնպես պարտավոր եմ նրան ընդունել ամեն ժամանակ։ (Ներս է մտնում Սալիկյանը)։

ՏԵՍԻԼ Ը.

ՀԵՂԻՆԵ ԵՎ ՍՈՒԼԻԿՅԱՆԸ

ՍՈՒԼԻԿՅԱՆ. Ներեցեք համարձակությանս, գուցե անժամանակ է:

ՀԵՂԻՆԵ. Ոչ. նստեցեք, խնդրեմ:

ՍՈՒԼԻԿՅԱՆ. Հուսով եմ, որ ամենքդ առողջ եք, մանավանդ նորագույն սերնդի ներկայացուցիչը:

ՀԵՂԻՆԵ. Երեխայիս մասի՞ն եք հարցնում:

ՍՈՒԼԻԿՅԱՆ. Այո:

ՀԵՂԻՆԵ. Լավ է: Երեկ դուք նրա համար խաղալիք էիք ուղարկել, շնորհակալ եմ:

ՍՈՒԼԻԿՅԱՆ. Կարելի՞ է արդյոք տեսնել նրան:

ՀԵՂԻՆԵ. Տանը չէ. դայակը տարել է զբոսեցնելու:

ՍՈՒԼԻԿՅԱՆ. Ազատ օդ վայելելո՞ւ, այո, այդ օգտավետ է: Միայն դուք, իշխանուհի, ձեզ զուրկ եք պահում օդից և տնային փակ կյանքը գերադասում եք հասարակական զբոսանքներից: Նայեցեք, ձեր դեմքի վրա արդեն երևում է այդ փակ կյանքի դրոշմը, դա կարող է վնասել ձեր առողջությանը:

ՀԵՂԻՆԵ. Շնորհակալ եմ ձեր հոգացողության համար: Բայց դուք գիտեք, որ ես տնից դուրս եմ գալիս մեծ մասամբ Միքայելի հետ, իսկ նա զբաղված է, ես չեմ ուզում նրան խանգարել:

ՍՈՒԼԻԿՅԱՆ. Զբաղված է... այո ... շատ է զբաղված... (մեկուսի) Խե՜ղճ և միամիտ կին....

ՀԵՂԻՆԵ. (Մեկուսի) Ինչո՞ւ այսօր տխուր է այս մարդը:

ՍՈՒԼԻԿՅԱՆ. Բայց ես դարձյալ պետք է մի փոքր հանդիմանեմ Միքայելին: Նա որքան ևս շատ գործ ունենա, ընտանիքի մասին հոգալը նրա առաջին պարտքը պետք է լինի, մանավանդ ձեր մասին, որ այդքան սիրում եք նրան, այնպես չէ՞, իշխանուհի՜:

ՀԵՂԻՆԵ. Սիրել: օհ՜օ, ես չեմ թաքցնում, այո, սիրում եմ նրան, թող այդ ամենքին հայտնի լինի: Իսկ նա՞, ոչ, մի՜ մեղադրեք, նա, նա հոգում է իմ մասին, որքան կարող է: Ա՜խ, որքան ինձ ուրախացնում է, պարո՞ն Սուլիկյան, ձեր այդ տեսակ գաղափարը ամուսնական կյանքի մասին: Բայց ցավում եմ, որ այդ գաղափարի տեր մի անձն տակավին ամուրի է:

ՍՈՒԼԻԿՅԱՆ. Որովհետև նա վախենում է դժբախտ լինելուց կամ դժբախտացնելուց:

ՀԵՂԻՆԵ. Ես ձեր միտքը չհասկացա, պարո՞ն Սուլիկյան:

ՍՈՒԼԻԿՅԱՆ. Շատ պարզ է: Ամուսնանում են մեծ մասամբ այն մարդիկ, որոնք ամուսնական կյանքի մասին շատ թեթև գաղափար ունեն: Ներեցեք համարձակությանս, իշխանուհի, ես կամենում եմ ձեզ հետ պարզախոս լինել: Իսկ այն մարդիկ, որոնք ամուսնությունը համարում են կյանքի ամենածանր մի պարտք, միշտ տատանվում են, միշտ մտածում և հաճախ մեռնում, առանց իրագործելու իրենց սրտի գուցե ամենաջերմ փափագը:

ՀԵՂԻՆԵ. Ձեր ասածը ճշմարիտ է, այո . բայց ոչ, դուք սխալվում եք: Ինձ թվում է, որ նույնիսկ ամենամտածող ու տատանվող մարդը շատ անգամ անում է այդ ծանր քայլը հանկարծակի և անսպասելի կերպով:

ՍՈՒԼԻԿՅԱՆ. Այո, երբ հանդիպում է մեկին, որ մի հայացքով վերջ է տալիս նրա երկչոտ մտքին ու տատանմանը:

ՀԵՂԻՆԵ. Այսինքն երբ սիրահարվո՞ւմ է:

ՍՈՒԼԻԿՅԱՆ. Եթե կամենաք, այո:

ՀԵՂԻՆԵ. Իսկ դուք մի՞թե այդպիսի մեկին չեք պատահել կամ հույս չունե՞ք պատահելու: Դուք դեռ երիտասարդ եք:

ՍՈՒԼԻԿՅԱՆ. Ոչ, չեմ պատահել... (մեկուսի) Պատահեցի, բայց շատ ուշ է...

ՀԵՂԻՆԵ. (Մեկուսի) Նա հառաչանքը թաքցրեց: (Բարձր) Մենք հափշտակվեցինք խոսակցությամբ, արդյոք չէի՞ք կամենա տեսնել Իշխանուհի Մարիա Իսաևնային: Նա տանն է:

ՍՈՒԼԻԿՅԱՆ. Մեծ ուրախությամբ, բայց...

ՀԵՂԻՆԵ.. Դուք շտապո՞ւմ եք, ժամանակ չունե՞ք: Ես իսկույն կկանչեմ: (Բարձրանում է տեղից) Այո, այդ մարդու կողմից ես մի բան զղում եմ... (Գնում է):

ՍՈՒԼԻԿՅԱՆ. (Միայնակ) Երբեք նա չի կամենում ինձ հետ առանձին մնալ: Նա սիրում է իր ամուսնուն անպայման սիրով, իսկ ամուսինը — երբեք: Օ՜օ, Միքայել, որքան ապերախտ ես դու այս կնոջ վերաբերմամբ և չգիտես, թե ինչ ադամանդ է զարդարում քո դատարկ կյանքը: Բայց այդ ի՞նչ է պատահում ինձ: Նա օրից օր գրավում է ինձ: Ո՞ւր էի գնում, ո՞ւր եկա և միշտ պիտի մղվեմ դեպի այս տուն մի զգացմունքով, որ... օ՜օ, չպիտի մտածել, երբեք... (Ներս է մտնում Մարիա Իսաևնան):

ՏԵՍԻԼ Թ.

ՍՈՒԼԻԿՅԱՆ և ՄԱՐԻԱՄ

ՄԱՐԻԱՄ. Դուք այստեղ, և ես չգիտեի (Բարևում են):

ՍՈՒԼԻԿՅԱՆ. Եկա մի քանի րոպեով և իսկույն պիտի գնամ:

ՄԱՐԻԱՄ. Դուք միշտ գալիս եք գնալու համար (մեկուսի) և դժբախտաբար այն ժամանակ, երբ Օլգան այստեղ չէ: (Բարձր) Ներեցեք այսօր միասին պետք է ճաշենք, հետո թուղթ խաղանք, ես շատ եմ հավանում ձեր խաղը:

ՍՈՒԼԻԿՅԱՆ. (Մեկուսի) Հենց այդ բանի համար չեմ կարող մնալ: (Բարձր) Իշխանուհի՛, ներեցեք, այսօրվա համար ուրիշին եմ խոսք տվել:

ՄԱՐԻԱՄ. Ուրեմն դուք չե՞ք սպասի Օլգային: (Մեկուսի) Երա՜նի թե շուտ վերադառնար:

ՍՈՒԼԻԿՅԱՆ. Ահավասիկ, կարծեմ նա գալիս է:

ՏԵՍԻԼ Ժ.

ՆՐԱՆՔ և ՕԼԳԱ

ՕԼԳԱ. (Միջին դռներից մանելով) Ձանձրացրեց ինձ այդ նվագահանդեսը: Բարև ձեզ, պարո՛ն Սուլիկյան: (Սուլիկյանը բարևում է սառն քաղաքավարությամբ) Մամա, նորություն. Նինա Մարդուլյանը ամուսնանում է, վերջապես:

ՄԱՐԻԱՄ. Ո՞ւմ հետ:

ՕԼԳԱ. Ինժեներ Մեհրաբյանի:

ՄԱՐԻԱՄ. Ա՛խ (հառաչում է):

ՕԼԳԱ. Ես հրավիրվեցի հարսընկեր: Դուք ճանաչո՞ւմ եք փեսացուին, պարո՛ն Սուլիկյան:

ՍՈՒԼԻԿՅԱՆ. Այո, պատվական երիտասարդ է և խելոք:

ՕԼԳԱ. Ուրեմն ափսոսում եմ նրան... Նինա Մարդուլյանը, Է՛հ, թողնենք: Հույս ունեմ, որ այսօր դուք մեզ մոտ եք ճաշում:

ՄԱՐԻԱՄ. Նա ինձ մերժեց, դո՛ւ խնդրիր, Օլգա՛, քեզ չի մերժի:

ՕԼԳԱ. Խնդրում եմ: Մերժո՞ւմ եք:

ՍՈՒԼԻԿՅԱՆ. Ստիպված եմ:

ՕԼԳԱ. Ես էլ չեմ ստիպի: Անկասկած, հրավիրված եք մի ավելի ուրախ տեղ:

ՍՈՒԼԻԿՅԱՆ. Հրավիրված եմ, այո, բայց ավելի ուրախ տեղ է, թե ոչ չգիտեմ: Միայն ցավում եմ, որ ձեր առաջարկությունը չեմ կարող ընդունել: Ցտեսություն, մի ուրիշ անգամ: (Օլգան իրեն վիրավորված ձևացնելով, ձեռը մեկնում է: Սուլիկյանը բռնի ժպտալով, սեղմում է և գնում միջին դռներով):

ՏԵՍԻԼ ԺԱ.

ՆՐԱՆՔ, առանց ՍՈՒԼԻԿՅԱՆԻ

ՄԱՐԻԱՄ. Օլգա՛, այդպես չի կարելի վարվել նրա հետ:

ՕԼԳԱ. Ինչպե՞ս կիրամայեք, որ վարվեմ:

ՄԱՐԻԱՄ. Մեղմ, սիրով:

ՕԼԳԱ. Ինչո՞ւ, որ նա ինձ ավելի՞ արհամարհի:

ՄԱՐԻԱՄ, Նա քեզ չի արհամարհում: Միայն պետք է զգույշ վարվել:

ՕԼԳԱ. Բավական է որքան զգույշ եղա: Տասը տարի է միմյանց ճանաչում ենք, մի անգամ ինձ մի համակրություն չի ցույց տվել, մի անգամ մի կոմպլիման չի արել: Ա՞յժմ էլ զգույշ վարվեմ: Ոչ, մամա՛, հույսդ կտրիր նրանից, նա ինձ վրա ուշադրություն չի դարձնում: Նա շատ է գոռոզացել: Մի քանի անհայտ օրիորդներ շրջապատել են. կարծում է, որ Թիֆլիսում առաջին փեսացուն է: Ոչ, ես նրան ատում եմ, ատում, իմացա՞ր:

ՄԱՐԻԱՄ. Օլգա, այդ ի՞նչ է նշանակում, դու այսօր բոլորովին փոխվել ես:

ՕԼԳԱ. Փոխվել եմ, այո, և ինչպե՞ս սառնարյուն մնամ: Ամենի բախտը բացվեց, ամենը հասան իրանց նպատակին: Մեղավորը հայրս է, դու ես, ինչո՞ւ ես ել ուրիշների նման բանկում հազարներ չունեմ, որ իմ հետևից վազեն: Ի՞նչ հարկավոր է ինձ ձեր դատարկ

իշխանական ծագումը, քանի որ եթե մի Սուլիկյանի հետ ամուսնանամ, իշխանական տիտղոսս էլ կորցնելու եմ: Ավելի լավ չէ՞ր լինի եղբորս կնոջ նման մի չնչին մարդու աղջիկ և փողով իշխանուհի դառնայի: Դու կարծում ես, որ այդ Սուլիկյանը ինձ համա՞ր է այս տունը գալիս:

ՄԱՐԻԱՄ. Հապա՞:

ՕԼԳԱ. Թույլ տուր ինձ ուրիշ բան կարծել: Այո, ես հիմար. չեմ, ես զգում եմ:

ՄԱՐԻԱՄ. Օլգա՛, դու ինձ բոլորով զարմացնում ես:

ՕԼԳԱ. Օ՜օ դեռ շատ կզարմանաս, երբ կիմանաս, թե ինչ օձ է բնակվում այս տանը: Ատում եմ, ատում եմ քո հարսին (Շտապով գնում է դեպի աջ):

ՄԱՐԻԱՄ. Ոչինչ չեմ հասկանում: Ի՞նչ գործ ունի այստեղ հարսս... Մեղա՛ քեզ, աստված, ինչ էի ուզում մտածել: Միքայելը եկա՞վ, թե՞ չէ: (Գնում է դեպի ձախ):

ՏԵՍԻԼ ԺԲ.

ՀԵՂԻՆԵ և ՀՈՌՈՄ (դուրս են գալիս աջ դռնից)

ՀՈՌՈՄ. Այդ ի՞նչ բան է, ինչո՞ւ Օլգան քեզ այնպես մտիկ արավ և իմ բարևիս չպատասխանեց:

ՀԵՂԻՆԵ. Ո՞վ գիտե:

ՀՈՌՈՄ. Ես գիտեմ: Վաղուց ուզում էի ասել, բայց քեղանից վախենում էի: Այժմ Է՛լ չեմ կարող թաքցնել: Հեղինե, այս տանը դու բախտավոր չես:

ՀԵՂԻՆԵ. Ինչի՞ց գիտես, ո՛չ, դու սխալվում ես: Ես շատ բախտավոր եմ: Ես սիրում եմ Միքայելին, նա էլ... ինձ է սիրում, ուրիշ բան հարկավոր չէ ինձ:

ՀՈՌՈՄ. Օ՜օ մոր աչքը սրատես է: Այդ քո սկեսրարը վերջին ժամանակ թե քո մասին է հազար ու մի բան ասում և թե ինձ է վիրավորում:

ՀԵՂԻՆԵ. Քե՞զ, ինչո՞ւ: (Առանձին) Ես այդ վաղուց եմ տեսնում:

ՀՈՌՈՄ. Աստված գիտե ինչու: Տերը նրա հետ, եթե միայն ինձ վիրավորեր, բայց նա քո հոր անունն էլ է հիշում: Ծաղրում է նրան, անպիտան մարդ է համարում: (Մի կողմ) Ա՜խ, ինչու աշխարհումս մի լավ անուն չթողիր: (Բարձր) Այդ բոլորը այնքան ցավալի չէ, քո կյանքն են թունավորում, ահա իմ ցավը: Ես տվի նրանց հորդ թողած հարստության կեսը, իմ բաժինն էլ ավելացրի: Նրանք այժմ քո փողերով շքեղ կառքեր են պահում, ապրում են այս պալատում, բալեր են գնում, բալ են տալիս, իսկ դու օրից օր մաշվում ես, ինչո՞ւ, ասա՛ ինչո՞ւ:

ՀԵՂԻՆԵ. Բավական է, մայրի՛կ, ես իմ վիճակից գոհ եմ, այո, շատ գոհ եմ. չէ՞ որ ես ինքս իմ ազատ կամքով ընտրեցի այս վիճակը, չէ՞ որ Միքայելին սիրեցի և այնպես ամուսնացա նրա հետ: Իսկ նա ինձ սիրում է. դու կասկածում ես ոչ, նա ինձ շատ է սիրում: Աղաչում եմ, հանգստացիր, ես երջանիկ եմ և անպատճառ կլինեմ երջանիկ, այո, մի՛ վրդովիր ծերությունդ, և, վերջապես, նրանք կլսեն, լավ բան չի: Ահա, կարծեմ, սկեսուրս գալիս է: (Ձախ դռնից ներս է մտնում Մարիամը):

ՏԵՍԻԼ ԺԳ.

ՆՐԱՆՔ և ՄԱՐԻԱՄ

ՄԱՐԻԱՄ. Խնամի՛ս, շատ լավ է, որ դեռ չեք գնացել: Ասացեք, խնդրեմ, դուք ինչո՞ւ այնպես կոշտ պատասխանեցիք, երբ ես ձեր ամուսնու անունը տվի: Շատ պետք է ուրախ լինեք, որ այդ անունը հիշվում է իշխան Բեդմուրովների տանը:

ՀՈՌՈՄ. Ուրա՞խ լինեմ, որ նրան ծաղրում են ու արհամարհո՞ւմ:

ՄԱՐԻԱՄ. Ո՞վ է մեղավոր, որ աշխարհի երեսին նա վատ անուն է թողել:

ՀՈՌՈՄ. Բայց դուք ազգական եք, դուք պետք է քիչ թե շատ հարգեք նրան:

ՄԱՐԻԱՄ. Շատ լավ գիտեմ ում պետք է հարգեմ, ում — ոչ: Չլինի թե ուզում եք իշխան Բեգմուրովի կինը, գեներալ Ալամդրովի քույրը մի կալատոզի աղջկանից քաղաքավարություն սովորի :

ՀՈՌՈՄ. Լսո՞ւմ ես, ՀԵՂԻՆԵ՛, այս անպատվությունը:

ՀԵՂԻՆԵ. (Մեկուսի) Աստված, տուր ինձ համբերություն այս նախատինքին դիմանալու: (Մարիամին) Իշխանուհի՛, բավական է, աղաչում եմ, մի՛ վրդովվեք և մեզ մի՛ վիրավորեք:

ՄԱՐԻԱՄ. Հաա՞, դուն էլ մորդ կո՞ղմն ես պահում: Զգույշ, ասում եմ քեզ: (Հոռոմին) Իսկ դուք, խնամիս, այսուհետև իմացեք, թե ում հետ եք խոսում:

ՀՈՌՈՄ. Հպարտացե՛ք, փքվեցե՛ք ձեր անունով: Ամոթ եք համարում ձեզ աղքատությունից ազատողի հետ ազգականություն անել, հա՛ա, շատ լավ. ես այսուհետև այս տունը ոտ չեմ դնի: (Շտապով դուրս է գալիս միջին դրռներով):

ՄԱՐԻԱՄ. Ահա իմ արած պատվի վարձը: Ես կատաղությունից կխելագարվեմ, ես չեմ կարող այս անպատվությունը տանել, ես քարուքանդ կանեմ քո անիծված հոր տունը... ա՛խ աստված: (Գնում է աջ դռներով):

ՀԵՂԻՆԵ. (Մեկուսի) Ահա իմ կյանքը, ահա իմ երևակայած ընտանեկան երջանկությունը: Անիծում են հորս հիշատակը, անպատվում են ծերունի մորս և վռնդում, ատում են ինձ ու ծաղրում, իսկ ես, ե՛ս համբերությամբ տանում եմ այդ բոլորը, որովհետև ստիպված եմ տանել: Մեղք, մե՛ղք այն կնոջ, որ իմ սիրտն ունի, իմ գաղափարը և իմ հոգին... Բայց ի՞նչ փույթ, թող ամեն թշվառություն տեղա գլխիս, միայն Միքայելը լինի այն, ինչ որ երևակայել եմ: Նա միայնակ կարող է ինձ երջանկացնել... (Ուզում է գնալ դեպի աջ. դեմ ու դեմ դուրս է գալիս Օլգան):

ՏԵՍԻԼ ԺԴ.

ՕԼԳԱ և ՀԵՂԻՆԵ

ՕԼԳԱ. Սպասեցեք, ես ձեզ հետ գործ ունեմ:

ՀԵՂԻՆԵ. Ասացեք:

ՕԼԳԱ. Ո՞վ վիրավորեց իմ մորը: Նա գունաթափված մտավ իր սենյակը և դռները փակեց:

ՀԵՂԻՆԵ. Նրան ոչ ոք չվիրավորեց, նա ինքն էր հուզված:

ՕԼԳԱ. Առանց պատճառի՞, այդ անկարելի է: Լսեցեք, ձեր վարմունքը այս տանը անտանելի է. դուք ձեզ պահել չգիտեք, դուք մեր տան անունը կարող եք ծաղրի ենթարկել:

ՀԵՂԻՆԵ. Օլգա՛, ես չեմ հասկանում ձեր տարօրինակ բարկության պատճառը: Ասացեք, ես ի՞նչ բան եմ գործել, որ անպատվաբեր լիներ այս տանը կամ ձեզ:

ՕԼԳԱ. Կան բաներ, որ չեն ասվում, այլ միայն զգացվում են: Դուք շատ համարձակ եք պահում ձեզ, տիկի՛ն, շա՛տ:

ՀԵՂԻՆԵ. Ճշմարիտ զարմանալի է. լսելով ձեր վրդովված հանդիմանությունը, կարող են կարծել, որ իրավ ես մի մեղք ունեմ: Այնինչ դուք հանդիմանում եք ինձ և ոչինչ չեք բացատրում:

ՕԼԳԱ. Բացատրե՛լ, այո, կբացատրեմ, բայց ոչ այժմ, որովհետև ես պետք է աշխատեմ փաստեր ձեռք բերել ձեր հանցանքի չափը որոշելու համար:

ՀԵՂԻՆԵ. Հանցանքի՞: Օրիո՛րդ, դուք կատա՞կ եք անում, թե՞ մենք երազում ենք: Ասացեք, ապա թե ոչ դուք ինձ վիրավորեցիք և չգիտեմ ինչ կպատասխանեմ ձեզ:

ՕԼԳԱ. Ես ասացի այնքան, որքան հարկավոր էր ասել: Առայժմ գոհ եղեք, որ կա մեկը, որ ոգևորված գովում է ձեզ հանդեսներում իբրև արտակարգ գեղեցկության և համակրության մի կատարելատիպի: Բայց մնացյալը հետո: Հանգիստ կացեք. այն, ինչ որ իմ սիրտն է զգում, հազիվ այս տան մեջ կարող է մի ուրիշը զգալ: Հասկանում եք: Իսկ ես, մի՛ վախենաք, առայժմ խոհեմ կպահեմ ինձ ամուսնուդ մոտ: Տե՛ր աստված, և այս կինը իմ եղբոր, այն էլեգանտ, այն արիստոկրատ և ազնիվ մարդու ամուսինն է: (Շտապով գնում է միջին դռներով):

ՏԵՍԻԼ ԺԵ.

ՀԵՂԻՆԵ, հետո ՄԻՔԱՅԵԼ

ՀԵՂԻՆԵ, Ես ապշած եմ: Չգիտեմ զայրանա՞մ, արտասվե՞մ, թե ծիծաղեմ: «Հանցա՞նք»... Նա պետք է «փաստեր ձեռք բերի», այսպես լսեցի արդյոք: «Մնացյալը հետո»... «կա մեկը, որ ինձ ոգևորված գովում է»... Ո՞վ է նա, ինչո՞ւ է գովում: Ի՞նչ էին նշանակում այդ աղջկա խոսքերը. «առայժմ խոհեմ կպահեմ ինձ ձեր ամուսնու մոտ»: Աստվա՛ծ իմ, պարզիր ինձ այդ գաղտնիքը: (Միջին դռներից ներս է մտնում Միքայելը):

ՄԻՔԱՅԵԼ. Սիրելիս, ներիր, որ այսօր առանց քեզ հետ տեսնվելու դուրս եկա տնից: Բայց այդ ի՞նչ է պատահել. դու հուզվա՞ծ ես, դողո՞ւմ ես:

ՀԵՂԻՆԵ. Պատճառներ շատ կան հուզվելու:

ՄԻՔԱՅԵԼ. Ասա, երևի դարձյալ մի չար երազ վրդովել է քո հանգստությունը:

ՀԵՂԻՆԵ. Իմ ամբողջ կյանքը բաղկացած է ձեր երազներից, որոնցից մեկը հենց այժմ կատարվեց այստեղ:

ՄԻՔԱՅԵԼ. Վերջապես, պե՞տք է ասես, թե ինչ է պատահել:

ՀԵՂԻՆԵ. Քո մայրը մի քանի րոպե առաջ իմ մորը անպատվեց և համարյա թե վռնդեց այս տնից, օ՜օ, որքան այդ դառն էր:

ՄԻՔԱՅԵԼ. Վռնդե՞ց, այդ անկարելի բան է:

ՀԵՂԻՆԵ. Սակայն իրողություն է:

ՄԻՔԱՅԵԼ. Ա՜, ես իսկույն փողոցում հանդիպեցի մորդ: Նա, առանց ինձ բարևելու, անցավ մոտովս: Ուրեմն այստեղ վե՞ճ է պատահել:

ՀԵՂԻՆԵ. Այո, և խոշոր վեճ:

ՄԻՔԱՅԵԼ. Եվ ի՞նչ պատճառով:

ՀԵՂԻՆԵ, Այն պատճառով, որ ես հանդգնել եմ քո ամուսինը դառնալ: Հանդգնել եմ կապել մի փառահեղ իշխանական ցեղի անուն մի տխուր հիշատակ ունեցող մարդու անվան հետ: Վերջապես, հանդգնել եմ քեզ անբախտացնել, խլել քո ազատությունը, կապել քո ճանապարհը դեպի մի երջանիկ կյանք, թունավորել եմ քո կյանքը, իսկ ինքս ապրում եմ այսպես հանգիստ, բախտավոր և երջանիկ:

ՄԻՔԱՅԵԼ. Երդվում եմ, ոչինչ չեմ հասկանում քո ասածից:

ՀԵՂԻՆԵ. Որովհետև ձեռնտու չէ հասկանալը, որովհետև միշտ սիրել ես իրողությունը կեղծել իմ առաջ, միշտ կատակով ու ծաղրով ես վերաբերվել դեպի այն բանը, որ իմ վշտալի սրտի արտահայտությունն է: Սակայն ինչ իրավունքով ես ուրիշ բան պահանջեմ մի մարդուց, որ երդվել է դատապարտել ինձ լուռ ու հապաղ մահվան:

ՄԻՔԱՅԵԼ. Մահվա՞ն:

ՀԵՂԻՆԵ. Այո, կամ խելագարության — երկուսից մեկը, այս տեսակ կյանք վարող մի կին ուրիշ ելք չի կարող ունենալ:

ՄԻՔԱՅԵԼ. Հեղինե՜, դարձյալ սկսեցի՞ր քո անտեղի հանդիմանությունը: Դադարի՜ր, եթե չես կամենում ինձ վրդովել:

ՀԵՂԻՆԵ. Ոչ. բավական է որքան լռեցի, այլևս իմ ուժերը նվազում են: Տանել այս տեսակ կյանք չեմ կարող: (Մեկուսի) Աստված իմ, ի՞նչ եմ ասում ես:

ՄԻՔԱՅԵԼ. Ուրե՞մն:

ՀԵՂԻՆԵ. Թող գոնե մի անգամ բացարձակ ասեմ այն, ինչ որ վաղուց պետք է ասեի, բայց ամոթը կապում էր իմ լեզուն: Թող ասեմ, որ դու... դու ինձ խաբում ես և դավաճանում:

ՄԻՔԱՅԵԼ. Կեցցե՜ս, ճշմարտությունը գտար, արի շրթունքդ համբուրեմ: Խաբել, դավաճանել, սիրելիս, չգիտես, որ այդ խոսքերի համար ես կարող եմ քեզանից փաստեր պահանջել:

ՀԵՂԻՆԵ. Իմ փաստը իմ սիրտն է առայժմ, երանի թե նա ինձ մոլորեցներ: Ա՜խ, Միքայե՜լ, եթե ինձ հուզողը միայն դեպի քեզ ունեցած սերը և նրանից առաջացած խանդը լիներ, ես այդքանին ևս չէի դիմանա: Ո՜ւր մնաց, որ դու ուզում ես անպատվել իմ անունը, ուզում ես ինձ հասարակության ծաղրի ու արհամարհանքի առարկա դարձնել, ոտնատակ անել իմ կանացի ինքնասիրությունը . ահա ինչն է սարսափելին:

ՄԻՔԱՅԵԼ. (Մեկուսի) Ոչ. այսպես շարունակել չի կարելի, պետք է սրա հետ մեղմ խոսեի (Բարձր) Է՛լիչկա, սիրելի՜ս, դու սխալվում ես իմ մասին, հավատացնում եմ, սխալվում ես: Ճշմարիտ է, երբեմն ես մոռանում եմ, որ ընտանիքի տեր եմ, հայր եմ և ամուսին, բայց այդ մոռացումը միայն գործի համար է: Ի՞նչ է, իսկապես, իմ մեղքը: Որ գիշերները ո՞ւշ եմ տուն վերադառնում կամ երբեմն չե՞մ վերադառնում: Համաձայնի՜ր, սիրելի՜ս, որ ես տղամարդ եմ և գործնական մարդ, հասարակության անդամ: Հիշիր, քանի տեսակ զբաղմունք ունեմ. մի՞թե իրավունք չունեմ մի փոքր անփույթ լինել դեպի իմ ընտանիքը: Սակայն ես քեզ սիրում եմ այնպես, ինչպես միշտ սիրել եմ:

ՀԵՂԻՆԵ. Այնպես, ինչպես միշտ, այսինքն — երբեք, ասա՛, այնպես չէ՞, ասա՛:

ՄԻՔԱՅԵԼ. Մի՛ վշտացնի ինձ, մի՛ ստիպի, վերջապես, տասնութ տարեկան պատանու նման ամեն օր ընկնել ոտներդ և սիրո երդումներ անել: Գո՛հ եղիր իմ սրտի զգացմունքով և ոչ խոսքերով: Ասա՛, երբևէ վիրավորե՞լ եմ քեզ, երբևէ մի կոշտ խոսք ասե՞լ եմ քեզ:

ՀԵՂԻՆԵ. Վարվիր ինձ հետ ինչպես կամենում ես, վիճիր հետս, նախատիր ամեն մի սխալիս համար, հանդիմանիր ամեն մի քայլիս համար, ուշադիր եղիր դեպի իմ ամենաչնչին վարմունքը, այդ ինձ համար ավելի լավ է և շատ, շատ հաճելի: Բայց արտաքին քաղցրության ներքո մի՛ արհամարհիր ինձ, առերես քաղաքավարության տակ մի՛ թաքցնի քո սրտի տգեղ զգացմունքը դեպի ինձ — այդ վատ է, վատ ու շատ վատ:

ՄԻՔԱՅԵԼ. Բարեսիրտ, խելացի և գեղեցիկ Էլիչկա, ես կկամենայի, որ դու միայն մի բանում համոզվես, այն է, որ ոչ ոք, ոչ ոք չի կարող խանգարել մեր երջանկությունը, որ չկա մեր մեջ մի երկրորդ անձն: Այո, կնոջ սիրտը ընդունակ է ամեն տեսակ անմիտ կասկածների: Բայց խոհեմ կինը չպետք է պղտորի իր արյունը այդ կասկածներով: Ուրեմն, իմ խոհեմ Էլիչկա, մոտեցի՛ր ինձ, ե՛կ հաշտվենք: Իսկ եթե իմ ասածը բավական չէ, ազնիվ խոսք կտամ քեզ այսուհետև առանց քո հրամանի մի քայլ անգամ չանե՛լ:

ՀԵՂԻՆԵ. Երբե՛ք, տղամարդը յուր կամքի տերը պետք է լինի: Ես քեզ վրա բռնություն գործ դնելու ոչ ուժ ունեմ և ոչ ցանկություն:

ՄԻՔԱՅԵԼ. Խելացի կնոջ խելացի պատասխան: Ուրեմն տուր ինձ ձեռդ, նայի՛ր աչքերիս և համոզվիր, որ ես ունեմ մի ուժ, որ միշտ կարող է ինձ վրա բռնանալ: Դա իմ խիղճն է: Հաշտվենք:

ՀԵՂԻՆԵ. Թո՛ղ ինձ հանգիստ, այս դրության մեջ ես չեմ կարող քեզ հետ հաշտվել:

ՄԻՔԱՅԵԼ. Եվ ոչ ներե՞լ:

ՀԵՂԻՆԵ. Ներե՛լ, երբ մայրս անպատվությամբ վռնդվա՞ծ է այս տնից:

ՄԻՔԱՅԵԼ, Թող այս սխալը ուղղելը իմ պարտքս լինի: Ես իսկույն կգնամ նրա մոտ, մորս կողմից ներում կխնդրեմ, անպատճառ կբերեմ այստեղ ճաշի և երկու պառավներին կստիպեմ համբուրվել: Առայժմ, սիրելի՛ս, թույլ տուր ինձ ասել, թե ինչու վերջին օրերը ես շատ անհանգիստ եմ: Ավգերյան եղբայրների բանկային գրասենյակին տրված մուրհակիս ժամանակը վաղը լրանում է: Անպիտանները չեն համաձայնում նոր մուրհակ վերցնել: Ստիպված եմ վաղը հատուցանել, գումարը մեծ է, իսկ ես փող չունեմ, ահա իմ ընտանեկան անհոգության պատճառներից մեկը:

ՀԵՂԻՆԵ. (Մեկուսի) Երանի միայն այդ լիներ: (Բարձր) Ուրեմն քեզ փո՞ղ է հարկավոր:

ՄԻՔԱՅԵԼ. Այո:

ՀԵՂԻՆԵ. Որքա՞ն

ՄԻՔԱՅԵԼ. Հավատացիր, ամաչում եմ ասել:

ՀԵՂԻՆԵ. Դու գիտես, որ իմ ունեցածը քեզ է պատկանում, վերցրո՛ւ, որքան հարկավոր է, բայց մի մոռանար, որ իմ օժիտը սպառվելու վրա է, մենք կարող ենք նեղ օրերի հանդիպել:

ՄԻՔԱՅԵԼ. Այդ մասին հոգալը իմ պարտքս է: Ինձ հարկավոր է ութ հազար ռուբլի:

ՀԵՂԻՆԵ. Երկու ամսվա մեջ երրորդ անգամն թ, որ այդչափ գումարներ ես վերցնում: Փույթ չէ, վաղը կստանաս իմ բանկային արժեթղթերից:

ՄԻՔԱՅԵԼ. Շնորհակալ եմ, սիրելիս, բայց եթե այժմ տայիր, կարող էի Ավգերյաններին նախազգուշացնել վաղվա համար:

ՀԵՂԻՆԵ. Սպասի՛ր: (Մեկուսի) Նա ինձ չի հավատում (Գնում է աջ դռներով):

ՄԻՔԱՅԵԼ. (Մենակ) Գնա՛ց: Ողորմելի ու խղճալի կին, որքա՜ն սիրում է ինձ և դեռ հավատում: Իսկ ե՞ս, մեղավո՞ր եմ միթե, որ երբեք չեմ սիրել և չեմ սիրում, սակայն միշտ ստիպված եմ, կեղծել և կեղծել, քանի որ կա մի ուրիշը, քանի որ իմ գործերը վատ են գնում և օրից օր թաղվում եմ պարտքերի մեջ: (Հեղինեն վերադառնում է բաժնեթղթերը ձեռքին):

ՀԵՂԻՆԵ. Ահա՛ ուզածդ. գնա՛ ազատի՛ր անունդ անպատվությունից և աշխատիր թշնամիների առաջ միշտ քո անունը բարձր պահել:

ՄԻՔԱՅԵԼ. (Բռնում է ձեռը) Բայց նախ թող համբուրեմ իմ ազատարար ձեռը (ուզում է համբուրել, Հեղինեն թույլ չի տալիս):

ՀԵՂԻՆԵ. Փողի համա՞ր, երբե՛ք:

ՄԻՔԱՅԵԼ. Ուրեմն թույլ տուր սիրո համար համբուրել (համբուրում է): Շտապում եմ քո մոր մոտ և իսկույն կվերադառնամ: (Գնում է միջին դռներով):

ՀԵՂԻՆԵ. (Նայելով հետևից) Գնա, գնա՛ իմ սրտի կասկածները բնավ չես կարող փարատել: Աստված իմ: ինչ կլինի իմ վիճակը, եթե իրավ ես միանգամայն զրկվեմ նրա սիրուց, ես, որ իմ կյանքի ամբողջ երջանկությունը միայն նրա մեջ եմ տեսնում: Բայց այն ի՞նչ ասաց Օլգան, ի՞նչն է իմ «հանցանքը»: Աստված իմ, այդ աղջկա խոսքերը մի անորոշ սարսուռ ազդեցին ինձ վրա:

Վարագույր

2-ՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

(Այրի Հոռոմի բնակարանը: Մի սենյակ կեսեվրոպական և կեսասիական ոճով կահավորված: Մի կողմում դիվան, բաղկաթոռներ, մյուս կողմում թախտ: Ձախ կողմում և մեջտեղը դռներ, աջ կողմում՝ պատուհաններ: Կարասին կիսամաշ է):

ՏԵՍԻԼ Ա.

ՀՈՌՈՄ (միայնակ թախտի վրա նստած, տարված է թղթերով):

ՀՈՌՈՄ. Մեկ, երկու, երեք. չորսանոց, վեցանոց, իննանոց: Կարմիրը ուրախություն, սևը տրտմություն, վեցանոցը ճանապարհ է ցույց տալիս, էլ ի՞նչ ես դուրս գալիս, Գարեգինը եկավ, պրծավ: Այս էլ սև, Էլի սև, ուրեմն Էլի տրտմություն, սև, սև, սև: Է՛հ, (բարկացած շպրտում է թղթերը) գնացե՛ք, կորեք, դուք մի ուրախ բան չեք ասում աղջկաս համար: ՉԷ, Է՛լ սրտիս դառնությունը պահել չեմ կարող, պետք է Գարեգինին հայտնեմ... Օհ՛, նա շատ կցավի և, ով գիտե, ի՞նչ կանի: Տե՛ր աստված, տե՛ր աստված, մի աղջիկ ունենալ և այն էլ այդպես անբա՛խտ: (Ներս է մտնում միջին դռներով Զարբաբյանը):

ՏԵՍԻԼ Բ.

ՀՈՌՈՄ և ԶԱՐԲԱԲՅԱՆ

ԶԱՐԲԱԲՅԱՆ. (Մեկուսի) Պառավը մենակ է, հույս կա բանս հաջողվի: (Բարձր) Բարի լույս քույրիկիս: Էէ՜, Ինչ կա, ինչ չկա: Լա՞վ եք: Քանի օր է չէի տեսել. սիրտս ուզեց տեսնել: Նոր բաներ կա՞ն:

ՀՈՌՈՄ. Նստեցեք: Նոր բաներ ձեզանից պետք է լսել:

ԶԱՐԲԱԲՅԱՆ. Իհարկե, դուք աշխարհից հեռու եք: Իսկ ես, գիտեք, քույրիկ, իմ անունս ման եկող լրագիր են դրել կլուբում: Այո, ամենից առաջ մեր քաղաքի լուրերը ես եմ լսում: Հենց հիմա փողոցում հանդիպեցի նորին պայծառափայլություն Միխայել Եգորովիչ Բեգմուրովին:

ՀՈՌՈՄ. Փեսայի՞ս, դուք նրա հետ ծանո՞թ եք:

ԶԱՐԲԱԲՅԱՆ. Ես, ոչ. բայց ինքը ինձ շատ լավ է ճանաչում: Երևակայեցեք, այն օրից դես ինձ վրա ծուռ աչքով է նայում:

ՀՈՌՈՄ. Ո՞ր օրից:

ԶԱՐԲԱԲՅԱՆ. Չե՞ք լսել, ինչպես երևում է, Գարեգինը չգիտե կամ չի պատմել ձեզ: Ուրեմն լսեցեք ես պատմեմ: Մի խումբ պատվավոր, շատ պատվավոր մարդիկ մի տեղ հավաքված ձեր մասին էին խոսում:

ՀՈՌՈՄ. Մե՞ր մասին:

ԶԱՐԲԱԲՅԱՆ. Այո, այսինքն ձեր և Բեգմուրյանների մասին: Մի քանիսը սկսեցին ծաղրել, որ դուք իբրև թե ուզեցել եք անպատճառ մի իշխանի զոքանչ լինել, չգիտեմ փողով ձեր աղջկա համար իշխանություն եք ձեռք բերել: Ես լսում էի, հանկարծ համբերությանս տոպրակը դատարկվեց, Էլ չկարողացա ինձ պահել: Գլուխս բարձրացրի, կուրծքս դուրս ցցեցի (ոտքի է կանգնում), մի ոտս առաջ դրի ու ասացի. պատվելի՛ պարոններ, դուք մեծ մարդ եք, բայց ես ձեզանից չեմ վախենում, ես ոչ ոքից չեմ վախենում, ոչ հարուստից, ոչ իշխանից:

ՀՈՌՈՄ. (Մեկուսի) Է՛լի սկսեց:

ԶԱՐԲԱԲՅԱՆ. Ոչ տերտերից, ոչ վարդապետից: Ես խոսքը մարդու ճակատին ասող մարդ եմ, եթե իմ քրոջ աղջիկը իշխանուհի է դարձել, Բեգմուրովն էլ քաղցած զկրտալուց է ազատվել: Հա՜պա. շատ ժամանակ չկա, որ նորին պայծառափայլության գրպանը իմ գրպանիս պես կարելի էր վարձով տալ, իսկ այժմ, պատվելի պարոններ, նա սեփական կառքով այնպես է ման գալիս, որ գրաֆ Շապշապովը նրա մոտ փա՜ս...

ՀՈՌՈՄ. (Մեկուսի) Շապշապովի՞ն որտեղից գտավ:

ԶԱՐԲԱԲՅԱՆ. Այսպես որ ասացի, այդ պատվելի պարոնները զարմացած նայեցին երեսիս: Կարծեմ, շատ էի բարկացել, դեմքս սարսափելի պետք է լիներ, որովհետև, աստված ազատի, երբ Մարտին Մարտինիչ Զարբաբովը բարկանում է: Այժմ, իհարկե, գնացել են ու նրան պատմել իմ ասածը, քիթը վեր է քաշել:

ՀՈՌՈՄ. Բայց նա ձեզ չի ճանաչում, ինչպե՞ս կարող է նեղանալ:

ԶԱՐԲԱԲՅԱՆ. Զարբաբովին Թիֆլիսում չճանաչող մարդ չկա: Նա շատ լավ գիտե, որ ես ձեզ համար եղբոր տեղ եմ բռնում և պատրաստ եմ Հեղինեի համար գլուխս տալ: Չէ, ես պետք է լռե՜մ, որ նա իմ քրոջ աղջկա փողերը փչացնի թղթախաղում, սիրուհիների վրա և նրա ծնողներին, իմ հարազատ ազգականներին ծաղրի՞: Ատանդե, Զարբաբովը այն մարդկանցից չէ:

ՀՈՌՈՄ. Թղթախաղում ու սիրուհիների վրա՞ ասացիք:

ԶԱՐԲԱԲՅԱՆ. Հապա, խե՜ղճ կնիկ, կլուբում, բուլվարում, փողոցներում, տներում, որտեղ ասեք նրա մասին են խոսում:

ՀՈՌՈՄ. Եվ աղջկանս բամբասո՞ւմ:

ԶԱՐԲԱԲՅԱՆ. Բամբասում են, այո, ես խոսքը ճակատին կասեմ:

ՀՈՌՈՄ. Լավ, բավական է, հասկացա:

ԶԱՐԲԱԲՅԱՆ. Էէ՜, ինձանից նեղացա՞ք:

ՀՈՌՈՄ. Ընդհակառակը, շնորհակալ եմ, որ մեզ պաշտպանում եք:

ԶԱՐԲԱԲՅԱՆ. Օհ՜, գլուխս կտամ ազգականիս համար: Է՜հ, շատ նստեցի, մի տեղ ինձ համար պաշտոն է բացվում, պետք է գնամ տեղեկանամ: Ցտեսություն: Հա, միտս եկավ, քույրի՜կ, մոտդ փող կա:

ՀՈՌՈՄ. Ինչքա՞ն:

ԶԱՐԲԱԲՅԱՆ. Քսան, երեսուն կամ քառասուն մանեթ:

ՀՈՌՈՄ. Սպասեցեք տեսնեմ: (Մոտենում է սեղանին և արկղիկը բանալով մի կապ թղթադրամ է հանում):

ԶԱՐԲԱԲՅԱՆ. (Մեկուսի) Շատ ունի, ափսո՜ս ավելի չուզեցի:

ՀՈՌՈՄ. Առեք, բայց այսուհետև կդիմեք Գարեգինին, նրան է պատկանում իր հոր կարողությունը:

ԶԱՐԲԱԲՅԱՆ. Եթե նեղանում եք, չեմ վերցնի, համեցե՛ք, կգնամ ուրիշից կվերցնեմ:

ՀՈՌՈՄ. Ոչ. այդ մտքով չասացի:

ԶԱՐԲԱԲՅԱՆ. Արևս վկա, վերցրեք, ես խոսքը մարդու ճակատին ասող եմ: Դուք կարծում եք՝ ողորմություն եմ խնդրում: Ահա, (հանում է ծոցից մի փոքրիկ մատյան) բոլոր մեկ-մեկ գրված է, տեսեք, ձախ երեսում պարտքերս են, իսկ աջ երեսում՝ ստանալիքս, այս մեկը բավական մաքուր է, ես մաքրություն սիրող մարդ եմ: Հետ վերցրեք, եթե ձեզ հարկավոր է:

ՀՈՌՈՄ. Լավ, դրեք գրպանդ:

ԶԱՐԲԱԲՅԱՆ. (Փողը դնելով գրպանը) Աստված մեր բարեկամությունը հաստատ պահի: (Գնում է միջին դռներով):

ՀՈՌՈՄ. (Մեկուսի) Հեղինեի դրությունը աչքիցս գցել է տուն, տեղ, հարստություն: Երբ ամուսինս աղքատ էր, ոչ ոք չէր ուզում մեզ ճանաչել, հարստացավ թե չէ, մորս եղբոր կնոջ ազգականը եկավ հարազատ եղբայրս դարձավ: (Գալիս է Գարեգինը) Դու ես, որդի՜, ինչո՞ւ այդպես տխուր ես:

ՏԵՍԻԼ Գ.

ՀՈՌՈՄ և ԳԱՐԵԳԻՆ

ԳԱՐԵԳԻՆ. Որովհետև քո վարմունքը ինձ չափից դուրս վրդովել է: Մի շաբաթ է այստեղ եմ, և դու ինձանից թաքցնո՞ւմ ես իմ քրոջ դրությունը:

ՀՈՌՈՄ. (Մեկուսի) Երևի, մի բան լսել է, (Բարձր) Թաքցնելու ոչինչ չկա, քույրդ ապրում է, ինչպես միշտ ապրել է:

ԳԱՐԵԳԻՆ. Այսինքն դժբախտ: Իսկ դու հավատացնում էիր, որ նա երջանիկ է: Ես շատ լավ գիտեի, որ դու խաբում ես ինձ: Արդեն Հեղինեի դեմքից ու խուլ հառաչանքներից գուշակում էի, որ մի բան կա: Եվ ահա այդ բանը, որ քեզանից կամ իրանից պիտի լսեի, այսօր լսում եմ ուրիշներից:

ՀՈՌՈՄ. Սուտ են ասում ուրիշները: Մի՛ հավատա նրանց ասածներին, ամենքը նախանձից են խոսում:

ԳԱՐԵԳԻՆ. Այո, և իմ ընկերները: Այսպես թե այնպես, ես պետք է բոլորը իմանամ: Դու չասացիր, Հեղինեն ինքը կպատմի, նա ինձանից գաղտնիք չի պահի, որովհետև գիտե որքա՜ն եմ սիրում նրան: Իսկ եթե նա իմ լսածը հաստատի, այն ժամանակ պետք է նրա ամուսնուց բացատրություն պահանջել:

ՀՈՌՈՄ. Նա կարող է քեզ ասել, որ չխառնվես իր ընտանեկան գործերին, (մեկուսի) ինչպես ինձ ասաց:

ԳԱՐԵԳԻՆ. Թող ասի, ինչ ուզում է, ես իմ քրոջը անպաշտպան թողնել չեմ կարող:

ՀՈՌՈՄ. Ուրեմն դու ուզում ես խռովություն գցել մեր մեջ; Գարեգի՛ն, դու տաքարյուն ես, վախենում եմ:

ԳԱՐԵԳԻՆ, Անհո՜գ կաց. դեպքը պահանջելիս ընդունակ եմ ինձ զսպել: Իսկույն գնում եմ Հեղինեի մոտ:

ՀՈՌՈՄ. Կա՛ց, կառքի ձայն լսեցի, տեսնենք ո՞վ է: (Մոտենում է պատուհանին և նայում դեպի փողոց) Հեղինեն է, էլի ինչ՞ է պատահել, աստվա՜ծ: Նա գունատված է, դողդողալով է ցած իջնում կառքից: (Շտապում է դեպի միջին դռները):

ԳԱՐԵԳԻՆ. (Մեկուսի) Թե նա պետք է տարաբախտ լիներ այն մարդու հետ, ես այդ վաղուց գիտեի և գուշակում էի ամուսնությունից առաջ: (Ներս է մտնում Հեղինեն տխուր, շնչասպառ: Հոռոմը վախեցած նայում է նրա երեսին: Հեղինեն, տեսնելով եղբորը, ճիգ է անում ժպտալու:

ՏԵՍԻԼ Դ.

ՆՐԱՆՔ և ՀԵՂԻՆԵ

ՀՈՌՈՄ. Աղջիկս, ի՞նչ է պատահել, որ այդպես...

ՀԵՂԻՆԵ. Ոչինչ, եկել եմ ձեզ այցելելու:

ԳԱՐԵԳԻՆ. Բայց դու գունատ ես, հազիվ կարողանում ես ոտքի վրա կանգնել: Ասա՛: ի՞նչ է պատահել: Դու լռո՞ւմ ես, չե՞ս ուզում իմ մոտ բաց անել քո վիշտը: Բավական է, Հեղինե՛, որքան թաքցրիր, ես այժմ գիտեմ քո դրությունը, իսկույն ուզում էի քեզ մոտ գալ: Ա՜հ, դու հառաչա՞նքդ անգամ զսպում ես:

ՀԵՂԻՆԵ. (Խեղդված ձայնով) Գարեգին ես դժբախտ եմ: (Ուժասպառ նստում է բազկաթոռի վրա և, երեսը ձեռների մեջ թաքցնելով, աշխատում է զսպել հեծկլտանքը):

ԳԱՐԵԳԻՆ. Դու չափազանց հուզված ես: Նախ և առաջ քեզ հարկավոր է հանգստություն, ես իսկույն իմ սենյակից մի թեթև դեղ կբերեմ: (Ուզում է գնալ):

ՀԵՂԻՆԵ. Ոչ. մի՛ գնա, անցավ, այժմ հանգիստ եմ, թույլ տուր միայն, որ շունչս ժողովեմ... ես կարող եմ խոսել, թողեք, որ խոսեմ: Մի ամբողջ օր է լուռ եմ, սիրտս եռում է ու բորբոքում: Օհ՛ , վատ է, վատ է իմ դրությունը: Նա ինձ խաբում է: Նա իմ հավատարմությունը, իմ սերը, իմ անձնվիրությունը զոհում է ուրիշներին: Ո՛չ այլևս չեմ կարող դիմանալ այս ամոթալի վիճակին: Դա իմ ուժերից վեր է: Սիրել և այնպես ատվել, հավատալ և այնպես մոլորվել, արհամարհվել, ոտնատակ լինել, ծաղրի ու ծիծաղի առարկա դառնալ — անտանելի է: Կարծես, խելագարվում եմ, ուղեղս մթնում է և պղտորվում: Մա՛յր, եղբա՛յր, օգնեցե՛ք ինձ, տվեք մի խորհուրդ ձեր թշվառ Հեղինեին (Հեծկլտում է):

ՀՈՌՈՄ. Խուլանա ու կուրանա քո մայրը (ուզում է փաթաթվել Հեղինեի պարանոցին):

ԳԱՐԵԳԻՆ. Համբերիր, մի ավելացնի նրա հուզմունքը: Թող սրտի դառնությունը արտահայտի և հանգստանա:

ՀԵՂԻՆԵ. Հանգստանա՞մ, երբեք, երբեք իմ սիրտը չի հանգստանա: Արյունս մրրկում է, աչքերս մթնում են, երբ հիշում եմ այն բոլորը, ինչ որ անցել է և անցնում է իմ գլխով: Ա՛ռ, կարդա՛ այս նամակը (տալիս է Գարեգինին բացած ծրարով մի նամակ):

ԳԱՐԵԳԻՆ. Անստորագիր նամակ, ի՞նչ են գրում. «Տիկի՛ն, անկեղծ սրտով խղճում եմ ձեզ: Այն րոպեին, երբ այս նամակը կանցնի ձեր ձեռքը, ձեր ընտանեկան պատիվը ապականվում է ձեր ամուսնու ձեռքով»... Ոչ, բավական է. այս տեսակ ստոր գրվածք ես կարդալ չեմ կարող:

ՀԵՂԻՆԵ. Շարունակիր, եթե ուզում ես բոլորը իմանալ:

ԳԱՐԵԳԻՆ. (Շարունակում է) «Այո, ձեր ամուսնու մեջ մեռել է ամոթի զգացումը: Բայց դուք դեռ սիրում եք նրան և հավատում, մի՞թե ձեր անձնասիրությունը չի բողոքում այս անարգանքի դեմ, մի՞թե ձեր մեջ չկա վրեժխնդրության ոգի: Գրում է ձեզ այս նամակը ձեր ամուսնու վատության զոհերից մեկը, բայց խնդրում է հավատալ նրա խոսքին: Իսկ եթե կասկածեք, կարող եք ստուգել... ահա ձեզ ճանապարհը»,.. Այստեղ գրված է մի բնակարանի հասցե և մի ազգանուն: Եվ դու, Հեղինե՛, ուշադրությո՞ւն ես դարձնում այս տեսակ անամոթ գրությունների վրա: Դա մի թշնամու գործ է, ուրիշ ոչինչ...

ՀԵՂԻՆԵ. Այդպես էի մտածում և ես, բայց երեկվա փաստը իմ կասկածը փարատեց:

ԳԱՐԵԳԻՆ. Փա՞ստը, ուրեմն դու...

ՀԵՂԻՆԵ. Այո, չկարողացա ինձ զսպել: Ո՛հ, ամոթը խեղդում է ինձ, երբ հիշում եմ իմ արածը: Երբեք, երբեք չէի կարծում, որ խանդը այնչափ կարող է հաղթել բանականությանս: Խա՛նդը, ոչ այդ խանդ չէր, այլ ավելի զորեղ զգացում: Նա ճաշից հետո տնից դուրս գալով, խոստացավ շուտով վերադառնալ. պետք է միասին թատրոն գնայինք: Նա ուշացավ, և դարձյալ չար զգացումը գրգռվեց իմ մեջ: Այդ վայրկյանին աղախինս բերեց այս նամակը և ասաց, թե մի անհայտ պատանու ձեռքով է ստացվել: Կարդացի և խելքս պղտորվեց: Աշխատեցի ինձ համոզել, որ այդ մի զրպարտություն է: Բայց ոչ, ես ինձ խաբել չէի կարողանում: Վերջապես, հանկարծ ինձ տիրեց վճռականության ոգին: Սկեսրիս հայտնեցի, թե ձեզ մոտ եմ գալիս: Դուրս եկա միայնակ, դողալով, երեսս թանձր քողով ծածկած: Նստեցի առաջին պատահած կառքը: Սառն քրտինքը պատել էր ինձ ոտից մինչև գլուխ: Մութ էր, սակայն ինձ թվում էր, որ բոլոր անկյուններից ինձ վրա են նայում, որ ինձ ծաղրում են, որ իմ կառքի հետևից լրտեսում են: Ես սարսափում էի իմ արածից, սակայն անհաղթելի ուժը մղում էր ինձ դեպի առաջ: Գնա՛, շշնջում էր ինձ մի ներքին ձայն, գնա՛, այնտեղ ապականում են քո անարատ անունը, սրբապղծում են քո ընտանեկան մաքրությունը, գնա՛, անձամբ համոզվիր և ճանաչիր նրան: Ես հասա այնտեղ: Բարեբախտաբար, դա մի խուլ փողոց էր, մարդ չէր երևում: Ես քաշեցի դռան զանգակը: Դուրս եկավ մի աղախին: Հարցրի այն ազգանունը, որ գրված է այդ նամակի մեջ: Աղախինը շփոթված նայեց ինձ: Նա երեսս տեսնել չէր կարող, բայց ես երկյուղից և ամոթից

ձայնս անգամ փոխել էի: Հետո հայտնեց, թե հրամայված է ոչ ոքի չընդունել: Ես բռնությամբ բարձրացա մինչև սանդուղքի ծայրը, հասա սենյակի դռան: Նույն վայրկյանին ներսից ականջիս հասավ նրա ուրախ և բարձրաձայն ծիծաղը և մի սուր կանացի քրքիջ: Ասեղի պես այդ ձայնը ցցվեց սրտիս խորքը: Ուժասպառ, ստորացած, ամոթից ջախջախված ես դուրս եկա..... Նայի՛ր, մայրի՛կ, նայի՛ր, ատամներիս տեղը ինչպես դրոշմվել է շրթունքիս վրա: Ես ուզում էի զսպել իմ նախատինքը և դառն արցունքը:

ՀՈՌՈՄ. Տե՛ր, դու ինձ ուժ տուր:

ԳԱՐԵԳԻՆ. Անբարոյակա՜ն մարդ, ահա՛ թե մինչև ուր ես հասցրել քո վատությունը:

ՀԵՂԻՆԵ. Տուն վերադարձա գրեթե անզգայացած: Փակվեցի սենյակում, ոչ ոքի երեսը չէի ուզում տեսնել: Ամբողջ գիշերը խելագարի պես պտտվում էի: Ինձ սթափեցրեց եկեղեցու առավոտյան զանգակի ձայնը: Նայեցի պատուհանից դեպի դուրս, արշալույսը հազիվ բացվել էր: Այդ վայրկյանին հիշեցի իմ անմեղ զավակին, անցա մյուս սենյակը, չոքեցի նրա անկողնի մոտ, և արցունքն ու աղոթքը ինձ կրկին կենդանության ուժ պարգևեցին:

ՀՈՌՈՄ. Անե՛ծք նրան, անե՛ծք նրան, ո՛վ աստված:

ԳԱՐԵԳԻՆ. Եվ դու ոչինչ բացատրություն չպահանջեցիր նրանից:

ՀԵՂԻՆԵ. Պահանջեցի, երկու ժամ սրանից առաջ:

ԳԱՐԵԳԻՆ. Ի՞նչ ասաց:

ՀԵՂԻՆԵ. Սկզբում մերժեց, ապա երբ չկարողացավ հերքել, սկսեց արդարացնել իրան... Բայց բավական է, այլևս ուժ չունեմ շարունակելու: (Նորից հեկեկում է):

ՀՈՌՈՄ. Հեղինե՛, աղջի՛կս: (Փաթաթվում են միմյանց պարանոցին):

ԳԱՐԵԳԻՆ. (Մի փոքր լռելուց հետո) Նա տա՞նն է այժմ:

ՀԵՂԻՆԵ. Տանն է, ի՞նչ ես կամենում անել:

ԳԱՐԵԳԻՆ. Կամենում եմ նրա հետ խոսել երես առ երես:

ՀԵՂԻՆԵ. Այդ անկարելի է, դու չպիտի անես և իրավունք չունես անելու: Դու միայն ինձ հետ կարող ես խոսել. տուր ինձ քո խորհուրդը, և ես կհետևեմ նրան:

ԳԱՐԵԳԻՆ. Այս խնդիրը ծանրակշիռ է, վրդովվելով և տաքանալով չի կարելի լուծել: Պետք է գործել մտածելով: (Լռում է, հետո). Հեղինե՛ դու դեռ սիրո՞ւմ ես նրան:

ՀԵՂԻՆԵ. Ինչո՞ւ համար ես այդ հարցը տալիս:

ԳԱՐԵԳԻՆ. Որպեսզի կարողանամ իմ կարծիքը հայտնել:

ՀԵՂԻՆԵ. Չգիտեմ, և ինչպես կարող եմ այժմ պատասխանատու լինել իմ զգացմանց մասին: Գիտեմ միայն, որ մինչև երեկվա դեպքը իմ վշտերի գլխավոր պատճառը միմիայն սիրո խանդն է եղել:

ԳԱՐԵԳԻՆ. Իսկ ա՞յժմ:

ՀԵՂԻՆԵ. Այժմ տեսա իմ խաբված և անարգված լինելը: Այժմ ինձ տանջում է պատվասիրության զգացումը: Եթե միայն նա չսիրեր ինձ, այն ժամանակ ես կարող էի կրել իմ վիշտը, բայց նա ինձ ստորացնում է... ահա իմ կսկիծը...

ԳԱՐԵԳԻՆ. Ես հասկանում եմ. Կկամենայի՞ր ուրեմն պաշտպանել քո պատիվը։

ՀԵՂԻՆԵ. Ո՞ւմ դեմ։

ԳԱՐԵԳԻՆ. Քո ամուսնու, որ ոտնատակ է անում նրան։

ՀԵՂԻՆԵ. Կկամենայի, բայց ինչպե՞ս։

ԳԱՐԵԳԻՆ. Լսի՛ր, սիրելի՛ս։ Ես վաղուց գուշակում էի, որ դու այդ մարդու հետ բախտավոր լինել չես կարող։ Հիշում ես իմ բացարձակ կասկածները, երբ դու դեռ հարսնացու էիր և այնպես հափշտակված նրանով։ Զգո՛ւյշ կաց, ասում էի, այդ մարդը ընտանեկան կյանքի համար չէ ստեղծված։ Նա քո շրջանի մարդ չէ, կրկնում էի, նա ամուսնանում է միմիայն փողի համար։ Հիշո՞ւմ ես։

ՀԵՂԻՆԵ. Հանդիմանի՛ր ինձ, անիծիր, ես արժանի եմ, որովհետև նրան սիրում էի և,...

ԳԱՐԵԳԻՆ. Եվ սիրում ես... Այո, բայց հանդիմանելու համար չեմ ասում այդ։ Անցյալը վերադարձնել չի կարելի, պետք է մտածել ապագայի մասին։ Ուրեմն սառնասիրտ եղիր մի րոպե և լսիր ինձ։ Քո ամուսինը այն մարդկանցից է, որոնց բարոյական սկզբունքները կյանքի վերաբերմամբ շատ խախուտ են։ Այդ տեսակ մարդիկ իրանց գոյության ընթացքում մի նպատակ ունեն միայն ապրել՝ զվարճանալու համար և զվարճանալ՝ ապրելու համար։ Կյանքի քաղցրությունը նրանք որոնում են իրենց արտաքին զգայարանքներին գոհացում տալու մեջ։ Նրանց ներքին ամայի աշխարհում հոգեկան բարձր զվարճությունների պահանջ չկա։ Ուղղել այդ մարդկանց անհնարին է, որովհետև վարակված մարմնի մի անդամը բուժել չի կարելի առանց ամբողջության։ Եթե դու հույս ունես, որ քո ամուսինը երբևէ կիրագործի քո ցնորքը ընտանեկան խաղաղ ու երջանիկ կյանքի մասին — չարաչար սխալվում ես։ Ուրեմն պետք է դիմել ուրիշ միջոցի։ Այդ միջոցը միայն մեկն է։ Դու հասկանում ես իմ միտքը։

ՀԵՂԻՆԵ. Ոչ, դու ինձ սարսափեցնում ես քո խոսքերով։

ԳԱՐԵԳԻՆ. Դու պետք է նրանից բաժանվես։

ՀԵՂԻՆԵ. Բաժանվել, բաժանվել նրանից... ա՜խ։

ՀՈՌՈՄ. Բաժանվել, ումի՞ց, մարդո՞ւց, որդի՛, այդ ի՞նչ ես ասում։

ԳԱՐԵԳԻՆ. Այո՛, բաժանվել և մշտապես։

ՀԵՂԻՆԵ. Օ՜, Գարեգին, դու անգութ ես, դու սիրտ չունես, դու ինձ չես խնայում, մի՞թե ուրիշ խորհուրդ չես կարող տալ։

ԳԱՐԵԳԻՆ. Որ այդպես է, ուրեմն, դու սիրում ես նրան։

ՀԵՂԻՆԵ. Ոհ, մի՛ ասիր այդ բանը, մի՛ ասի։

ԳԱՐԵԳԻՆ. Այո, գուցե ես շատ խիստ եմ վարվում քո սրտի փափուկ զգացման հետ։ Բայց ինձ համար ավելի թանկ է քո պատիվը, անունը, վերջապես, քո կյանքը։ Ասա, ուղղակի, իմ առաջարկությունը քեզ վախեցնում է, այնպես չէ։

ՀԵՂԻՆԵ. Ոչ... այո... չգիտեմ... բաժանվե՛մ, իսկ զավա՞կս...

ԳԱՐԵԳԻՆ. Նա քեզ կպատկանի, որովհետև անմեղությունը քո կողմն է, իսկ հանցանքը նրա կողմը։ Մենք կապացուցենք ճշմարտությունը։

ՀԵՂԻՆԵ. Երբե՞ք։

ԳԱՐԵԳԻՆ. Ինչո՞ւ:

ՀԵՂԻՆԵ. Երբեք նա չի կամենա այդ պայմանով բաժանվել:

ԳԱՐԵԳԻՆ. Որովհետև տակավին չի վատնել քո օժիտի մնացորդը, այդպես չէ՞: Շպրտիր երեսին, նրան այդ է հարկավոր և ոչ դու կամ քո զավակը: Հարուստ գնացել ես, մերկ վերադարձիր:

ՀՈՌՈՄ. Մերկ, տե՛ր աստված, ո՞ւր վերադառնա, իր հոր տունը, դա խայտառակություն կլինի, ես չեմ կարող դիմանալ, ամոթից կմեռնեմ:

ՀԵՂԻՆԵ. Լսո՞ւմ ես, Գարեգին, ահա ամենադժվար պայմաններից մեկը: Ոչ, այդ անկարելի է, անկարելի է: Հասարակությունը ինձ միայն կդատապարտի, իսկ նրան կարդարացնի: Ես որքան իմ մասին եմ մտածում, այնքան և այս ծեր կնոջ մասին:

ԳԱՐԵԳԻՆ. Ուրեմն վախեցիր հասարակությունից, շարունակիր այդ թշվառ կյանքը: Ոչ, Հեղինե՛, ես չեմ սխալվում, դու քո ամուսնուն սիրում ես:

ՀԵՂԻՆԵ. Մի մորմոքի իմ սիրտը, եթե մի կաթիլ գութ ունես դեպի ինձ:

ՀՈՌՈՄ. Կառքի ձա՛յն, չլինի թե նա է:

ՀԵՂԻՆԵ. Անշուշտ նա է, սիրտս տրոփում է:

ԳԱՐԵԳԻՆ. (Մոտենալով պատուհանին) Այո, նա է:

ՀԵՂԻՆԵ. Ինչո՞ւ համար է գալիս, ես չեմ կարող նրա երեսը տեսնել:

ԳԱՐԵԳԻՆ. Դու գնա մյուս սենյակը, ես կընդունեմ: Մայրի՛կ, դու էլ գնա:

ՀՈՌՈՄ. Որդի՛, գույնդ փոխվեց, աչքերդ վառվեցին, ես վախենում եմ:

ՀԵՂԻՆԵ. Գարեգի՛ն, թող մնամ այստեղ, դու չես կարող քեզ զսպել:

ԳԱՐԵԳԻՆ, Գնացե՛ք, խնդրում եմ, ես կաշխատեմ պաղարյուն լինել (Հեղինեն քայլերը ուղղում է դեպի ձախ կողմի դռները: Այդ միջոցին միջին դռների մեջ երևում է Միքայելը):

ՄԻՔԱՅԵԼ. (Առաջ դիմելով) Հեղինե՛: (Հեղինեն ձեռով բացասական նշան է անում և անցնում մյուս սենյակ):

ՏԵՍԻԼ Ե.

ԳԱՐԵԳԻՆ Ե ՄԻՔԱՅԵԼ

ՄԻՔԱՅԵԼ. Ի՞նչ է նշանակում այդ: Խնդրեմ, կանչեք այստեղ իմ կնոջը:

ԳԱՐԵԳԻՆ. Նա չի կարող գալ:

ՄԻՔԱՅԵԼ. Ինչո՞ւ:

ԳԱՐԵԳԻՆ. Որովհետև՛ չի կամենում:

ՄԻՔԱՅԵԼ. Պատճա՞ռը:

ԳԱՐԵԳԻՆ. Պատճառը ձեզ է հայտնի։

ՄԻՔԱՅԵԼ. Ես ոչինչ չգիտեմ։

ԳԱՐԵԳԻՆ. Դուք ամեն բան գիտեք և ամեն բան անում եք, որպեսզի թշվառացնեք մի կնոջ, որ նվիրել է ձեզ յուր սերը, անձը և պատիվը։

ՄԻՔԱՅԵԼ. Գեղեցի՜կ ընդունելություն, արժանի համալսարանական կրթություն ստացած մի երիտասարդի։ Ես գալիս եմ իմ ամուսնու հետ հաշտվելու, իմ առաջ դուրս է գալիս մի երրորդ անձն ու ինձ վիրավորական հանդիմանություն անում։ Ասացե՛ք, ի՞նչ իրավունքով։

ԳԱՐԵԳԻՆ. Այն իրավունքով, որ տալիս է ինձ, ձեր ամուսնու եղբորը, նրա տարաբախտ կյանքը։

ՄԻՔԱՅԵԼ. Պարո՛ն։

ԳԱՐԵԳԻՆ. Մի՛ խրոխտանաք. ձեր առաջ կանգնած է մի չափահաս մարդ, որ պատրաստ է իր անձը զոհել յուր միակ քրոջ պատիվը և կյանքը փրկելու համար։ (Մեկուսի) Աստվա՛ծ իմ, ես խոստացա սառնարյուն լինել, բայց չեմ կարողանում։

ՄԻՔԱՅԵԼ. Ուրեմն դուք ինձ սպառնալի՞ք եք կարդում։ Իզուր։ Ես նրանցից չեմ վախենում։ Բարեհաճեցեք կանչել այստեղ Հեղինեին։

ԳԱՐԵԳԻՆ. Ասացի, որ նա չի կարող գալ։

ՄԻՔԱՅԵԼ. Նա պետք է իսկույն տուն վերադառն։ Ես նրա ամուսինն եմ, այդպես եմ պահանջում։

ԳԱՐԵԳԻՆ. Իրավունք ունեք, որովհետև դուք դեռ չեք տվել նրա պատվին ձեր վերջին հարվածը։

ՄԻՔԱՅԵԼ. Բավական է, պարո՛ն, որքան երեսիս շպրտեցիք այդ պատիվ ասած բառը։ Մի՛ մոռանաք, որ տալով ձեր քրոջը իշխանուհու կոչումը, ես ոչ միայն նրա մեջ պատվի զգացումը ավելի բարձրացրել եմ, այլև ձեր ամբողջ ընտանիքի անունը, անհայտությունից դուրս բերելով, օրինավոր մարդկանց շրջան եմ մտցրել։

ԳԱՐԵԳԻՆ. Սակայն այն պայմանով, որ նույն այդ շրջանում մեր անհայտ եղած անունը ցեխի հետ հավասարեք։ Այո, դուք շատ վեհանձն եք եղել, այդ ցույց է տալիս ձեր վարմունքը։ Հավատացեք, պարո՛ն, ես կգերադասեի իմ քրոջը տեսնել երեսի քրտինքով յուր օրվա պարենը վաստակող մի համեստ մարդու կին, քան թե անդամ մի գերդաստանի, որ, բացի դատարկ իշխանական տիտղոսից, ոչինչ չի պարունակում։

ՄԻՔԱՅԵԼ. Ցավում եմ միայն, որ ուշ եք ծնվել։ Երեսի քրտինքով հաց աշխատելու գաղափարը կարող էր պիտանի լինել ձեր հանգուցյալ հորը։ Այն մարդուն, որ միշտ ծարավ է եղել խեղճերի քրտինքին։ Շարունակե՞մ արդյոք։

ԳԱՐԵԳԻՆ. (Մեկուսի) Հա՛յր իմ, ահա քո արարքի վարձը, ես զինաթափ եմ լինում նույնիսկ այդ մարդու առաջ։ (Բարձր) Մի՛ շոշափեք իմ հոր գերեզմանը։ Նա ինքն է միայն պատասխանատու յուր կյանքի համար։ Ասացեք ի՞նչ եք կամենում։

ՄԻՔԱՅԵԼ. (Մեկուսի) Նա շփոթվեց, այժմ պետք է ուրիշ կերպ խոսել։ (Գարեգինին) Կամենում եմ փարատել նրա կասկածը իմ մասին և խնդրել, որ հաշտվի ինձ հետ։ Թողնենք ապարդյուն վեճը, լինենք սառն ու խոհեմ, ինչպես վայել է կրթված մարդկանց։ Ի՞նչ է ձեր մտադրությունը. արդյոք մեր ընտանեկան թեթև տհաճությունները հասարակաց բամբասանքի նյո՞ւթ դարձնել։ Հավատացեք, այդ վատ բան է։ Ես չեմ պնդում, որ բոլորովին անմեղ եմ Հեղինեի առաջ։ Բայց իմ թեթև սխալները բնավ մարդկանց սովորական

մոլորությունից դեն չեն անցել: Ուրեմն ինչո՞ւ գործը այդպես փքել և մեծացնել, ինչո՞ւ փոխանակ մեզ հաշտեցնելու, ավելի սաստկացնում եք խռովությունը, Գարեգի՛ն, խոհեմ եղեք, ձեր քույրը մայր է, եթե դուք հերքեք նրա ամուսնական սերը, չեք կարող երաշխավոր լինել նրա մայրական սիրո մասին:

ԳԱՐԵԳԻՆ. Օհ՛, դուք, ինչպես երևում է, շատ լավ եք ուսումնասիրել կանանց սրտի զգայուն լարերը: Այո, իմ քրոջ սրտի մասին ունեցած կասկածս է միայն, որ կաշկանդում է իմ լեզուն, ապա թե ոչ, գիտեի, թե ինչ է հարկավոր ձեզ պատասխանել. Ես կկանչեմ Հեղինեին այստեղ, սակայն ձեր հաշտության միջնորդը դառնալ չեմ կարող: (Գնում է ձախ դռներով):

ՏԵՍԻԼ 9.

ՄԻՔԱՅԵԼ (միայնակ)

ՄԻՔԱՅԵԼ. Օ՜հ, լեզո՛ւ, դու զորա՛վոր զենք ես ճարպիկ մարդու ձեռքում: Խելոք է նա, որ ընդունակ է քեզ ժամանակին հմտությամբ գործածել: Այլևս կասկած չունեմ, որ հաշտությունը կկայանա: Հեղինեին համոզելը դժվար չէ, նա ինձ սիրում է, ես այդ բանին համոզված եմ մինչև գերեզման: Իսկ ես առանց նրան կորած եմ: Գործերս ձախ են գնում, միակ հույսս Բաքվի ընկերության մեջ ունեցած բաժինն էր: Եվ մինչև այժմ ընկերությունը ինձանից միայն փող է պահանջում նավթային հանքերի համար: Ինձ փող է հարկավոր, փող գործի համար, փող ապրելու և զվարճանալու համար: Իսկ նա դեռ բավական գումար ունի: Ամուսնությո՞ւն, ընտանեկան կյանք, ահա նրա պտուղները: Օհ, տաղտկալի է և անտանելի: (Ներս է մտնում Հեղինեն, նրա հետևից Հոռոմը և ապա Գարեգինը: Վերջինը կանգնում է հեռու և դիտում):

ՏԵՍԻԼ Է.

ՄԻՔԱՅԵԼ, ՀԵՂԻՆԵ, ՀՈՌՈՄ և ԳԱՐԵԳԻՆ

ՀԵՂԻՆԵ. Ի՞նչ եք կամենում:

ՄԻՔԱՅԵԼ. Հեղինե՛, մեղավոր եմ, զգում եմ և զղջում: Բարեսիրտ եղիր, մոռացի՛ր, ների՛ր:

ՀԵՂԻՆԵ. Այդ խոսքերը ասելու համար կարիք չկար այստեղ գալու, դուք այն հարյուր անգամ կրկնել եք, Օ՜հ, որքան ձանձրալի է, դառն և ամոթալի այդ կատակը:

ՄԻՔԱՅԵԼ. Երբեք, երբեք այսպես զղջացած չեմ: Տե՛ս, որքա՜ն ստորանում եմ եղբորդ և մորդ առաջ: Ների՛ր, մի անգամ ևս, և այդ թող լինի վերջինը:

ՀԵՂԻՆԵ. Վերջինը: Ոչ, այլևս իմ մեջ հավատ չէ մնացել դեպի ձեզ: Ընկավ ձեր դիմակը, տեսա ձեր իսկական պատկերը, և ես չգիտեմ ինչո՞վ բացատրեմ, որ դեռ կարողանում եմ նայել ձեր երեսին:

ՄԻՔԱՅԵԼ. Հեղինե՛, խնայիր, եթե ոչ ինձ, գոնե մեր անմեղ զավակին: Նա միայնակ է, նա լալիս է, նա մայրիկ է աղաղակում:

ԳԱՐԵԳԻՆ. Որքան ճարպիկ է:

ՀԵՂԻՆԵ, Մի՛ հիշեք նրա անունը, դուք վիրավորում եք նրա անմեղությունը: Բավական է, հեռացեք և մի՛ թույլ տաք ինձ ամոթից տանջվել իմ մոր և եղբոր առաջ: Նրանք մի կաթիլ անգամ մեղք չունեն իմ դառն սխալի մեջ: Դա՜ռն, այո որովհետև ձեր մեջ էի երևակայում գտնել իմ ամբողջ գոյության նպատակը, ձեզանով և միմիայն ձեզանով էի կամենում վայելել

կյանքի բարիքը և չարիքը, ձեզանից հեռու չէր անցնում իմ գաղափարը: Իսկ դուք ինձ խաբեցիք, օհ՛, դուք չգիտեք ինչ ասել է ինձ նման մի կնոջ խաբված լինելը, մի՛ կնոջ, որ ընտանեկան կյանքից դուրս ուրիշ աշխարհ չուներ և չէր ուզում ունենալ, որովհետև նա սիրում էր անհուն սիրով իր ամուսնուն:

ՄԻՔԱՅԵԼ. Հարվածի՛ր ինձ, նախատի՛ր, անարգի՛ր, բայց ես այստեղից չեմ հեռանա առանց քեզ: Ուրեմն, ահա իմ ձեռքը, որ մեկնում եմ քեզ անկեղծ սրտով, տուր ինձ քոնը, ու մենք, կհաշտվենք:

ՀՈՌՈՄ. Հաշտվի՛ր, որդի՛, հաշտվի՛ր, նա շատ խեղճացել է.

ԳԱՐԵԳԻՆ. (Մեկուսի) Խե՜ղճ և միամիտ մայր...

ՄԻՔԱՅԵԼ. Խնդրեցե՛ք, մայրի՛կ, աղաչում եմ: Հավատացեք, ես Հեղինեին շատ եմ սիրում շա՜տ: (Միջին դռներից մտնում են Մարիամը և Օլգան):

ՏԵՍԻԼ Ը

ՆՐԱՆՔ, ՄԱՐԻԱՄ և ՕԼԳԱ

ՄԱՐԻԱՄ. Ո՞ւր է, ինչ պատահեց: Ա՜խ այստեղ եք: Օլգաս քիչ էր մնում ուշաթափվի երկյուղից: Այդ ի՞նչ է եղել, Հեղինե՜, ինչո՞ւ դու այդպես դեղնած ես:

ՄԻՔԱՅԵԼ. Ես նրան վիրավորել եմ, ես նրա առաջ մեղավոր եմ, խնդրեցեք բոլորդ, որ ների:

ՄԱՐԻԱՄ. Գիտեմ, ձեր մեջ առավոտյան վեճ է պատահել: Բայց արժե՞ր դրա համար աղմուկ բարձրացնել, Հեղինեն, այնպես վազել է այստեղ և մեզ էլ վախեցրել: Ախ, Օլգա, հանգստացա՞ր, թե չէ:

ՕԼԳԱ. Դատարկ բանի համար իզուր եկանք այստեղ: Գնանք՝ մայրի՛կ, Միքայելը յուր կնոջ հետ կգա տուն:

ԳԱՐԵԳԻՆ. (Հեղինեին) Տեսնո՞ւմ ես, այդ բոլորը քո օժիտի համար է: Վճռիր, ուրեմն:

ՀՈՌՈՄ. Հաշտվի՛ր, որդի՛, ամենքը խնդրում են:

ՕԼԳԱ. (Մեկուսի) Ե՞ս խնդրեմ նրանից, օհ՛, կաց անխոս օձ, իմ եղբոր աչքերը վերջը կբացվեն

ՄԱՐԻԱՄ. Տե՛ր աստված, երևի այդ էլ իմ բախտից է: Մենք մեծ պատրաստություն ենք տեսնում ամսույս քսանուհինգի համար, Օլգայիս ծննդյան օրն է, երեկույթ ունենք, իսկ դրանք կռվում են: Հեղինե՜, խելքի եկ, տե՜ս մենք մեր ոտով եկել ենք քո հետևից:

ՀԵՂԻՆԵ. (Եղբորը, առանձին) Ես ամոթից տատանվում եմ:

ԳԱՐԵԳԻՆ. (Առանձին) Լսիր քո սրտի ձայնին, ես գործ չունեմ:

ՀՈՌՈՄ. Ների՛ր, որդի՛,

ՕԼԳԱ. (Մեկուսի) Փքվի՛ր, փքվի՛ր, Սուլիկյանը, երևի, քեզ խրախուսում է:

ՄԻՔԱՅԵԼ. Ես սպասում եմ իմ դատավճռին:

ՀՈՌՈՄ. Ա՜խ, աղջի՛կս, չեմ կարողանում արտասուքս պահել, հաշտվի՛ր: (Լալիս է):

ՄԻՔԱՅԵԼ. Գոնե խնայիր քո մոր արցունքը:

ԳԱՐԵԳԻՆ. (Մեկուսի) Որքան ցավալի է վկա լինել այս տեսարանին:

ՀԵՂԻՆԵ. Մա՛յր իմ, մա՛յր իմ, մի՛ լար, ես պատրաստ եմ կատարել քո կամքը, թող միայն ես տանջվեմ: (Գլուխը դնում է մոր ուսին):

ԳԱՐԵԳԻՆ. (Մեկուսի) Դժբա՛խտ քույր, դու դեռ սիրում ես այդ անարգ մարդուն, և շա՛տ ես սիրում:

Վարագույր

3-ՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

(Մի հանդիսավոր կահավորված սենյակ Բեգմուրյանների տանը: Բեմի խորքի դռները բաց են, երևում է շքեղ լուսավորված և զարդարուն դահլիճը: Այնտեղ անցուդարձ են անում նախ ծառաներ, ապա հյուրեր են երևում: Երեկույթ է):

ՏԵՍԻԼ Ա.

ՕԼԳԱ, հետո ԱՆՅՈՒՏԱ

ՕԼԳԱ. (Դուրս գալով ձախ դռներից շքեղ հագնված) Անյո՛ւտա, Անյո՛ւտա , ա՛խ անպիտաններ: Շուտով հյուրերը կհավաքվեն, իսկ ես դեռ պատրաստ չեմ: Անյո ՛ւտա... խլացել է, ի՞նչ է: (Ներս է մտնում միջին դռներից):

ԱՆՅՈՒՏԱ. Ի՞նչ եք հրամայում, օրիո՛րդ:

ՕԼԳԱ. Դարձյա՛լ օրիորդ: Ում հարկավոր է իշխանուհի կոչել, մոռանում եք, իսկ մի ոչինչ մարդու աղջկա առաջ ամեն անգամ «Ձերդ պայծառափայլություն»: Ի՞նչ էիր անում այնտեղ:

ԱՆՅՈՒՏԱ. Ձեզ նվիրված ծաղկյա փնջերն էի դասավորում:

ՕԼԳԱ. Քանի՞սն է:

ԱՆՅՈՒՏԱ. Յոթը:

ՕԼԳԱ. Սուլիկյանի փունջն էլ այնտե՞ղ է:

ԱՆՅՈՒՏԱ. Այո:

ՕԼԳԱ. Որտե՞ղ դրիր:

ԱՆՅՈՒՏԱ. Անկյունի սեղանի վրա:

ՕԼԳԱ. Հիմա՛ր, քեզ չասացի՞, դաշնամուրիս վրա դնես:

ԱՆՅՈՒՏԱ. Իսկույն օրի..., իշխանուհի: (Օլգան մոտենում է հայելուն):

ՕԼԳԱ. Կա՛ց: Նայիր ինձ ամեն կողմից: (Այնուտան դիտում է նրա շրջազգեստը): Փեշերս լա՞վ են կանգնում, ես հայելու մեջ լավ չեմ տեսնում:

ԱՆՅՈՒՏԱ. Շա՛տ հիանալի է Ձերդ պայծառափայլություն, ոչինչ պակասություն չկա :

ՕԼԳԱ. Գնա՛, մանիշակագույն հովհարս բեր իմ սենյակից: (Անյուտան ուզում է գնալ): Սպասի՛ր: Ո՞րտեղ է (հեգնորեն) նորին պայծառափայլությունը:

ԱՆՅՈՒՏԱ. Ո՞ւմ մասին եք հարցնում, իշխանուհի:

ՕԼԳԱ. Եղբորս կնոջ մասին:

ԱՆՅՈՒՏԱ. Յուր սենյակումն է:

ՕԼԳԱ. Ի՞նչ է անում այնտեղ:

ԱՆՅՈՒՏԱ. Տխուր նստած է:

ՕԼԳԱ. Տխո՞ւր, հասկանում եմ, որովհետև այսօր տոնը իմս է: Ո՞վ կա մոտը:

ԱՆՅՈՒՏԱ. Մայրը:

ՕԼԳԱ. Այն անտանելի պառավը, ով գիտե Էլի ի՞նչ սատանայություն է սովորեցնում նրան: Լավ, գնա՛ բանիդ: (Անյուտան գնում է դեպի ձախ) Աստվա՛ծ, այս ինչ տոն է, սիրտս լիքն է դառնությամբ: Այո, այսօր քսանվեց տարիս լրանում է, իսկ մայրս ուրիշներին խաբում է, թե քսաներեք տարեկան եմ: Մինչև ե՞րբ, Յոթը փունջ եմ ստացել, յոթն էլ երիտասարդներից, բայց ոչ մեկի սիրտը այդ ծաղիկների մեջ չէ: Մայրս չի սխալվում, մնացել է միայն Սուլիկյանը, Էլի նա: Իսկ նա, տեսնենք այսօր ինչպես կգնահատի ինձ, եթե միայն չխանգարեն: Ա՛խ, Հեղինե՛, կարծեմ ես չեմ սխալվում: (Անյուտան վերադառնում է հովհարը ձհռին): Բերի՛ր, գնա, շուտով ասածս կատարիր: (Անյուտան դիմում է դեպի միջին դռները և հետ գալիս):

ԱՆՅՈՒՏԱ. Իշխանուհի՛, նա արդեն այստեղ է:

ՕԼԳԱ. Ո՞վ:

ԱՆՅՈՒՏԱ.Պարոն Սուլիկյանը, (Միջին դռներով ներս է մտնում Սուլիկյանը): Պետք է սրանց մենակ թողնել (գնում է):

ՏԵՍԻԼ Գ

ՕԼԳԱ և ՍՈՒԼԻԿՅԱՆ

ՍՈՒԼԻԿՅԱՆ. Շնորհավորում եմ կրկին անգամ և ցանկանում երջանիկ ապագա:

ՕԼԳԱ. Շատ շնորհակալ եմ: Ձեր գեղեցիկ փունջը ինձ հիացրեց:

ՍՈՒԼԻԿՅԱՆ. Այսօր դուք հագնվել եք իսկական փարիզուհու նման:

ՕԼԳԱ. Գնացե՛ք, դուք իմ ճաշակը ծաղրում եք:

ՍՈՒԼԻԿՅԱՆ. Իսկ դուք ինձ վիրավորում եք իմ անկեղծ կարծիքը այդպես ընդունելով: (Մեկուսի) Աստվա՛ծ իմ, նրան տեսնելու համար, ստիպված եմ սրան շողոքորթել:

ՕԼԳԱ. Ես հավատում եմ լիովին ձեր ճաշակին, եթե միայն նույն գովասանքը ուրիշների մասին ևս չանեք: (Մեկուսի): Այսօր բավական քաղցրախոս է և հաճելի):

ՍՈՒԼԻԿՅԱՆ. Ես տալիս եմ կեսարինը կեսարին, աստծունը՝ աստծուն: (Մեկուսի) Գովել կարող եմ քո հագուստը, բայց քեզ երբեք:

ՕԼԳԱ, Թող այդպես լինի, միայն կարողացեք ճանաչել կեսարին և աստծուն: Շատ անգամ տղամարդիկ սխալվում են չարաչար իրանց ճաշակի վերաբերմամբ:

ՍՈՒԼԻԿՅԱՆ. Հուսով եմ, որ ես մի սխալ չեմ գործել:

ՕԼԳԱ. Ո՞վ գիտե, մարդիկ մահկանացու են:

ՍՈՒԼԻԿՅԱՆ. (Մեկուսի) Ի՞նչ է կամենում ասել:

ՕԼԳԱ. Իսկ տղամարդը երբեմն ապակու կտորը ադամանդի տեղ է ընդունում:

ՍՈՒԼԻԿՅԱՆ. Խոստովանում եմ, օրիո՛րդ, ես չեմ հասկանում ձեր ասածը:

ՕԼԳԱ. Կան բաներ, որոնց մասին պետք է զգույշ լինել: Բայց թողնենք այդ. ուրեմն դուք կկառավարե՞ք երեկույթը:

ՍՈՒԼԻԿՅԱՆ. Ես, ինչո՞ւ ես:

ՕԼԳԱ, Չէ որ դուք խոստացաք իմ մորը:

ՍՈՒԼԻԿՅԱՆ. Ես խոստացա միայն պարերը ղեկավարել:

ՕԼԳԱ. Այդքանի համար էլ շնորհակալ եմ: Ուրեմն մենք կպարենք միասի՞ն:

ՍՈՒԼԻԿՅԱՆ... Ուրախությամբ: (Մեկուսի) Դարձյալ ուզում է ինձ կաշկանդել:

ԱՆՅՈՒՏԱ. (Միջին դռներից) Օրիո՛րդ, հյուրերը գալիս են, իշխանուհին ձեզ յուր մոտ է խնդրում:

ՕԼԳԱ. Մա՞յրս:

ԱՆՅՈՒՏԱ. Այո:

ՕԼԳԱ. Տվեք ինձ ձեր թևը, պարոն Սուլիկյան: (Գնում են միջին դռներով):

ՏԵՍԻԼ Գ.

ՀԵՂԻՆԵ (միայնակ)

ՀԵՂԻՆԵ. (Աջ դռներից դուրս գալով) Որքա՜ն անտանելի է ուրախ ձևանալ այն ժամանակ, երբ սիրտս կեղեքվում է: Այո՛, ճակատագիրը նրան դատապարտել է հավիտյան մորմոքման: Հավատալ այդ մարդու երդմանը, աղերսանքին, նրա ջերմ խոստումներին, ո՜հ, այդ մի դառն և աններելի սխալ էր, որ ես գործեցի: Նա միայն երկու օր կարողացավ զսպել իրան, իսկ հետո նույնը, նույնը: Եվ ով է այն թշվառը, որին նա հարել է վերջին ժամանակ և այդքան երկար միջոց: Դա ընդդեմ է այդ մարդու բնությանը. Ասում են, որ այդ կինը սովորական անարգ արարածներից չէ, որ նա ունի արժանավորություններ: Ահա այդ է, որ ինձ ավելի տանջում է և տակավին պահում իմ սրտում սիրո խանդը: Խե՜ղճ եղբայր, դու ինձանից լավ էիր ճանաչում իմ ամուսնուն: Ամուսին, օ՜, այս կոչումը այրում է իմ շրթունքը: Ճիշտ է, որ նա ուզում էր ստանալ իմ կարողության վերջին մնացորդը: Եվ նա խաբեությամբ կորզեց ինձանից: Ի՞նչ եմ ես այժմ նրա համար: Մի ավելորդ բեռ, մի թքված և արհամարհված պատառ: Օ՜, Միքայե՜լ, սրտիս յուրաքանչյուր զարկը հոգույս համար մի հարված է, երբ հիշում եմ քո կեղծ զղջումը... (Վերադառնում է Սուլիկյանը):

ՏԵՍԻԼ Դ.

ՀԵՂԻՆԵ և ՍՈՒԼԻԿՅԱՆ

ՍՈՒԼԻԿՅԱՆ. (Մեկուսի) Վերջապես... (Բարձր) Իշխանուհի... դուք մտածման մեջ եք...

ՀԵՂԻՆԵ. Այո, երեկույթի հոգսերը:

ՍՈՒԼԻԿՅԱՆ, Գիտեմ, բոլոր ծանրությունը ձեզ վրա է բարձված: Ես բախտավոր կլինեի, եթե կարողանայի այդ ծանրությունը բաժանել ձեզ հետ: Բայց ինձ թվում է, որ դուք փոքր ինչ տկար եք:

ՀԵՂԻՆԵ. Ամենևին ես առողջ եմ:

ՍՈՒԼԻԿՅԱՆ. Տա՛ աստված... (Հառաչում է):

ՀԵՂԻՆԵ. Բայց ինչո՞ւ դուք այսօր տխուր եք:

ՍՈՒԼԻԿՅԱՆ. Ես ... ոչ, այո, մի թեթև թախծություն ունեմ: Բայց հոգ չէ, զվարթ հյուրերը, երաժշտությունը կզվարճացնեն ինձ: Եվ ես հուսով եմ, որ այս ուրախ երեկույթին մի հակապատկեր չեմ ներկայանա:

ՀԵՂԻՆԵ. Այո աշխատեցեք զվարճանալ, եթե ոչ Օլգան կվիրավորվի: Ներեցեք, կարծեմ, հյուրերը գալիս են, իբրև տանտիրուհի պարտական եմ նրանց ընդունել:

ՍՈՒԼԻԿՅԱՆ. Ձեր սկեսուրը և օրիորդ Օլգան այնտեղ են:

ՀԵՂԻՆԵ. Ես ևս պարտավոր եմ լինել: Ներեցեք: (Գնում է միջին դռներով):

ՍՈՒԼԻԿՅԱՆ. Որքան նա խոհեմ է, որքան անտարբեր, բայց և որքա՜ն հրապուրիչ: Զգո՞ւմ է արդյոք մի բան, գուշակում է, թե ինչ է կատարվում իմ սրտի խորքում: Այո, նա խելացի է, նա կարող է թափանցել իմ սիրտը: Հետո ի՞նչ կդառնամ արդյոք նրա աչքում, մի ատելի և ստոր արարա՞ծ, թե՞ խղճալի և ողորմելի: Ո՛չ, ես արժանի չեմ նրա համակրությանը, նա բարձր է, անհամեմատ բարձր հոգով և սրտով: Սակայն և դժբախտ է յուր անարժան ամուսնու հետ: Ի՞նչ է պատահում ինձ, զգում եմ, որ նա ինձ միանգամայն կաշկանդում է: Ո՛չ պետք է արթնանալ, արածս լավ բան չէ, այո, վատ բան և շատ վատ է: (Աջ դռներից ներս է մտնում Միքայելը):

ՏԵՍԻԼ Ե.

ՍՈՒԼԻԿՅԱՆ և ՄԻՔԱՅԵԼ

ՄԻՔԱՅԵԼ. Դու այստե՞ղ ես: Ահա, բարեկամ, ընտանետեր մարդու դրությունը: Հյուրեր, հյուրեր, պետք է մեկին ընդունել, մյուսին զբաղեցնել, երրորդի թթված դեմքը պարզել մի քաղցր խոսքով:

ՍՈՒԼԻԿՅԱՆ. Բայց դու ոչ այդ ես անում, ոչ այն, ընդհակառակը, հյուրերից ուշ ես հանդես դուրս գալիս:

ՄԻՔԱՅԵԼ. Նշանակում է հանդեսը ինձ համար ձանձրալի է, տխուր և անտանելի: Ո՛հ, Սուլիկյա՛ն, երանի քեզ, ո՛չ կին ունես, ո՛չ քույր:

ՍՈՒԼԻԿՅԱՆ. Ուրեմն այդպես վաղ ձանձրացրե՞ց քեզ ամուսնական կյանքը:

ՄԻՔԱՅԵԼ. Վա՞ղ, երկուուկես տարի է, բարեկամ, կրում եմ նրա ծանրությունը, և արդե՞ն...

ՍՈՒԼԻԿՅԱՆ. Արդե՞ն,

ՄԻՔԱՅԵԼ. Զզվել եմ։

ՍՈՒԼԻԿՅԱՆ. Նշանակում է, դու ապերախտ ես, որովհետև քո կինը բնության երջանիկ պարգևներից մեկն է։

ՄԻՔԱՅԵԼ. Քո կարծիքով, բայց նա իմ կինն է։ Սուլիկյա՛ն, չամուսնանաս, ահա՛ իմ խորհուրդը, եթե չես կամենում քո ազատ կյանքը փակել մի նեղ և սառն շրջանակի մեջ, ինչպես ծառի արմատում թմրած մի որդն։ Իսկ եթե երբևէ զրկվես բանականությունից, կամենաս կյանքդ ուրիշի հետ կապել, ամուսնացիր գոնե մի օտարուհու, մի ֆրանսուհու, լեհուհու, վերջապես հրեուհու, բայց ոչ հայուհու հետ։

ՍՈՒԼԻԿՅԱՆ. Ինչո՞ւ։

ՄԻՔԱՅԵԼ. Որովհետև հայ կնոջ առաքինության մասին ունեցած հիվանդոտ գաղափարը անկարելի է մարսել։ Միշտ սառնարյուն, միշտ խոհեմ, միշտ մանրակրկիտ յուր ամուսնու կյանքի մասին — ահա՛ նրա հատկանիշը։ Իսկ այդ մի սոսկալի պատիժ է այն մարդու համար, որ սիրում է ապրել, զվարճանալ և ոչ թե մի նահապետական դերձակի կամ կոշկակարի կյանք վարել։ Բայց թողնենք այդ։ Այս երեկո ես մտադիր եմ թղթախաղով զբաղեցնել միտքս։ Փոխարինիր ինձ իբրև իմ տան առաջին բարեկամը, ես քեզ լիազոր իրավունք եմ տալիս։ Եղիր իմ կնոջ օգնականը, զբաղվիր և զբաղեցրու։ Քեզ եմ հանձնում նրան։

ՍՈՒԼԻԿՅԱՆ. Կաշխատեմ կատարել քո խնդիրը։ (Մեկուսի) Այս անպայման հավատը դեպի ինձ ավելի է կաշկանդում իմ սիրտը։ (Միջին դռներից գալիս է Գարեգինը)։

ՄԻՔԱՅԵԼ. Ահա՛ եկավ մի տաղտկալի փիլիսոփա։

ԳԱՐԵԳԻՆ. Պարո՛ն Սուլիկյան, իշխանուհի Մարիա Իսաևնան ձեզ է որոնում։

ՍՈՒԼԻԿՅԱՆ. Գնում եմ։ (Գնում է միջին դռներով)։

ՏԵՍԻԼ Զ.

ՄԻՔԱՅԵԼ և ԳԱՐԵԳԻՆ, հետո ՀԵՂԻՆԵ

ՄԻՔԱՅԵԼ. Էէ՛ պարո՛ն, դո՞ւք ինչու համար եք տխուր։

ԳԱՐԵԳԻՆ. Իսկ ինչո՞ւ համար պետք է ուրախ լինեի։

ՄԻՔԱՅԵԼ. Իմ տա՞նը։

ԳԱՐԵԳԻՆ. Մանավանդ ձեր տանը։

ՄԻՔԱՅԵԼ. Մանավանդ իմ տանը։ Եթե այդպես է, ո՞վ էր ձեզ ստիպում գալ այստեղ։

ԳԱՐԵԳԻՆ. Իմ քույրը և նրա դրությունը։

ՄԻՔԱՅԵԼ. Կեցցե՛ք. չլինի թե հնադարյան ասպետի դեր եք ուզում կատարել։

ԳԱՐԵԳԻՆ. Ես ուզում եմ կատարել մի հարազատ եղբոր դեր։

ՄԻՔԱՅԵԼ. Նույնպես և մի բարոյական գաղափարական մարդու պաշտոն, այնպես չէ՞:

ԳԱՐԵԳԻՆ. Այո, եթե կամենաք:

ՄԻՔԱՅԵԼ. Ուրեմն, մեծապատիվ docteur, քննեցե՛ք, հարվածեցե՛ք մեր հասարակական ախտերը:

ԳԱՐԵԳԻՆ. Բացարձակ կարող եմ հայտնել իմ կարծիքը. բոլորը, ինչ որ տեսնում եմ այս տանը, պախարակելի է:

ՄԻՔԱՅԵԼ. Ա՛խ դուք կատակ չե՞ք անում: Ոչ, պարո՛ն, եթե Բեգմուրյանների կյանքը կարող է մեկը քննադատել, այն դուք չեք: Ուրեմն համեստ եղեք, ինչպես որ ես համեստ եմ:

ԳԱՐԵԳԻՆ. Այո, չափազանց համեստ, երբ ձեր կինը այնպես տանջվում է ձեզ սիրելուց, իսկ դուք շարունակում եք կրկնապատկել նրա վիշտը: Համեստ, երբ վաղը կամ մյուս օրը ձեզ սպառնում է սնանկություն, իսկ դուք շքեղ երեկույթներ եք տալիս, Օհ՛, իշխա՛ն, գոնե խոստովանեցեք ձեր տկարությունը: (Միջին դռների մեջ երեում է Հեղինեն, որ նկատելով յուր եղբոր և ամուսնու վեճը, մոտենում է հանդարտ):

ՄԻՔԱՅԵԼ. Իմ տկարությունը ձեզ ցավեցնում է, կնշանակի, մտադիր եք ինձ ուղղել, այնպես չէ՞: Ոչ, հարգելի՛ դոքտյոր, իմ հիվանդությունը ձեր մասնագիտությանը չի վերաբերում:

ԳԱՐԵԳԻՆ. Ուղղել մի մարդու, որ ինքն իրան չի կարողանում ուղղել, անկարելի է: Ցավում եմ միայն, որ այդ ճշմարտությունը դեռ չի հասկացել նա, որ վաղուց պետք է հասկանար:

ՄԻՔԱՅԵԼ. Այսինքն ձեր քույրը:

ԳԱՐԵԳԻՆ. Այո, նա ինքը, որովհետև բոլոր այդ պախարակելի հանգամանքների ծանրությունը նրա վրա է բարձված:

ՀԵՂԻՆԵ. (Մոտենալով) Նա արդեն հասկացել է և այսօրվանից նրա բոլոր հույսերը գրեթե մեռած են: Այո՛, ես ձեզ լսում էի: Գիտեի, որ դուք սառնարյուն չեք կարող միմյանց հանդիպել, ուստի աշխատում էի, որ հանդիպելիս գոնե ես ներկա լինեմ: Բավական է, Գարեգի՛ն, մի՛ վիճիր այդ մարդու հետ, եթե այդ վեճը միայն իմ մասին է: Այս րոպեիս աղախինս տվեց ինձ դարձյալ մի սյուրպրիզ. Չէի՛ք կամենա արդյոք կարդալ, (Ցույց է տալիս Միքայելին բաց արած ծրարով մի նամակ):

ՄԻՔԱՅԵԼ. (Նամակը առնելով) Նամա՞կ: Ա՛խ, միևնույն ձեռագիրը, միևնույն մատնությունը: Ո՞վ է, վերջապես, այդ գարշելին, որ չի համարձակվում ասպարեզ դուրս գալ:

ՀԵՂԻՆԵ. Եվ երբեք դուրս չի գա, որովհետև դուք նրան հանել եք ասպարեզից: Դա մեկն է այն արարածներից, որ զոհ են դարձել ձեր հաճույքին: Նայեցեք, մի՞թե չեք որոշում ձոռագիրը:

ՄԻՔԱՅԵԼ. Արդարև, ես, կարծես, ճանաչում եմ այդ ձեռագիրը:

ՀԵՂԻՆԵ. Մի՛ վրդովվեք, տեսնում եք, ես հանգիստ եմ: Այսուհետև այդ նամակները ավելորդ են ինձ համար, պատռեցեք և այրեցեք, որովհետև ես ինքս էլ գարշում եմ դրանցից:

ՄԻՔԱՅԵԼ. Կեցցե՛ս, ուրեմն դու խելոքացել ես, շա՛տ ուրախ եմ:

ՀԵՂԻՆԵ. (Դառն ծիծաղալով) Խելոքացել եմ, այո, բայց արդեն ուշ է:

ՄԻՔԱՅԵԼ. Զգո՛ւյշ, Հեղինե՛, այդ ի՞նչ եղանակով ես խոսում, ընտանեկան տեսարանի ժամանակ չէ: Ահա հյուրերը այս կողմ են գալիս: (Միջին դռներից գալիս են մի քանի հյուրեր: Միքայելը դիմավորում է նրանց):

ՀԵՂԻՆԵ. (Գարեգինին գաղտնի): Գնանք իմ սենյակը, մի քանի խոսք ունեմ ասելու: (Գնում են դեպի աջ):

ՏԵՍԻԼ Է.

ՄԻՔԱՅԵԼ և ՀՅՈՒՐԵՐ

ԱՌԱՋԻՆ ՀՅՈՒՐ. Իշխա՛ն, չէ՞իք կամենա արդյոք չորրորդը լինել գունդը լրացնելու համար:

ՄԻՔԱՅԵԼ. Պատրաստ եմ, որովհետև մի թեթև ճակատամարտի ծարավ եմ զգում:

ԵՐԿՐՈՐԴ ՀՅՈՒՐ. Միայն քիչ վառոդով, որովհետև գրպանս բարակացավ է ընկել:

ԱՌԱՋԻՆ ՀՅՈՒՐ. Լռի՛ր, ժլա՛տ, քո բարակացավը հոգույդ մեջ է:

ՄԻՔԱՅԵԼ. Գնա՛նք, պարո՛ններ, իմ սենյակը ազատ է և հարմար: Ես չորրորդը, իսկ ո՞ւր է երրորդը:

ԵՐԿՐՈՐԴ ՀՅՈՒՐ. Նա արդեն իշխանական սենյակում սպասում է զենքերը լարած: (Գնում են դեպի աջ):

ՏԵՍԻԼ Ը.

ԳԱՐԵԳԻՆ, հետո ՀՈՌՈՄ

ԳԱՐԵԳԻՆ. (Հետ է դառնում աջ դռնից) Հեղինեն չափազանց հուզված է: Նա ինձ խնդրեց, որ մեր մորը տանեմ տուն և շուտով վերադառնամ: Անշուշտ, այս երեկո մի բան պետք է պատահի: Գործը ծանր կերպարանք է ստանում և ուրիշ կերպ չէր կարող լինել: (Միջին դռերից գալիս է Հոռոմը) Ահա և մայրիկը:

ՀՈՌՈՄ. Ես քեզ էի փնտրում, որդ՛ի:

ԳԱՐԵԳԻՆ. Ի՞նչ կա:

ՀՈՌՈՄ. Սիրտս մորմոքում է Հեղինեին տեսնելիս այս ուրախ կանանց մեջ: Ես չեմ կարող այստեղ մնալ:

ԳԱՐԵԳԻՆ. Ես հենց ուզում էի քեզ առաջարկել, որ տուն վերադառնաս: Գնա՛նք, ես քեզ կուղեկցեմ:

ՀՈՌՈՄ. Թո՛ղ մի անգամ էլ Հեղինեիս տեսնեմ, հետո:

ԳԱՐԵԳԻՆ. Նա յուր սենյակումն է. Գնանք միասին: (Գնում են դեպի ձախ):

ՏԵՍԻԼ Թ.

ՍՈՒԼԻԿՅԱՆ, հետո ՄԱՐԻԱՄ և ՕԼԳԱ

ՍՈՒԼԻԿՅԱՆ. Գնալով միջին դռերից: Մայր և աղջիկ երդվել են ինձ այս երեկո հալածել: Ոոպե հանգստություն չունեմ, այնինչ նրա հետ չհաջողեցի դարձյալ մի քանի ոոպե առանձնանալ: Ո՞հ, տկա՛ր սիրտ, այս ի՞նչ տարօրինակ մրրիկ է բարձրացել քո մեջ: (Նույն դռներից գալիս իշխանուհի Մարիամը): Դարձյալ եկավ:

ՄԱՐԻԱՄ. Երևակայեցեք, պարո՞ն Սուլիկյան, բոլոր հյուրերը Օլգային խնդրում են մի բան ածել դաշնամուրի վրա, մերժում է: Խնդրեցեք դուք էլ, կարելի է համաձայնի:

ՕԼԳԱ. (Ներս է մտնում նույն դռներից) Վերջապես, ազատվեցի, ա՛խ որքան խնդրում են, հոգիս հանեցին:

ՄԱՐԻԱՄ. Այժմ հերթը պարոն Սուլիկյանինն է: Նրան չպիտի մերժես:

ՕԼԳԱ. Ոչ, ոչ, մամա՛, նվագողը պետք է ոգևորվի, իսկ ես բոլորովին տրամադիր չեմ:

ՍՈՒԼԻԿՅԱՆ. Խնդրում եմ, օրիո՛րդ:

ՄԱՐԻԱՄ. Ուղղակի թևը վերցրեք ու տարեք դաշնամուրի մոտ: (Սուլիկյանը կատարում է նրա ասածը: Օլգան կոտրատվելով համաձայնում է: Գնում են) Աստված, տո՛ւր, որ մի օր էլ դրանց այդպես թև թևի տված եկեղեցի տանեմ: (Գնում է նրանց հետևից):

ՏԵՍԻԼ Ժ.

ՀՅՈՒՐԵՐ (ներս են մտնում աջ դռներից մի տղամարդ և մի կին), հետո Սուլիկյանը

ՏՂԱՄԱՐԴ. Դուք ինչո՞ւ դուրս եկաք դահլիճից:

ԿԻՆ. Անտանելի է մի կողմից շոգը, մյուս կողմից այդ իշխանուհի Մարիա Իսաևևան: Զարմանալի է, այդ կինը կարծում է, որ յուր աղջիկը մի երևելի զվարճություն է պատճառում մեզ յուր խաղով: (Լսվում է դաշնամուրի ձայնը): Ահա, սկսեց, ֆի՛, ջղերս գրգռվում են, Դուք ինչո՞ւ թուղթ չեք խաղում:

ՏՂԱՄԱՐԴ. Ես սիրում եմ Բեգմուրյանի հետ խաղալ, իսկ նրան արդեն որսել են:

ԿԻՆ. Ասում են շատ է տանուլ տալիս:

ՏՂԱՄԱՐԴ. Անցյալ շաբաթ երեք գիշեր միմյանց վրա տանուլ տվեց 1000 ռուբլի:

ԿԻՆ. Ուրիշի աշխատածը քամին է տանում: Բայց մի բան նկատո՞ւմ եք:

ՏՂԱՄԱՐԴ: Ի՞նչ:

ԿԻՆ. Սուլիկյանը շատ է ընկած մեր տանտիրուհու հետևից:

ՏՂԱՄԱՐԴ. Որի՞:

ԿԻՆ. Իհարկե, նոր թխած իշխանուհու:

ՏՂԱՄԱՐԴ. Հիանալի կին է:

ԿԻՆ. Այո, բայց վատ բան է անում, որ Սուլիկյանին թույլ է տալիս….. (Երևում է Սուլիկյանը) Ահա նա:

ՍՈՒԼԻԿՅԱՆ. Պարերը սկսվում են, խնդրում եմ դեպի դահլիճ: (Հյուրերը գնում են) Օ՜ վերջապես, անտանելի է իմ դրությունը: Ես ձգտում եմ դեպի մեկը, ինձ մղում են դեպի

մյուսը: Ի՞նչ անեմ արդյոք: Թողնել այս վտանգավոր ուղին ուշ է և անկարելի ինձ համար, իսկ շարունակել — ամոթալի: Ոչ, ոչ, պետք է մի ելք գտնել, ապա թե ոչ... (Գալիս է աջ դռներից Միքայելը):

ՏԵՍԻԼ ԺԱ.

ՍՈՒԼԻԿՅԱՆ և ՄԻՔԱՅԵԼ

ՄԻՔԱՅԵԼ. Դու դարձյալ միայնա՞կ ես. Կատարո՞ւմ ես տանտիրոջ պաշտոնը:

ՍՈՒԼԻԿՅԱՆ. Կարողացածիս չափ:

ՄԻՔԱՅԵԼ. Իսկ ես տխրությունից կատաղում եմ. Ես երկու հարյուր ռուբլի տանուլ տվի:

ՍՈՒԼԻԿՅԱՆ Կեցցես, ասել է մեծ հառաջադիմության մեջ ես: Միքայե՛լ, ժամանակ է, որ մի փոքր ուղղես քեզ: Ներիր, երաժշտությունը սկսվեց, ես պետք է գնամ, (Լսվում է երաժշտության ձայն և շարունակվում: Սուլիկյանը գնում է միջին դռներով):

ՏԵՍԻԼ ԺԲ.

ՄԻՔԱՅԵԼ

ՄԻՔԱՅԵԼ. «Միքայե՛լ, ժամանակ է, որ մի փոքր ուղղես քեզ», դա էլ է ասում, այո, իրավունք ունի, որովհետև ինքը չունի այնչափ ապրելու խանդ և զգացում, որքան ես: Նա մի բարեսիրտ, ազնիվ մարդ է, ուրիշ ոչինչ: Իսկ ես: Դարձյալ գնաց երկու հարյուր, և այժմ այս ողորմելի գումարը ինձ մեծ է թվում, որովհետև ես համարյա թե աղքատ եմ: Հեղինեն այլևս ոչինչ չունի: Իսկ եղբայրը հարուստ է և ինձ ատում է, նրան մոտենալ անկարելի է: Ահա դրություն. միսը կերել եմ, այժմ ոսկորը դեմ է ընկել կոկորդիս: Այդ կնոջ տխուր կերպարանքը ուրվականի պես հալածում է ինձ այս երեկո: Ահա նա, գալիս է միայնակ, չգիտեմ ինչո՞ւ կատաղում եմ նրան տեսնելիս:

ՏԵՍԻԼ ԺԳ.

ՄԻՔԱՅԵԼ ԵՎ ՀԵՂԻՆԵ

ՄԻՔԱՅԵԼ (Ձախ դռներից ներս է մտնում Հեղինեն) Բավական է, կին, մի՛ սպառի իմ համբերությունը:

ՀԵՂԻՆԵ. Ի՞նչ եք կամենում:

ՄԻՔԱՅԵԼ. Ձեր տխուր դեմքը ինձ վրդովեցնում է:

ՀԵՂԻՆԵ. Մի նայեք այդ դեմքին, խույս տվեք նրանից: Ահա, ես կարող եմ ձեզ հանգիստ թողնել: (Ուզում է գնալ դեպի միջին դռները):

ՄԻՔԱՅԵԼ. Կացեք: (Հեղինեն կանգ է առնում) Ինձ փող է հարկավոր այս երեկո, մեկին տանուլ տվի, պետք է վճարել, ունե՞ք:

ՀԵՂԻՆԵ. Երեկ վերցրիք վերջին տոմսակը, ես այժմ ոչինչ չունեմ, հասկանո՞ւմ եք, ոչինչ, նույնիսկ ապրելու ցանկություն:

ՄԻՔԱՅԵԼ, Ապրելու ցանկություն միշտ կարելի է ունենալ, միայն փող է հարկավոր։ Ասացեք, մի՞թե ոչինչ չունեք։

ՀԵՂԻՆԵ. Մի կոպեկ անգամ։

ՄԻՔԱՅԵԼ. Ուրեմն։

ՀԵՂԻՆԵ. Մենք աղքատ ենք։

ՄԻՔԱՅԵԼ. (Մի փոքր լռությունից հետո) Քո եղբայրը հարուստ է։

ՀԵՂԻՆԵ. Այո՛, մեր հոր ժառանգությանը նա դեռ ձեռք չի տվել։

ՄԻՔԱՅԵԼ. Վերցրու նրանից մի գումար, ես կվճարեմ։

ՀԵՂԻՆԵ. Վերցնե՞մ, իմ եղբորի՞ց։

ՄԻՔԱՅԵԼ. Ես պարտք եմ ուզում։

ՀԵՂԻՆԵ. Երբե՛ք և ոչ մի կոպեկ, ես իմ թշվառությունը գնեցի արդեն լիովին։

ՄԻՔԱՅԵԼ. Ես խնդրում եմ։

ՀԵՂԻՆԵ. Մերժում եմ ձեր խնդիրը։

ՄԻՔԱՅԵԼ. Աղաչում եմ։

ՀԵՂԻՆԵ. Իզուր և իզուր։ Բավական է, որքան ամոթ կրեցի նրա մոտ ։

ՄԻՔԱՅԵԼ. Ուրեմն մերժո՞ւմ եք։

ՀԵՂԻՆԵ. Դրականապե՛ս։

ՄԻՔԱՅԵԼ. Հեղինե՛, վախեցիր իմ հուսահատությունից։

ՀԵՂԻՆԵ. Ինձ համար վախենալու ոչինչ չի մնացել,

ՄԻՔԱՅԵԼ. Սպասիր, անա՛րգ մարդու ծնունդ, ես քեզ ցույց կտամ։ (Գնում է միջին դռներով)։

ՀԵՂԻՆԵ. (Մենակ) Սպառնալի՞ք, այլևս ի՞նչ փույթ։ Մեռան, մեռան իմ մեջ իմ հույսերը, որովհետև դու ջախջախեցիր իմ սիրտը։ Իսկ ես, տարաբախտս, դեռ կարծում եմ, թե նորից կարելի է կենդանություն տալ նրան և նորից ապրել վարդագույն ցնորքներով։ Աստվա՛ծ իմ, ինչո՞ւ խավարեցրել ես իմ միտքը, ինչո՞ւ չես լուսավորում նրան մի վայրկյան, ինչո՞ւ մի միջոց չես ցույց տալիս ինձ այս անելանելի դրությունից դուրս գալու համար։ Ինչո՞ւ, գոնե, չեմ կարողանում նրան ատել։ (Լսվում է երաժշտություն) Խե՛ղճ ու ողորմելի կյանք. այնտեղ զվարճանում են, իսկ այստեղ ահա իմ վիճակը, ահա իմ դրությունը։ Գոնե կարողանայի ատել նրան։ (Ներս է մտնում Սուլիկյանը)։

ՏԵՍԻԼ ԺԴ.

ՀԵՂԻՆԵ և ՍՈՒԼԻԿՅԱՆ

ՍՈՒԼԻԿՅԱՆ. Իշխանուհի, ուր դուք, այնտեղ և ես, այդ ձեր ամուսնու ցանկությունն է։

ՀԵՂԻՆԵ. Իմ ամուսնո՞ւ (Երաժշտությունը դադարում է, լսվում է ջութակի, դաշնամուրի և երգելու ձայն)։

ՍՈՒԼԻԿՅԱՆ. Այո, նա ինձ կրկին անգամ խնդրեց տանտիրոջ պարտականությունը կատարել և ձեզ զբաղեցնել։

ՀԵՂԻՆԵ. (Մեկուսի) Մի՞թե նա կամենում է ինձ փորձել։ (Բարձր) Կատարեցեք, ուրեմն, ձեր բարեկամի և ընկերոջ խնդիրը։

ՍՈՒԼԻԿՅԱՆ, Մենք կպարենք մի փոքր, առայժմ այնտեղ երգում է Օլգայի մի ընկերուհին։

ՀԵՂԻՆԵ. Ուրեմն մենք ևս կարող ենք լսել։ (Ուզում է գնալ)։

ՍՈՒԼԻԿՅԱՆ. Իշխանուհի՛։

ՀԵՂԻՆԵ. (Կանգ է առնում) Ի՞նչ եք կամենում։

ՍՈՒԼԻԿՅԱՆ. Մի՛ վարվեք ինձ հետ այդպես, ես ձեզ խնդրում եմ հատկապես։

ՀԵՂԻՆԵ. Ինչպե՞ս կկամենայիք, որ վարվեմ։ Կարծեմ, պարո՛ն Սուլիկյան, երբեք մի ամենաչնչին անքաղաքավարություն չեմ թույլ տվել ձեր վերաբերմամբ։ Ասացեք, ի՞նչ են նշանակում ձեր խոսքերը։

ՍՈՒԼԻԿՅԱՆ. Իմ խոսքե՞րը, ոչինչ, ներեցեք, իշխանուհի՛, անգիտակցաբար արտասանեցի։ (Մեկուսի) Ես շփոթվում եմ, չգիտեմ — ինչ խոսեմ։

ՀԵՂԻՆԵ. Փույթ չէ, այդ կարող է պատահել։ Դուք, ինչպես երևում է, շատ պարելուց հոգնել եք։ Հանգստացեք մի փոքր, դուք մինչև անգամ գունատված եք։ (Ուզում է գնալ)։

ՍՈՒԼԻԿՅԱՆ Ե՞ս, ոչ, հանգիստ եմ, բայց իշխանուհի՛, մի՛ շտապեք գնալու։ (Նայում է խորհրդավոր)։

ՀԵՂԻՆԵ. (Դիտելով նրան ոտից մինչև գլուխ, մեկուսի) Ես չեմ սխալվում, սիրտս վաղուց էր զգում, պետք է, ուրեմն, վաղօրոք սառցնել այդ կայծը նրա մեջ։ (Բարձր) Պարո՛ն Սուլիկյան, ասացեք, ճշմարի՞տ է, որ դուք իմ ամուսնու մտերիմ ու անկեղծ ընկերն եք։

ՍՈՒԼԻԿՅԱՆ. Այո, ճշմարիտ է։

ՀԵՂԻՆԵ. Ուրեմն, հավատարիմ մնացեք ձեր ընկերական սուրբ պարտականությանը, դուք վատ մարդ չեք։

ՍՈՒԼԻԿՅԱՆ. (Մեկուսի) Նա արդեն հասկացել է, արիացի՛ր, եթե մարդ ես։ (Բարձր) Իշխանուհի՛, ես հավատարիմ եմ։ Բայց կա մի ուրիշ զգացում, որ ավելի բարձր է, քան ընկերականը։ Թույլ կտա՞ք շարունակել։

ՀԵՂԻՆԵ. Երբեք, առանց խոսքերի էլ միտքը բավական պարզ է ինձ համար։ Կարծեմ լռելը ավելի խոհեմություն է։

ՍՈՒԼԻԿՅԱՆ. Սակայն ես չեմ կարող լռել, ես այլևս ուժ չունեմ։ Օ՜, մի՛ այդպես վատ նայեք ինձ վրա, ես դժբախտ եմ։ Գիտեմ, որ իմ զգացումը դատապարտելի է ամեն մի բարոյական մարդու աչքում։ Այո, Միքայելը իմ ընկերն է, թեև ոչ յուր բարքով. այո, դուք նրա ամուսինն եք և զավակ ունեք; Բայց ի՞նչ անեմ, ես անզոր եմ դիմանալ այն զգացմանը, որ ահա քանի ժամանակ է ինձ բռնի ուժով մղում է դեպի ձեզ։ (Երաժշտության ձայն)։

ՀԵՂԻՆԵ. Դադարեցեք, պարո՛ն, դադարեցեք։ Այնքան հիմար չեմ որ այդ չհասկանայի։ Ես վաղուց էի զգում ձեր միտքը։ Բայց ապահով կացեք, բնավ վատ գաղափար չեմ ունեցել ձեր

մասին: Ցավում եմ միայն, որ ձեր մեջ այդ զգացումը բավական առաջացել է: Փույթ չէ. դուք չափահաս տղամարդ եք, խելացի եք, կարող եք դյուրությամբ զսպել ձեզ: Աշխատեցեք ուրեմն զսպել, և ես խոսք եմ տալիս՝ հարգել ձեզ միշտ իբրև մի բարոյական, մի ազնիվ մարդու: Ուրիշ զգացում դեպի ձեզ չեմ կարող ունենալ, այս է իմ վերջին խոսքը: Իսկ եթե գոհ չեք իմ հարգանքով, եթե կշարունակեք ձեր սխալ ընթացքը, այն ժամանակ սրտի ցավոք ստիպված կլինեմ խնդրել ձեզ, որ դադարեք այս տունը այցելելուց: (Գնում է միջին դռներով, ուր նա հանդիպում է Օլգային: Նայում են միմյանց):

ՍՈՒԼԻԿՅԱՆ. (Միայնակ) Խորտակվեց իմ ցնորքը առաքինության մի խիստ, բայց արդարացի հարվածով, դժբախտացած, առանց լիովին զգալու սիրո հրապույրը: Բայց ո՞ւր է իմ խելքը, իմ սառնությունը, վերջապես իմ ինքնասիրության և պատվի զգացումը: (Օլգան մի քանի քայլ առաջ է գալիս, խորհրդավոր կերպով նայելով Սուկյանին):

ՏԵՍԻԼ ԺԵ.

ՍՈՒԼԻԿՅԱՆ և ՕԼԳԱ

ՕԼԳԱ. Պարո՞ն Սուլիկյան, ես ձեզ սպասում էի կադրիլին:

ՍՈՒԼԻԿՅԱՆ. (Սթափվելով) Ա՜հ, այդ դո՞ւք եք, ներեցեք:

ՕԼԳԱ. Ներելը արդեն ուշ է, կադրիլը վերջացավ, շուտով կսկսվի ընթրիքը:

ՍՈՒԼԻԿՅԱՆ. Գնա՜նք, օրիո՜րդ: (Առաջարկում է թևը):

ՕԼԳԱ. Ոչ. դուք գնացեք, ես այստեղ եմ ուզում մնալ:

ՍՈՒԼԻԿՅԱՆ. (Մեկուսի) Անիծյա՛լ, ի՜նչ սատանայական հայացք ունի: (Գնում է միջին դռներով):

ՕԼԳԱ. (Միայնակ) Ա՜ռնեցի ձեզ, օձե՜ր: Այժմ, գեղեցի՜կ իշխանուհի, դու իմ ձեռքումս ես: Դու առանձնացած շշնջում ես նրա հետ: Օհ՜, կատաղությունից շունչ առնել չեմ կարող... սատանա՜ կին, անպիտա՜ն Սուլիկյան: (Գալիս է միջին դռներից Մարիամը):

ՏԵՍԻԼ ԺԶ.

ՕԼԳԱ և ՄԱՐԻԱՄ, հետո ՄԻՔԱՅԵԼ

ՄԱՐԻԱՄ. Օլգա՜ , ժամանակ է, ես հրավիրեցի հյուրերին ընթրիքի նստել: Գնա՜ դահլիճ: Ես ուզում եմ այստեղ մի փոքր հանգստանալ: Դու բարկացա՞ծ ես:

ՕԼԳԱ. Ոչ թե բարկացած, այլ կատաղած եմ:

ՄԱՐԻԱՄ. Ինչո՞ւ:

ՕԼԳԱ. Հետո, հետո կիմանաս: (Գնում է դահլիճ):

ՄԱՐԻԱՄ. (Միայնակ) Հասկանում եմ, Սուլիկյանը անխիղճ է և անամոթ: (Աջ դռներից գալիս է Միքայելը):

ՄԻՔԱՅԵԼ. Մամա, ես բոլորովին ձանձրացա, ընթրիքը պետք է շուտ վերջացնել:

ՄԱՐԻԱՄ. Իսկ ես շվարված եմ:

ՄԻՔԱՅԵԼ. Պատճառը:

ՄԱՐԻԱՄ. Պատճառը, որ կինդ Սուլիկյանին գցել է իր հետևից, մի որպե չի թողնում Օլգայի հետ:

ՄԻՔԱՅԵԼ. Ես ինքս եմ խնդրել նրան, որ տանտիրոջ պաշտոն կատարի:

ՄԱՐԻԱՄ. Բայց նրանք չափից անցնում են, թշնամիները կարող են բամբասել:

ՄԻՔԱՅԵԼ. Թող խոսեն, ինչ որ ուզում են:

ՄԱՐԻԱՄ. Ի՞նչ, դու ընտանիքիդ պատվի մասին չե՞ս մտածում:

ՄԻՔԱՅԵԼ. Ի՞նչ ընտանիք, դա դժոխք է ինձ համար, դժոխք... (Գնում է միջին դռներով):

ՄԱՐԻԱՄ. Դժբախտություն, անպատճառ մի դժբախտություն պետք է պատահի:

ՕԼԳԱ. (Միջին դռներից գալով) Մամա՛, շտապի՛ր, հյուրերից շատերը գնում են:

ՄԱՐԻԱՄ. Օ՛հ, աստվա՛ծ, չգիտեմ, որ մեկի մասին մտածեմ: (Գնում է միջին դռներով):

ՕԼԳԱ. (Մեկուսի) Հազիվ կարողանում եմ ինձ զսպել, որ այս մատներովս չխեղդեմ այն կնոջ սպիտակ կոկորդը: (Գնում է մոր հետևից):

ՏԵՍԻԼ ԺԷ.

ՀՅՈՒՐԵՐ (աջ և միջին դռներից գալիս են կանայք և տղամարդիկ և միմյանց հանդիպում)

ՏՂԱՄԱՐԴ. Ինչո՞ւ դուք սեղան չնստեցիք:

ԿԻՆ. Իսկ ինչու դո՞ւք չնստեցիք:

ՏՂԱՄԱՐԴ. Իմ ստամոքսը խանգարված է:

ԿԻՆ. Ինչպես և Սուլիկյանի սիրտը:

ՏՂԱՄԱՐԴ. Ի՞նչ եք ուզում ասել:

ԿԻՆ. Շատ բան:

ԵՐԿՐՈՐԴ ՏՂԱՄԱՐԴ. (Մոտենալով առաջին տղամարդիկ) Ես հարբած եմ, գնանք:

ԱՌԱՋԻՆ ՏՂԱՄԱՐԴ. Ե՞րբ խմեցիր, որ հարբես:

ԵՐԿՐՈՐԴ ՏՂԱՄԱՐԴ. Մյուս սենյակում ես իմ բանը տեսա, շարտրյոզ, բենեդիկտին, աբրիկոտին խառնեցի միմյանց: Օ՜ , գլուխս պտտում է, հա՛յդա, բարե՛կամ, թե չէ բանս բուրդ է:

ԱՌԱՋԻՆ ՏՂԱՄԱՐԴ. (Կնոջը) Ցտեսություն:

ԿԻՆ. Ցտեսություն: (Հյուրերը գնում են): Հարբել գիտեն, իսկ կանանց հետ սիրով վարվել-երբեք: (Գնում է. սենյակը դատարակվում է, դահլիճից լսվում է երաժշտության ձայն: Աջ դռերից գալիս է Գարեգինը):

ՏԵՍԻԼ ԺԸ.

ԳԱՐԵԳԻՆ, հետո ՀԵՂԻՆԵ

ԳԱՐԵԳԻՆ. (Աջ դռներից գալով) Այստեղ ամեն ինչ կեղծ է և ստությամբ լի: Կանանց դուր գալու համար պետք է շողոքորթել, գովել մեկի ձիրքը, որից նա զուրկ է, երկրորդի գեղեցկությունը, որ նա չունի: Մայրերը, բռնած աղջկերանց ձեռներից, աջ ու ձախ են առաջարկում, հայրերը խաբում են կանանց: Բարեկամը կեղծում է բարեկամին, ազգականը ստորանում է հարուստ ազգականի առաջ, ստորացնում է աղքատին: Ընկերը քաղցր խոսքերով դատարկում է ընկերոջ գրպանը կանաչ սեղանի մոտ: Այո, մեր կյանքը աղավաղվել է, արտաքինը խաբուսիկ է, խորքում տիրում է կոշտ, կոպիտ և կիսավայրենի հոգին: Ո՞վ պետք է ուղղի այդ բոլորը, ո՞ր սերնդին է վիճակված բարեփոխել այդ քայքայված մեքենան: Ներս է գալիս միջին դռներից Հեղինե):

ՀԵՂԻՆԵ. Քո առանձնությունը աչքի է ընկնում:

ԳԱՐԵԳԻՆ. Այնտեղ ես տխրում եմ, այստեղ հանգիստ եմ, իսկ ինչո՞ւ դու խույս ես տալիս հասարակությունից:

ՀԵՂԻՆԵ. Մի՛ հարցնի, ներս եմ մտնում թե չէ — ամենքը իրանց հայացքը ուղղում են ինձ վրա: Զգում եմ, որ բոլորը ինձ ծաղրում են, բոլորը խղճում, այս է խաբված, անարգված և ամոթի դատապարտված ամուսնու վիճակը:

ԳԱՐԵԳԻՆ. Հանգստացի՛ր, եթե ոչ դու բոլորովին կսպառես քո ուժերը: Գնա՛նք, միասին նստենք սեղանի մոտ, կարծեմ ընթրիքը վերջանալու վրա է: (Թևը առնում է և տանում դահլիճ):

ՏԵՍԻԼ ԺԹ.

ՍՈՒԼԻԿՅԱՆ (միայնակ)

ՍՈՒԼԻԿՅԱՆ. (Դուրս գալով աջ դռներից) Սարսափելի՜ կին, որքան նա ինձ հրում է, այնքան ես մղվում եմ դեպի նա: Ես հետևում եմ նրան ցնորվածի պես, այնինչ հյուրերն արդեն շշնջում են իմ մասին: Արդեն ընթրիքը վերջացավ: Ծառաները հավաքում են սեղանը, հյուրերը ցրվում են, Միքայելը նրանց չի ստիպում մնալ, (Երաժշտությունը դադարում է) Ահա երաժշտությունն էլ դադարեց, օհ՜, ես ինչպես բաժանվեմ նրանից: (Ներս են մտնում Մարիամը, Օլգան, Գարեգինը, Միքայելը ե Հեղինեն: Սուլիկյանը դառնում է Մարիամին): Իշխանուհի՜, ցտեսություն:

ՄԱՐԻԱՄ. Վաղը ճաշին անպատճառ մեզ մոտ եք, (Սուլիկյանը գլուխ է տալիս և հեռանալու միջոցին մի մելամաղձոտ հայացք է ձգում Հեղինեի վրա: Վերջինը երեսը հետ է դարձնում: Օլգան նկատում է այդ բանը և զայրանում):

ՏԵՍԻԼ Ի.

ՆՐԱՆՔ, առանց ՍՈՒԼԻԿՅԱՆԻ

ՄԱՐԻԱՄ. (Նստելով բազկաթոռի վրա) Այդքան ծախսք և այդպես անհաջող:

ՕԼԳԱ. Թո՛ղ ուրախանան անհաջողության պատճառ լինողները: Մեր ամենամեծ թշնամիները մեր տանն են:

ՀԵՂԻՆԵ. (Մեկուսի) Դարձյալ ինձ է ուզում խայթել:

ՄԱՐԻԱՄ. Ես էլ նկատում եմ այդ բանը: (Խորհրդավոր նայում է Հեղինեին և Գարեգինին):

ԳԱՐԵԳԻՆ. Ցտեսություն. (Ուզում է գնալ):

ՄԻՔԱՅԵԼ Կացեք, խնդրեմ, ես ձեզ հետ մի քանի խոսք ունեմ: Օլգա՛, խնդրում եմ գնաս սենյակդ:

ՕԼԳԱ. Միթե ամեն տեղ ե՛ս եմ միայն ավելորդը:

ՄԻՔԱՅԵԼ. Գործը քեզ չէ վերաբերում, Գնա, խնդրեմ:

ՕԼԳԱ. (Մեկուսի) Ես զգում եմ, թե ինչի մասին պետք է խոսեն: Կթաքնվեմ դռների հետևում և կլսեմ: (Գնում է դեպի ձախ):

ՏԵՍԻԼ ԻԱ.

ՆՐԱՆՔ, առանց ՕԼԳԱՅԻ

ՄԻՔԱՅԵԼ. Պարոն, մտադիր եք այսուհետև ինձ ամեն անգամ վիրավորե՞լ :

ԳԱՐԵԳԻՆ. Թույլ տվեք կանայք գնան հանգստանալու, մենք կարող ենք առանձին խոսել:

ՄԻՔԱՅԵԼ. (Բարկացած) Ես ձեզանից պատասխան եմ պահանջում:

ՄԱՐԻԱՄ. Միքայե՛լ...

ՄԻՔԱՅԵԼ. Թողե՛ք, մա՛յր, ես բավական համբերեցի: Երեք շաբաթ է այս պատանին ինձ շարունակ վիրավորում է, Իսկ այս երեկո չափից անցավ: Նա ինձ նախատեց իմ սեփական տանը: Լսեցե՛ք, պարո՛ն, ես բնավ մտադիր չեմ իմ գլխին ձեզ նման վերահսկողներ ունենալ: Ամուսնանալով ձեր քրոջ հետ, ես գործեցի մի աններելի սխալ, այո, չպիտի ամուսնանայի: Բայց անցյալը վերադարձնել չի կարելի: Այժմ նա իմ կինն է, ես նրա մարդը, իսկ դուք երրորդ անձնավորություն եք: Ուրեմն առաջարկում եմ, պարո՛ ն, վերջին անգամ, կամ զսպեցեք ձեզ, կամ բարեհաճեցեք ձեր մոր հետ դադարել իմ տուն այցելելուց:

ՀԵՂԻՆԵ. (Մեկուսի) Ահա մի հարված ևս, նա վռնդում է իմ եղբորը և մորը, իսկ ես դեռ կարողանում եմ տանել այս նախատինքը: Սի՛րտ իմ, հղացրու քո մեջ մի խորթ ատելություն դեպի այդ մարդը:

ԳԱՐԵԳԻՆ. Իշխա՜ն, ես ընդունում եմ ձեր առաջարկությունը: Լսեցի՛ր, Հեղինե՛, ուրեմն մնացիր բարև իմ դժբա՛խտ քույր, բայց ես քեզ անպաշտպան չեմ թողնի: (Ուզում է գնալ):

ՀԵՂԻՆԵ. Ո՛չ, ես չեմ թողնի, որ դու այդպես անարգված գնաս իմ տնից: Նա հուզված է, նա ինքը չգիտե ինչ ասաց, նա քեզանից ներողություն կխնդրի:

ՄԻՔԱՅԵԼ. Ներողությո՞ւն, մի հանդուգն պատանո՞ւց, երբե՛ք:

ՀԵՂԻՆԵ. Ո՛չ. այդ արդեն չափից դուրս է, այդ արդեն անկարելի է, անպատվել իմ եղբորը, և նրա համար, որ նա սիրում է ի՞նձ, յո՞ւր քրոջը : Վերջին անգամ աղերսում եմ, Միքայե՛լ, խնայի՛ր ինձ:

ՄԻՔԱՅԵԼ. Վերջին անգամ եմ ասում, Հեղինե՛, որ ես կատակ չեմ անում, և եթե այդպես կշարունակեք, կդիմեմ ավելի կոպիտ միջոցների: (Զանգակը խփում է, Սիմոնը գալիս է): Այս տղին ճանապարհ դիր:

ՀԵՂԻՆԵ. (Կանգնելով մեջտեղը ծառայի և Գարեգինի, որ հազիվ զսպում է յուր կատաղությունը, ծառան հետ է քաշվում և մինչև տեսարանի վերջը մնում է բեմի վրա): Ա՜խ, ուրեմն, դու երդվել ես այս գիշեր ինձ վերջին հարվածը տալ: Եթե այդպես է, իմ եղբայրը այս տնից առանց ինձ ոտ չի դնի: Այո, ես կազատեմ քեզ քո անտանելի լծից, որովհետև ինձ ոտնատակ անելուց, իմ ամուսնական կապը պղծելուց, իմ վերջին հույսս խորտակելուց հետո, ես ավելորդ եմ քեզ համար: Գարեգի՛ն, տուր քո ազնիվ թևը տարաբախտ քրոջդ: Հեռացրու նրան այդ դժոխային կյանքից, տար նրան դեպի երջանիկ մահ:

ԳԱՐԵԳԻՆ. Արիացի՛ր, քո՛ւյր, դու անբախտ չես մնա:

ՄԻՔԱՅԵԼ. Հա՛, հա՛, հա՛, գեղեցիկ զույգ, առաքինության օրինակելի տիպարներ: Ես ձեզ խաբեցի, տիկի՛ն, ես ձեզ դավաճանեցի, այնպես չէ՞: Իսկ ի՞նչ անուն տամ, պարկե՛շտ ամուսին, ձեր այս գիշերվա վարմունքին իմ ընկերոջ հետ:

ՀԵՂԻՆԵ. Աստվա՛ծ իմ, ի՞նչ եք ուզում ասել:

ՄԻՔԱՅԵԼ. Այն, որ դուք ավելի ոտնատակ արիք իմ անունը և այն էլ իմ սեփական տանը: Բոլոր հյուրերը զգացին այդ, բոլորը այդ մասին էին շշնջում, և այսուհետև Սուլիկյանի անունը ձեր անվան հետ պետք է հիշվի փողոցներում:

ՀԵՂԻՆԵ. Ե՞ս, Սուլիկյա՞նը:

ՄԱՐԻԱՄ. Ի՞նչ եմ լսում, ի՞նչ անպատվություն:

ՄԻՔԱՅԵԼ. Այո՛, դուք և Սուլիկյանը:

ԳԱՐԵԳԻՆ. Հետ վերցրեք ձեր զրպարտությունը, ապա թե ոչ ես պատասխանատու չեմ ինձ համար:

ՕԼԳԱ. (Որ մի քանի վայրկյան առաջ դուրս է գալիս և դռների առաջ կանգնում) Զրպարտություն չէ, այլ իրողություն, ես կարող եմ ապացուցանել:

ՀԵՂԻՆԵ. Ա՛խ... (ուշաթափվում է և ընկնում եղբոր գիրկը):

ԳԱՐԵԳԻՆ. Ստոր մարդ. դուք կստանաք ձեր վարձը:

Վարագույր

4-ՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

(Հոռոմի տանը մի ուրիշ սենյակ: Վարագույրը բարձրանալիս բեմը մի փոքր ժամանակ դատարկ է մնում: Հետո ձախ դռներից դուրս է գալիս Անյուտան):

ՏԵՍԻԼ Ա.

ԱՆՅՈՒՏԱ, հետո ՀՈՌՈՄ

ԱՆՅՈՒՏԱ. Իշխանուհին, կարծեմ, չի զարթնել, Խե՜ղճ կին, ինչքան տանջվում է: Թե չես սիրում մարդուդ, հեռացար, մոռացիր պրծիր, էլ ի՞նչ կա, չե՞ս կարող քեզ համար նոր մարդ գտնել, աշխարհը չորացե՞լ է: (Նույն դռներից գալիս է Հոռոմը):

ՀՈՌՈՄ. (Ինքն իրեն): Քնի՛ր խե՜ղջ զավակս, քանի՜ անքուն գիշերներ անցկացրիր: Ասում էի կտխրի, հետո կսովորի, կմոռանա, բայց ընդհակառակը:

ԱՆՅՈՒՏԱ. Տիրուհի՛:

ՀՈՌՈՄ. (Սթափվելով) Ա՛հ, դու ես:

ԱՆՅՈՒՏԱ. Իշխանուհին ինչպե՞ս է:

ՀՈՌՈՄ. Քնած է, զգո՛ւյշ ման եկ, որ չզարթնի: Հա, ինչո՞ւ ես այդպես նայում:

ԱՆՅՈՒՏԱ. Ուզում էի մի բան հարցնել:

ՀՈՌՈՄ. Ասա՛:

ԱՆՅՈՒՏԱ. Այսօր երեխային պե՞տք է տանել հոր տունը:

ՀՈՌՈՄ. Երեխայի՞ն, այո, մոռացել էի:

ԱՆՅՈՒՏԱ. Նրանք երկու օրով են տվել, իսկ այսօր հինգերորդ օրն է:

ՀՈՌՈՄ. Թեկուզ հինգերորդ տարին, ի՞նչ կա, երեխան իր մոր մոտ է:

ԱՆՅՈՒՏԱ. Օհ՛, եթե իմանաք իշխանուհու սկեսուրը ինչպես կատաղած է: Երեկվանից դես չորս անգամ մարդ է ուղարկել, խաբելով ճանապարհ եմ դրել:

ՀՈՌՈՄ. Անաստվածնե՛ր, բավական չէ աղջկաս խայտառակեցին ամբողջ քաղաքում, երեխային էլ են խլում ձեռքից: Արդա՛ր աստված, դու նրանց դատն անես:

ԱՆՅՈՒՏԱ. Աստված արդեն նրանց սկսել է պատժել:

ՀՈՌՈՄ. Ե՞րբ, ինչպես:

ԱՆՅՈՒՏԱ. Տիրուհի, ներեցեք, ես առաջ ձեր աղջկան չէի սիրում, բայց երբ ճանաչեցի նրան, օհ՛, շատ սիրեցի, Բեգմուրանների թողի ու նրա հետ եկա այս տուն: Հիմա երբեմն գնում եմ նրանց ծառաների մոտ: Սիմոնը ամեն բան պատմում է ինձ: Իշխանը սնանկացել է, ծառաների ամսականը չի վճարում, կառապանը դուրս է եկել, ուզում են ձիերը և կառքը ծախեն: Օլգան ամեն օր լաց է լինում, իսկ պառավ իշխանուհին անդադար հայհոյում է մեր իշխանուհուն:

ՀՈՌՈՄ. Իսկ ի՞նքը, իմ անանուն փեսա՞ն:

ԱՆՅՈՒՏԱ. Նրա մասին մի՛ հարցնեք: Բոլորովին փչացել է, հիմա էլ ասում են մեր իշխանուհու տված նվերներն է ծախում ու շռայլում:

ՀՈՌՈՄ. Ուրեմն հույս չկա՞, որ սա մի օր խելքի կգա:

ԱՆՅՈՒՏԱ. Ի՞նչ, մի՞թե այսուհետև դուք հույս ունեք:

ՀՈՌՈՄ. Օհ՛, ես ինքս էլ չգիտեմ ինչ եմ ասում: (Միջին դռներից գալիս է Զարբաբյանը):

ԱՆՅՈՒՏԱ. (Մեկուսի) Էլի եկավ այս խրտվիլակը: Ամեն օր գալիս է ու չար լուրերով ցավ ավելացնում: (Գնում է դեպի ձախ):

ՏԵՍԻԼ Բ.

ՀՈՌՈՄ և ՉԱՐԲԱԲՅԱՆ

ՉԱՐԲԱԲՅԱՆ. Աստուծո բարի լույսը այս տանը, քույրիկս, ինչպե՞ս եք, դուք, Գարեգինը, Հեղինեն:

ՀՈՌՈՄ. Ապրում ենք մի կերպ:

ՉԱՐԲԱԲՅԱՆ. Ինչո՞ւ մի կերպ, քույր, ես խոսքը ճակատին կասեմ, շնորհակալ եղեք աստծուց, տուն, տեղ, հարստություն, ուսում առած որդի: Ի՞նչ կա՝ մտածում եք անցած բաների մասին, մենք մարդ ենք, ծնվել ենք ապրեր, ուրախանալու ու տանջվելու համար: Դեռ լավ է, որ կնիկ եք, տանն եք նստած, ապա ի՞նչ կլիներ ձեր դրությունը, եթե տղամարդ լինեիք, այն էլ ինձ նման հասարակական մարդ, Ի՞նչ կանեիք չար լեզուների դեմ. ով գիտե այս քաղաքից կփախչեիք, այնքան խոսք կլսեիք:

ՀՈՌՈՄ. Ուրեմն էլի խոսո՞ւմ են, էլի մեր մասի՞ն:

ՉԱՐԲԱԲՅԱՆ. Է՜հ, թողեք, աստված սիրեք, էլի արյունս սկսում է եռ գալ սամովարի ջրի պես, երեկ երեկոյան կլուբում շիշը բարձրացրի, որ մեկի ճակատին տամ: Խցանը դուրս եկավ, ոտից մինչև գլուխ գինու մեջ թաթախվեցի: Չթողին մեծ մարդիկ, որ ջարդ ու փշուր անեմ.

ՀՈՌՈՄ. Ո՞ւմ, ի՞նչ պատճառով:

ՉԱՐԲԱԲՅԱՆ. Ընկերներս ընթրում էին, իսկ ես ծխում էի, որովհետև փող չունեի, որ ես էլ ընթրեմ: Այդ ժամանակ երևեցավ Սուլիկյանը. մեկը մոտեցավ մեզ, շատ պատվավոր մարդ է, Սուլիկյանին ցույց տալով ասաց «վա՛յ հերոսը» ու սկսեց ծիծաղել: Արևդ վկա, այնպես կատաղեցի, որ ուզում էի ատամներովս կրծոտեմ ամեն բան, մանավանդ շատ էլ քաղցած էի: Այն պատվելի մարդը մեկ էլ ծիծաղեց, երեսիս մտիկ տալով ու այն ժամանակ Չարբաբյանը այսպես թռավ տեղից (Վեր է թռչում տեղից) ու աչքերը պտույտ տալով, ասաց:

ՀՈՌՈՄ. Հանգիստ նստեցեք ու պատմեցեք:

ՉԱՐԲԱԲՅԱՆ. Պատվելի՜ պարոն, շիշը եկավ գլխիդ... Ասացի ու շիշը բարձրացրի, հանկարծ տեսնեմ ճակատս պաղեց... Այ, քույրիկ, տեսեք գինու տեղը կրծքիս վրա է: Բայց ոչ, այսօր շորերս փոխել եմ: Այդպես, քույրիկս: Հա, այսօր էլ իշխանին տեսա, աստվա՜ծ վկա: ուզում էի դանակով անիրավի կողքը ծակեմ: Բայց մեկ էլ ասացի ի՞նչ օգուտ, գործը կմեծացնեմ և Հեղինեիս անունը հասարակության բերանից դատարանին կանցնի:

ՀՈՌՈՄ. Օ՜, աստված սիրեք, այդպիսի բան չանեք:

ՉԱՐԲԱԲՅԱՆ. Հանգիստ կացեք, չեմ անի, առանց այն էլ մեկէլ օրը անպիտանի մեկը լրագրում գրել էր:

ՀՈՌՈՄ. Լրագրո՞ւմ:

ՉԱՐԲԱԲՅԱՆ. Հապա՛, խեղճ կին, աշխարհից տեղեկություն չունեք. Մարտին Մարտինիչ Չարբաբովը եթե չլիներ, դուք ինչ կիմանայիք: Հեղինեի մասին մի մեծ ֆելիետոն, տակին ստորագրած «Չար լեզու»: Անունները փոխված էին, բայց պարզ էր, որ խոսքը Հեղինեիս մասին է: Կլուբում համարը ձեռքից ձեռք էր անցնում: Սուտ-մուտ, զրպարտություն, բալ, համբույր: էլ ինչ ասեմ, հազար ու մի կեղտոտ, բաներ: Այսօր խմբագրին բուլվարում տեսա, ձեռքս քոր եկավ, ուզեցի մեկ երկու հասցնեմ, բայց ասացի կգնա ավելի վատ բան կգրի:

ՀՈՌՈՄ. Մեղա՛ քեզ. աստվա՜ծ, ես ինչ մեղք եմ գործել, որ ինձ այսպես պատժում ես: (Միջին դռներից գալիս է Գարեգինը):

ՁԱՐԲԱԲՅԱՆ. (Մեկուսի) Բանս բուրդ է, սա ինձ ատում է բարև: (Խոնարհ գլուխ է տալիս ու հետ քաշվում երկյուղած):

ՏԵՍԻԼ Գ.

ՆՐԱՆՔ և ԳԱՐԵԳԻՆ

ԳԱՐԵԳԻՆ. Դուք այստե՞ղ եք, և այդպես վա՞ղ: Երևի, շատ ախորժելի լուրեր եք բերել այս տառապյալ կնոջ մխիթարության համար:

ՁԱՐԲԱԲՅԱՆ. Ոչ, այնպես եկա ձեր առողջությունն իմանալու: Կարելի է դուք չեք ուզում, որ ձեր տուն գամ: Լավ, չեմ գա այսուհետև, որովհետև ես ճշմարտախոս մարդ եմ, խոսքը ճակատին կասեմ:

ԳԱՐԵԳԻՆ. Կարող եք այցելել մեզ, բայց մի՛ վրդովեք ամեն օր իմ մոր և քրոջ հանգստությունը ձեր չար լուրերով: Թողեք այդ վատ պաշտոնը, ապա թե ոչ խնդրեմ ձեռք վերցնեք այս տնից:

ՁԱՐԲԱԲՅԱՆ. Քույրի՛կ, լսո՞ւմ եք, նա ինձ վռնդում է այս տնից, ինձ, ձեր եղբորը, ձեր անկեղծ բարեկամին, ուրեմն երեկվա շիշը ոչի՞նչ:

ԳԱՐԵԳԻՆ. Ես ատում եմ մի ծույլ, անգործ, բայց առողջ տղամարդի, որը բամբասանքով է պարապում: Եթե փողի համար եք գալիս, ընդունեցեք ինձանից մի թոշակ, բայց մի պղտորեք մեր կյանքը: :

ՀՈՌՈՄ. Որդի, ի՞նչ կոշտ ես խոսում, ամոթ չէ՞, նա մեզ սիրում է:

ՁԱՐԲԱԲՅԱՆ. Օրհնյալ լինեք, բարեկա՛մ, օրհնյալ լինի ձեր հայրն էլ: Հանգուցյալը խելոք մարդ էր, ես խոսքը ճակատին կասեմ, ուրիշներին կողոպտեց, որբերի կտակը քանդեց, չորս տարի Մեթեխում նստեց, որ ձեզ համար հարստություն թողնի: Գնում եմ, մի՛ վախենաք, ձեր հացը ինձ հարկավոր չի, ես խոսքը ճակատին կասեմ... (Գնում է հետ-հետ):

ՏԵՍԻԼ Դ.

ՆՐԱՆՔ, առանց ՁԱՐԲԱԲՅԱՆԻ

ԳԱՐԵԳԻՆ. (Մեկուսի) Աստվա՛ծ իմ, դա էլ է անարգում հանգուցյալին, հա՛յր իմ, այս ինչ հիշատակ թողիր:

ՀՈՌՈՄ. Ա՛խ, որդի՛, շատ վատ բան արիր:

ԳԱՐԵԳԻՆ. Ուրիշ կերպ վարվել չի կարելի այդպիսիների հետ: Բայց թողնենք այդ. Հեղինեն զարթնե՞լ է:

ՀՈՌՈՄ. Դեռ ոչ: Ո՞րտեղ էիր գնացել այդպես վաղ:

ԳԱՐԵԳԻՆ. Մի հմուտ բարեկամի մոտ Հեղինեիս դրության մասին խորհրդակցելու: Գործը քանի գնում վատանում է: Հաշտվել, իհարկե, չի կարելի: Այդ ո՛չ Հեղինեն է կամենում, ո՛չ ես, ո՛չ էլ, հուսով եմ, դու կկամենաս, մայրի՛կ:

ՀՈՌՈՄ. Ե՞ս, ինչո՞ւ, ուրիշ էլ ի՞նչ միջոց կա մարդկանց բերանը կապելու համար:

ԳԱՐԵԳԻՆ. Ամեն միջոց ներելի է Հեղինեի համար, բացի Բեգմուրյանների տունը ոտ դնելուց: Այդ վճռված է Հեղինեի ազատ կամքով: Մնում է երեխայի հարցը — ահա գործի դժվար կողմը: Երեխային մեզ չեն տալիս ո՛չ հայրը և ո՛չ մեծ մայրը: Նրանք մինչև անգամ վճռել են այսուհետև մի քանի օրով էլ չուղարկել իր մոր մոտ: Օրենքի օգնության դիմել չի կարելի, որովհետև օրենքը հոր կողմն է, քանի որ նա հանձն չի առնում յուր հանցանքը: Իսկ Հեղինեն առանց զավակի չի կարող ապրել: Ուղիղն ասած, ես արդեն վախենում եմ նրա մասին: Միշտ սենյակում փակված, միշտ ուղեղը լարված մի ծանր մտքով, նա վերջ ի վերջո կարող է հոգեկան հիվանդություն ստանալ:

ՀՈՌՈՄ. Ուրեմն մնում է, որ էլի մի կերպ հաշտվի մարդու հետ: Իմ հույսս այդ է, որդի՛, եթե չլինի, ես կգժվեմ: Չեմ կարող դիմանալ հասարակության բամբասանքին:

ԳԱՐԵԳԻՆ. Լռի՛ր, մայրի՛կ, այդ մասին ո՛չ մի խոսք: Ես հույս ունեմ, որ Հեղինեն կարհամարհի իր մասին տարածված կեղտոտ լուրերը, պետք է միայն ժամանակ տալ նրան: Լսիր, ես մի բան եմ վճռել, դու պետք է օգնես ինձ:

ՀՈՌՈՄ. Ի՞նչ բանում, ասա:

ԳԱՐԵԳԻՆ. Հեղինեն պետք է ճանապարհորդի. այդ ամենալավ միջոցն է նրա միտքը զբաղեցնելու համար: Մնում է միայն նրան համոզել: Ահա իմ խնդիրը, մայրի՛կ, հենց որ նա զարթնի, հայտնիր նրան այս միտքը, միայն քո կողմից ասա՛, որ դու այդպես ես ցանկանում: Նա քեզ շատ է սիրում, եթե դու համոզես և խնդրես, քեզ չի մերժի:

ՀՈՌՈՄ. Աղջկաս սիրտը մխիթարելու համար ամեն բանի պատրաստ եմ: Լավ, կասեմ: Ահա նրա հազի ձայնն է: կարծեմ զարթնեց... (Գնում է դեպի աջ):

ՏԵՍԻԼ Ե.

ԳԱՐԵԳԻՆ (միայնակ)

ԳԱՐԵԳԻՆ. Իսկ նա մի՞թե պետք է անպատիժ մնա, նա, որ այս բոլոր թշվառությունների միակ պատճառն է: Սակայն ի՞նչ անեմ, Հեղինեն ինձանից երդում է կորզել, որ ես հավիտյան ձեռք չբարձրացնեմ նրա ամուսնու վրա: Սիրո՞ւմ է դարձյալ նրան: Ո՛չ, այդ անկարելի է, նա ինձ է խնայում... (գնում է դեպի ձախ):

ՏԵՍԻԼ Զ.

ԱՆՅՈՒՏԱ, հետո ՍԻՄՈՆ

ԱՆՅՈՒՏԱ. (Ներս է մտնում միջին դռներից): Դարձյալ ուղարկել են երեխայի հետևից. պետք է հայտնեմ: (Անցնում է աջ դռներով: Իսկույն միջին դռներից ներս է մտնում Սիմոնը):

ՍԻՄՈՆ. (Միայնակ) Պառավ իշխանուհին սադայել է դարձել, կատարյալ սադայել: Նա ինձ հրամայեց առանց երեխայի հետ չդառնալ այստեղից: Ի՞նչ անեմ, սիրտս կտրտվում է, բայց հրամայում են, եթե չկատարեմ, ինձ կվռնդեն:

ԱՆՅՈՒՏԱ. (Վերադառնում է աջ դռներից) Քեզ ո՞վ ասաց, որ այստեղ մտնես: Գնա՛, սպասի՛ր , երեխան դեռ քնած է:

ՍԻՄՈՆ. Կսպասեմ.....(Գնում է, Անյուտան նրա հետևից):

ՏԵՍԻԼ Է.

ՀԵՂԻՆԵ (միայնակ), հետո ԳԱՐԵԳԻՆ

ՀԵՂԻՆԵ. (Տնային թեթև հագուստով դուրս է գալիս աջ դռներից ծանր քայլերով) Դարձյալ խլում են ինձանից իմ զավակին և սպառնում են այևս չուղարկել ինձ մոտ: Իսկ ես հույս ունեի նրա մեջ գտնել իմ մեռած սրտի մխիթարությունը: Մեռա՛ծ սիրտ. ո՛հ, երանի թե նա մեռած լիներ: Ես սխալվում եմ նրա մասին: Նա դեռ բաբախում է և ավելի զորեղ, քան երբևէ բաբախել է: Եվ մի՞թե նա տակավին պահում է իր մեջ մի կաթիլ զգացում դեպի այն մարդը... Օհ՛ օ, դառն և ամոթալի է մտածել այդ մասին, այո, ես մի թույլ, տկար և բնավորությունից զուրկ արարած եմ, որ ատելով նրան հոգվույս ամբողջ զորությամբ, միևնույն ժամանակ թփում է ինձ, որ տակավին սիրում եմ: Բայց ի՞նչ է մնում ինձ անել այսուհետև: Տեսնել, թե իմ պատճառով ինչ բարոյական վիշտ է կրում իմ միակ եղբայրը, զգալ ամեն օր իմ մոր գաղտնի հառաչանքները և արտասուքը, տեսնել, թե ինչպես թշվառ կինը օրից օր ընկճվում է դառն դժբախտության ներքո և իբրև ուրվական պտտում իմ շուրջը: Ոչ, այդպես շարունակել անկարելի է: Պատիվս ոտնակոխ եղած, հույսերս խորտակված, անունս ամբոխի մեջ հավիտյան ապականված, անցյալս թշվառ, ներկաս ամոթալի, ապագաս առանց հույսերի: Եվ ես դեռ ապրում եմ: Ինչո՞ւ, ո՞ւմ համար... (լռություն) Մի շաբաթ առաջ ես Գարեգինի սենյակումն էի: Նա իմ միտքը զբաղեցնելու համար պատմում էր ինձ զանազան դեպքեր բժշկականության վերաբերմամբ: Այն րոպեին, երբ նա խոսում էր, հանկարծ մի միտք կայծակի արագությամբ անցավ իմ մթնած ուղեղով: Ես սարսափեցի այդ մտքից, երբ իմ հայացքը ընկավ Գարեգինի սեղանի վրա, ուր դարսված են զանազան գործիքներ և դեղեր... Այն օրվանից դես երբեմն հալածում է ինձ այդ միտքը, և միայն մոռանում եմ այն ժամանակ, երբ համբուրում եմ իմ զավակի անմեղ աչքերը: Այժմ նրան խլում են ինձանից անգթաբար և գուցե առմիշտ... Աստվա՛ծ իմ, ես այսուհետև ուժ կունենա՞մ արդյոք մաքառել այդ հանցավոր մտքի դեմ, ներիր, ների՛ր ինձ, աստվա՛ծ... (ձախ դռներից դուրս է գալիս Գարեգինը): Ահա եղբայրս, միշտ հուզված, միշտ լարված: Ոչ, պետք է մի կերպ զսպեմ ինձ և գոնե նրա ներկայությամբ հանգիստ ձևանամ:

ՏԵՍԻԼ Ը.

ՀԵՂԻՆԵ, ԳԱՐԵԳԻՆ, հետո ԱՆՅՈՒՏԱ

ԳԱՐԵԳԻՆ. Հեղինե, այսօր ինչպե՞ս ես:

ՀԵՂԻՆԵ. Լավ եմ, շատ լավ: Անհոգ կաց և մի՛ անհանգստանա: Ես զգում եմ, որ իմ վերքը օրից օր բժշկվում է, ուրիշ կերպ ինչպե՞ս կարող էի արժանի լինել քո քույրը կոչվելու, եթե ուժ չունենայի հաղթել մի ամենադառն վիշտ անգամ:

ԳԱՐԵԳԻՆ. Ամրացի՛ր, սիրելի՛ս, և դու վերջը բախտավոր կլինես: (Մեկուսի) Միշտ ինձ խաբում է, միշտ հույս է տալիս, սակայն ես զարհուրում եմ նայելով նրա կերպարանքին:

ՀԵՂԻՆԵ. Այո, ես բախտավոր կլինեմ: Բայց ինչո՞ւ դու ինձանից ավելի հուզված ես, այդ ցավալի է ինձ համար: Գարեգին, դու չպետք է այդպես լինես, մխիթարիր մեր մորը. նրա տարիքը և նահապետական հայացքը կյանքի վրա ինձ վախեցնում են: Ամոթից և հոգսից կյանքը նրա մեջ սպառվում է հետզհետե: Հոգա այդ մասին:

ԳԱՐԵԳԻՆ. (Մեկուսի) Հոգա՞մ, բայց ինչպես:

ԱՆՅՈՒՏԱ. (Ներս է մտնում միջին դռներից) Իշխանուհի՛:

ՀԵՂԻՆԵ. Ի՞նչ կա, ինչո՞ւ ես շփոթված:

ԱՆՅՈՒՏԱ. Պառավ իշխանուհին երկրորդ ծառային է ուղարկել երեխայի հետևից: Սպառնում է, որ եթե չտաք, ինքը կգա տանելու:

ՀԵՂԻՆԵ. Մի՛ թույլ տաք ուրեմն, որ նա իր սպառնալիքը կատարի: Անյուտա, երեխան զարթնել է, հագցրո՛ւ, ես կգրկեմ նրան մի անգամ ևս, և թող տանեն: (Մեկուսի): Զգում եմ, որ ապրելու ցանկությունը հետզհետե նվազում է իմ մեջ, և ես կարող եմ այսուհետև սառնարյուն դիմանալ ճակատագրի ամենախիստ հարվածին:

ԳԱՐԵԳԻՆ, Ո չ. այդ արդեն չափից դուրս է, այդքան բռնություն ես չեմ թույլ տա գործ դնել: Անյուտա, կանչիր այստեղ ծառային:

ԱՆՅՈՒՏԱ. Սիմոնի՞ն, թե՞ մյուսին:

ԳԱՐԵԳԻՆ. Միևնույնն է: (Անյուտան գնում է: Գարեգինը նստում է սեղանի մոտ և գրիչը վերցնում գրելու);

ՀԵՂԻՆԵ. Ի՞նչ ես կամենում անել:

ԳԱՐԵԳԻՆ. Մի փոքրիկ բացատրություն տալ նորին պայծառափայլությանը: Տիրապետող օրենքի հիման վրա երեխան պատկանում է անմեղ կողմին: Այս դեպքում հանցանքը հորն է. զավակը քեզ պետք է պատկանի: (Գրում է: Մեկուսի) Պետք է ամեն միջոցի դիմել:

ՀԵՂԻՆԵ. Իզո՛ւր, իզո՛ւր ես առաջարկում նրան մի բան, որից նա վճռականապես հրաժարվել է քանի անգամ: Գարեգին, միևնույնն է, չէ՞ որ ինձ համար ամեն ինչ վերջացած է:

ԳԱՐԵԳԻՆ. Վերջացա՞ծ, ո՛չ, երբեք: Ես կառաջարկեմ նրան նոր պայմաններ, թող մերժի, այն ժամանակ կմտածեմ: (Ներս է մտնում Սիմոնը):

ՏԵՍԻԼ Թ.

ՆՐԱՆՔ և ՍԻՄՈՆ

ԳԱՐԵԳԻՆ Քեզ ո՞վ է ուղարկել այստեղ, իշխա՞նը, թե մա՞յրը:

ՍԻՄՈՆ. Երկուսն էլ:

ԳԱՐԵԳԻՆ. Եվ հրամայել են առանց երեխայի չվերադառնալ:

ՍԻՄՈՆ. Այո, ես կուզեի գնալ, բայց ինձ կվռնդեն…

ԳԱՐԵԳԻՆ. Տուր այս նամակը իշխանին, ասա՛ մեր պատասխանը այս է: (Սիմոնը տատանվելով դուրս է գալիս):

ՏԵՍԻԼ Ժ.

ՆՐԱՆՔ, առանց ՍԻՄՈՆԻ

ՀԵՂԻՆԵ. Գարեգին, ինչո՞ւ չկարդացիր ինձ գրածդ:

ԳԱՐԵԳԻՆ. Անհոգ կաց, ինչ որ անում եմ, քո պատվի և անդորրության համար է: (Մեկուսի) Ես իմ երդումը քանդեցի:

ՀԵՂԻՆԵ. Այս մասին բնավ չեմ կասկածում, Բայց վախենում եմ միայն, որ ինձ համար, դու ինքդ վտանգի կարող ես ենթարկվել: Ասում են նա այժմ այնպիսի դրության մեջ է, որ ամեն բան պատրաստ է անել: Ա՛խ, Գարեգի՛ն, ես ասացի քեզ, որ կարող եմ մոռանալ իմ անցյալ և ներկա վշտերը, անքուն գիշերները, իմ սրտի դժոխային տանջանքը, բոլորը, բոլորը,

նույնիսկ արհամարհել ինձ վրա բարդված զրպարտությունները: Բայց մի բանի չեմ կարող դիմանալ — քո և մանավանդ իմ ծերունի մոր տառապանքին:

ԳԱՐԵԳԻՆ. Դարձյալ հուզվեցի՞ր, բայց ներիր, մեղավորը ես էի, որ անզգուշությամբ շոշափեցի քո սրտի թարմ վերքը: Հանգստացիր այժմ, այդ հուզմունքը կարող է վնասել քեզ:

ՀԵՂԻՆԵ. Ոչինչ, անցավ, և շուտով կանցնի ամեն բան: Ո՞ւր է մայրիկը, նա ինձ ուզում էր մի բան ասել, խանգարեցին: Խե՜ղճ կին, նա ինձ առաջարկում է ճանապարհորդել:

ԳԱՐԵԳԻՆ. Գեղեցիկ առաջարկություն է, հիանալի միտք: Ի՞նչ կասես, Հեղինե՜. լավ չի՞ լինի, եթե իրագործենք: Համաձայն ես, այնպես չէ՞, ասա՛, Բայց դու երեսդ դարձնում ես, միթե մայրիկի առաջարկությունը չես հավանում:

ՀԵՂԻՆԵ. Մայրիկի՞: Ոչ, Գարեգին, այդ քո գաղափարն է, ես իսկույն հասկացա: Բայց միևնույնն է, ինձ համար երկուսիդ ցանկությունն էլ հավասար թանկ է, միայն չեմ կարող կատարել նրանք:

ԳԱՐԵԳԻՆ. Ինչո՞ւ:

ՀԵՂԻՆԵ. Որովհետև ավելորդ է, եթե ճանապարհորդությունը ինձ համար է: Առանց այդ էլ ես շուտով կհանդարտվիմ և կդառնամ նույն զվարթ և անհոգ Հեղինեն, ինչ որ էի օրիորդ ժամանակս: Նայի՛ր, ահավասիկ, ես այժմ իսկ զվարթ եմ, միայն երբեմն տխրում եմ մի քանի րոպե, այդ էլ շուտով կանցնի, անպատճառ, կանցնի:

ԳԱՐԵԳԻՆ, (Մեկուսի) Ազնիվ, բայց իզուր խաբեություն: (Հեղինեին) Հավատում ենք քո ասածին, Հեղինե՜, բայց մի՞թե ճանապարհորդությունը կարող է խանգարել քեզ: Ոչ, ընդհակառակը, դու ավելի կկազդուրվես և ավելի զվարթ կվերադառնաս: Առաջ մենք կգնանք Ռուսաստան, կգնանք Մոսկվա, Պետերբուրգ: Ամառվա սկզբին կանցնենք արտասահման, կշրջենք ցամաքով և ծովով, կտեսնենք նոր մարդիկ, նոր աշխարհ: Իսկ առաջիկա ձմեռը կվերադառնանք Թիֆլիս:

ՀԵՂԻՆԵ, Ոչ. այդ մասին բավական է, խնդրում եմ: Ես չեմ կարող բաժանվել ո՛չ իմ մորից և ո՛չ... (մեկուսի) ինչո՞ւ հիշել մյուսին:

ԳԱՐԵԳԻՆ. (Մեկուսի) Եվ ոչ զավակից, ահա երկու ծայրեր, որ մարդու կյանքը ճնշում են երկու կողմից: (Ներս է մտնում Անյուտան վախեցած):

ՏԵՍԻԼ ԺԱ.

ՆՐԱՆՔ և ԱՆՅՈՒՏԱ

ԱՆՅՈՒՏԱ, Իշխանուհի՛:

ՀԵՂԻՆԵ. Ի՞նչ պատահեց:

ԱՆՅՈՒՏԱ. Ա՛խ սիրտս: Հիշո՞ւմ եք այն Դալալյանին, նա այստեղ է:

ՀԵՂԻՆԵ. Ի՞նչ է կամենում:

ԱՆՅՈՒՏԱ. Երեխային: Ասում է տվեք, թե չէ, դռները կփշրեմ և ուժով կվերցնեմ:

ՀԵՂԻՆԵ, (Մեկուսի) Այդքան կոպիտ անգթություն: (Անյուտային): Տվեք իրան երեխային. աղաչում եմ, տվեք տանի:

ԳԱՐԵԳԻՆ. Բռնութամբ, երբե՛ք, Հեղինե՛, եթե ինձ հարգում ես, հեռացիր այստեղից մի քանի րոպե: (Անյուտային): Թող այդ մարդը ներս գա: (Անյուտան գնում է):

ՀԵՂԻՆԵ. Գարեգին, դու նրա հետ զգույշ վարվիր. նա մի սրիկա մարդ է:

ԳԱՐԵԳԻՆ. Թող լինի, միայն թե դու հեռացիր:

ՀԵՂԻՆԵ. (Մեկուսի) Այդքան անպատվություն կրել և ապրե՞լ: Ոչ. այն հանցավոր միտքը վարակում է իմ ամբողջ էությունը: (Գնում է աջ դռերով):

ՏԵՍԻԼ ԺԲ.

ԳԱՐԵԳԻՆ և ԴԱԼԱԼՅԱՆ (միջին դռներից ներս մտնելով):

ԳԱՐԵԳԻՆ. Ո՞վ եք դուք:

ԴԱԼԱԼՅԱՆ.Նորին պայծառափայլություն, իշխան Միխայել Եգորովիչ Բեգմուրյանի եղբայրը:

ԳԱՐԵԳԻՆ. Եղբա՞յրը:

ԴԱԼԱԼՅԱՆ. Այո, համարյա թե հարազատ. Մայրս նրա դայակն է եղել, մենք միասին միևնույն կրծքից ենք ծիծ կերել: Իշխանը ինձ սիրում է եղբորից ավելի, օգնում է փողով, ես էլ նրանից չեմ խնայում իմ փոքրիկ ծառայությունները:

ԳԱՐԵԳԻՆ. Այժմ ի՞նչ եք կամենում:

ԴԱԼԱԼՅԱՆ. Եղբորս երեխային:

ԳԱՐԵԳԻՆ, Ասացեք իշխանին, որ երեխային ես բռնությամբ պահում եմ և երբեք չպիտի տամ:

ԴԱԼԱԼՅԱՆ. Դուք այդ արդեն գրել եք իշխանին: Այո, նա ձեր նամակը ստացավ և ինձ ուղարկեց բռնության դեմ բռնություն գործ դնելու: Նորին պայծառափայլությունը, պարո՛ն, ձեզանից վիրավորված է, ձեզ խորհուրդ չեմ տալիս նրան հանդիպել: Վերջին ժամանակ նրան ճանաչել չի լինի: Պարտատերերը նրան խեղդում են, այսօր-վաղը տան կահ-կարասին փողոց կհանեն ծախելու: Դուք այդ բանը երևի գիտեիք, որովհետև ձեր նամակում նրան առաջարկել էիք երեխային փողով ծախել ձեզ: Հենց այդ բանն է նրան կատաղեցրել: Կրկնում եմ, չլինի թե հանդիպեք նրան, քաղցած առյուծը վտանգավոր է:

ԳԱՐԵԳԻՆ. Բավական է. գնացեք պարո՛ն, այդ վտանգավոր առյուծին ասացեք, որ ես նրան կրկին անգամ համարում եմ մի անբարոյական մարդ և երբեք իմ քրոջ զավակին չեմ հանձնի նրա խնամքին:

ԴԱԼԱԼՅԱՆ. Նախ ես այստեղից կգնամ երեխային գրկած, երկրորդ՝ եթե ձեր ասածը նրան հայտնեմ, նա ինքը կգա հենց այստեղ ձեզ պատասխանելու: Կրկնում եմ, նա շատ է փոխվել:

ԳԱՐԵԳԻՆ. Կրկնում եմ, կատարեցեք իմ պատվերը:

ԴԱԼԱԼՅԱՆ. Տվեք երեխային,

ԳԱՐԵԳԻՆ. Դո՛ւրս, պարո՛ն: (Մոտենամ է սեղանին):

ԴԱԼԱԼՅԱՆ. Առանց երեխայի մի քայլ անգամ չեմ անի, այդ ձեռնտու է ինձ, գիտե՞ք:

ԳԱՐԵԳԻՆ. Դո՛ւրս, կրկնում եմ:

ԴԱԼԱԼՅԱՆ. Տվե՛ք երեխային. կարելի է դուք նեղանում եք, կգնամ կվերցնեմ: Կարծեմ այս սենյակումն է: (Դեպի աջ դռները գնալու ձև անելով):

ԳԱՐԵԳԻՆ. (Հանում է սեղանի արկղից մի ատրճանակ) Փորձեցեք մի քայլ անել, և երկրորդը ձեզ չի հաջողվի:

ԴԱԼԱԼՅԱՆ. (Վախեցած հետ կանգնելով) Ատրճանակ, այդ մեկը ես մոռացել էի:

ԳԱՐԵԳԻՆ. Դո՛ւրս, եթե ոչ ձեռս չեմ կարող զսպել:

ԴԱԼԱԼՅԱՆ. Իշխանը ձեզ կպատժի, (Գնում է):

ԳԱՐԵԳԻՆ. (Միայնակ) Այժմ ամեն բան պետք է աչքի առաջ ունենալ: (Ատրճանակը գրպանն է դնում) Ես նրան առաջարկեցի վերջին պայմանը, նա չընդունեց, ուրեմն նա ընդունում է իմ հրավերը: Այո, թող նա դուրս գա ասպարեզ, և ես իմ արյան գնով կմաքրեմ իմ քրոջ անպատված անունը: Առայժմ պետք է նրան նախազգուշացնել, որ այս տունը ոտ չդնի: Մեր հաշիվը դրսում կվերջացնենք: (Ուզում է գնալ, Հեղինեն դուրս է գալիս աջ դռներով):

ՏԵՍԻԼ ԺԳ.

ԳԱՐԵԳԻՆ և ՀԵՂԻՆԵ

ՀԵՂԻՆԵ. Ո՞ւր ես գնում:

ԳԱՐԵԳԻՆ. Իսկույն կվերադառնամ:

ՀԵՂԻՆԵ. Ոչ, կաց: Ես լսեցի ձեր խոսակցությունը, դու չպիտի դուրս գնաս:

ԳԱՐԵԳԻՆ. Խնդրում եմ, Հեղինե՛, մի խանգարիր, գործը շատ կարևոր է:

ՀԵՂԻՆԵ. Ուրեմն երդվիր, որ քո գնալը քեզ վտանգ չի սպառնում, երդվիր մայրիկի անունով:

ԳԱՐԵԳԻՆ. (Տատանվելով) Երդվում եմ, որ իմ գնալը ինձ ո՛չ մի վտանգ չի սպառնում այս անգամ: (Գնում է շտապով):

ՏԵՍԻԼ ԺԴ.

ՀԵՂԻՆԵ, հետո ԱՆՅՈՒՏԱ

ՀԵՂԻՆԵ. (Միայնակ) Ի՞նչ ասաց, այս անգա՞մ, ուրեմն մյուս անգամ սպառնում է. Այո, ես լսեցի ամեն բան և տեսա, որ ատրճանակը գրպանը դրեց: Կռիվը վատ ընթացք է ստանում, եղբայրս, կարծեմ, նրան մենամարտության է ուզում հրավիրել: Օ՜հ, նա վտանգի ենթարկվի ի՞մ պատճառով, մի՞թե ես այդքան տկար եմ: Ոչ, ոչ, հազար անգամ ոչ, պետք է մի հարվածով հանգույցը լուծել: Եվ այդ հարվածը իմ ձեռքին է, իսկ ես տակավին տատանվում եմ: Երկյուղից, ոչ, այլ մի ավելի զորավոր բանից: Դա այն ծերունի կնոջ կերպարանքն է: Ա՜խ մա՛յր, խե՜ղճ մայր, դու չես դիմանա այդ հարվածին, այնինչ նա իմ տառապանքի, քո որդու և եղբոր կյանքը փրկելու միակ դարմանն է, այո, միակ դարմանը:

ԱՆՅՈՒՏԱ. (Ներս է մտնում միջին դռներից) Իշխանուհի՛, ձեր եղբայրը հրամայեց ինձ ոչ ոքի չընդունել, բայց մեկը եկել և անպատճառ ուզում է ձեզ տեսնել: Այստեղից չեմ հեռանա, ասում է, մինչև որ նրա հետ անձամբ չտեսակցեմ:

ՀԵՂԻՆԵ. Ո՞վ է նա:

ԱՆՅՈՒՏԱ. Վախենում եմ անունն անգամ հայտնել:

ՀԵՂԻՆԵ. Ասա, թեկուզ մի չար ուրվական լինի, պատրաստ եմ ընդունել:

ԱՆՅՈՒՏԱ. Սուլիկյանը:

ՀԵՂԻՆԵ. Սուլիկյա՞նը, նա այստե՞ղ: (Ներս է մանում Սուլիկյանը):

ՏԵՍԻԼ ԺԵ.

ՀԵՂԻՆԵ և ՍՈՒԼԻԿՅԱՆ

ՍՈՒԼԻԿՅԱՆ. Այո, նա ինքը... (Անյուտան մի քանի վայրկյան մնում է դռների մոտ, ապա անհետանում):

ՀԵՂԻՆԵ. Այսօր ինձ վիճակված է շատ բան տեսնել և շատ զգալ (Բարձր) Ի՞նչ եք կամենում:

ՍՈՒԼԻԿՅԱՆ. Գիտեմ, ոչ մի անսպասելիք ձեզ չէր կարող այնքան զարմացնել, որքան իմ այստեղ երևալը:

ՀԵՂԻՆԵ. Ես վաղուց դադարել եմ զարմանալ... Ասացե՛ք, ի՞նչ է հարկավոր ձեզ:

ՍՈՒԼԻԿՅԱՆ. Իշխանուհի՛, դուք բարի եք, վեհանձն, համբերող, ահա ինչու համարձակվեցի այստեղ գալ: Ձեր առաջ կանգնած է մի հանցավոր, բայց ակամա հանցավոր: Այո, ես մոռացա իմ ընկերական զգացումը և բարեկամի սուրբ պարտականությունը, ես որ կյանքումս չէի սիրած, հրապուրվեցի ձեզանով: Սկզբում կարծում էի, թե դա րոպեական մի անցողիկ քմահաճություն է: Օ՜օ մի դարձնեք ձեր երեսը, ամոթը ինձ և միմիայն ինձ է վերաբերում: Սակայն ժամանակը ինձ համոզեց, որ սխալվում եմ: Դուք անգիտակցաբար տիրապետեցիք իմ սրտին: Այն չարագուշակ երեկոն, երբ ինձ այնպիսի արհամարհանք ցույց տվիք, իմ գոյության ամենաերջանիկ և ամենատարաբախտ վայրկյանն էր: Երջանիկ, որովհետև զգում էի, որ կյանքիս մեջ առաջին անգամ սիրում եմ մեկին անհուն սիրով, տարաբախտ, որովհետև այդ սերը փոխադարձ չէր, արգելված էր, մեղսալի, արհամարհված:

ՀԵՂԻՆԵ. Այո արհամարհված, բավական է, մի՛ հիշեցրեք ինձ անցյալը, օօ՜օ, ինչո՞ւ եկաք այստեղ, ինչո՞ւ կրկին հուզեցիք ինձ:

ՍՈՒԼԻԿՅԱՆ. Իմ մեջ կռվում էին երկու ծայրահեղ զգացումներ՝ մի կողմից ընկերական սրբությունը և հասարակական կարծիքի ծանրությունը, մյուս կողմից՝ սերը: Վերջինը հաղթող հանդիսացավ: Ես տեսա, որ անդառնալի կերպով մղվում եմ դեպի մի մութ անդունդ: Այդպես ես ընկա ձեր առաջ: Սակայն դուք իմ մեջ զարթեցրիք մի մաքուր, անարատ զգացում, որին անծանոթ էի: Դուք ինձ սովորցրիք սիրել գաղափարական սիրով, համեստ, բայց անհաղթելի առաքինությունը, որ գուցե մինչև այդ ժամանակ ինձ համար ձանձրալի էր: Իշխանուհի՛, ամբոխը անողոք է իր սխալների մեջ, ինչպես նա անողոք է, երբ մեկին դատապարտում է արդարացի կերպով: Այսօր ես արժանի եմ հասարակական դատաստանի արդար պատժին, իսկ դուք նրա մոլորության անմեղ զոհն եք, ձեր անարգ ամուսնու պատճառով, այն մարդու, որի ընկերը լինելու հանցանքն եմ ունեցել: Այդ է, որ կրկնապատկում է իմ վիշտը և զորեղացնում իմ մեջ խղճի խայթոցը: Իշխանուհի՛, եղեք վեհանձն, ինչպես և եղել եք միշտ, ազատեցեք ինձ իմ ներքին դժոխքից: Ներեցեք

հանցավորիս, բայց ակամա հանցավորիս, աղերսում եմ, որովհետև, ձեր ներումը միայն կարող է արդարացնել իմ գոյությունը։

ՀԵՂԻՆԵ. Բավական է, ես հասկացա ձեր տարօրինակ այցելության նպատակը։ Այժմ լսեցեք և դուք։ Ես ոչ ոքի դեմ ոխ չունեմ։ Իմ թշվառության պատճառը միայն մի մարդ է, որի անունը վաղուց դադարել եմ հիշել։ Եթե այսօր ձեր անունը հասարակության մեջ հիշվում է իմ անարգված անվան հետ միասին, դա ոչ այնքան ձեր հանցանքն է, որքան այն մարդու։ Ես չեմ դատապարտում ձեր այն զգացումը, որ ունեցել եք դեպի ինձ, որովհետև դա ձեր կամքի դեմ է եղել, որովհետև դուք վատ մարդ չէիք։ Այժմ ահա իմ պատասխանը, հեռացեք այստեղից ավելի հանգիստ հոգով, քան եկել եք։

ՍՈՒԼԻԿՅԱՆ. Բարի՛ կին, ուրեմն դուք ինձ խղճում եք, այնպես չէ՞, ասացեք՝ խղճում եք և ներում։ (Ներս է գալիս միջին դռներից Գարեգինը)։

ՏԵՍԻԼ ԺԶ.

ՆՐԱՆՔ և ԳԱՐԵԳԻՆ

ԳԱՐԵԳԻՆ. Սուլիկյա՞նը, (Սույիկյանը հետ է քաշվում. մի քանի վայրկյան լռություն) Հեղինե՛, բացատրիր, այդ ի՞նչ է նշանակում։

ՀԵՂԻՆԵ. Նա եկել է թողություն խնդրելու։

ԳԱՐԵԳԻՆ. Թողություն խնդրելո՞ւ։ Պարո՛ն, ձեր կատակը շատ վտանգավոր է, հեռացեք այստեղից։

ՀԵՂԻՆԵ. Հանդարտվի՛ր, նա այնքան մեղավոր չէ, որքան կարծում ես։

ՍՈՒԼԻԿՅԱՆ. Ես բոլորը ասացի, այժմ դատը ձեր ձեռքումն է։

ԳԱՐԵԳԻՆ. Այդ դատը ես կկատարեի, եթե դուք արժանի՛ լինեիք և եթե իմ կյանքը հարկավոր չլիներ իսկական հանցավորին պատժելու համար։

ՀԵՂԻՆԵ. (Մեկուսի) Իսկական հանցավորին։ (Բարձր) Գարեգի՛ն, քո խոսքերը ինձ սարսափեցնում են։

ԳԱՐԵԳԻՆ. Ասա՛ ինձ, քո՛ւյր, այստեղ, բացի այդ մարդուց, ուրիշ ոչ ոք չի՞ եկել։

ՀԵՂԻՆԵ. Ոչ ոք։

ԳԱՐԵԳԻՆ. Չի եկել ուրեմն, բայց եթե նրա մեջ մնացել է մի կաթիլ ինքնասիրություն, պետք է գա։

ՍՈՒԼԻԿՅԱՆ, (Մեկուսի) Տեր աստված, ո՞վ պետք է գա, մի՞թե նա։

ՀԵՂԻՆԵ. Այդ ի՞նչ տարօրինակ լեզվով ես խոսում, Գարեգին, ես չեմ հասկանում, ո՞վ պետք է գա։

ԳԱՐԵԳԻՆ. Ներիր, Հեղինե՛, ես վճռեցի քանդել իմ երդումը։ Այն անարգ մարդու գրած նամակիս մեջ վիրավորել եմ նրան. Նա սաստիկ զգացել է այդ վիրավորանքը և պատրաստ է իմ դեմուդեմ կանգնել։ Ես գնացի նրան նախազգուշացնելու, տանը չէր. Նա կարող է այստեղ գալ։

ՍՈՒԼԻԿՅԱՆ. (Մեկուսի) Միքայել, աստվա՛ծ իմ, արյունահեղություն պետք է պատահի, ես այստեղից չեմ հեռանա։

ՀԵՂԻՆԵ. Այստե՞ղ, նա այստե՞ղ, արդյոք խելագարվե՞լ է նա, թե իմ լսողությունն է խանգարվել:

ԳԱՐԵԳԻՆ. Ոչ մեկը, ոչ մյուսը: Ներիր, Հեղինե՛, ես քանդեցի քեզ տված երդումս, ես նրա հետ պետք է անձամբ հաշիվներս վերջացնեմ:

ՀԵՂԻՆԵ. Կռիվ ինձ համար, տուր դրան երեխային, եթե նա է այդ կռվի պատճառը: Ես չեմ ուզում իմ երեխային, այո, չեմ ուզում, քանի որ նա այդքան տառապանք է պատճառում իմ մորը և քո կյանքը վտանգի ենթարկում:

ԳԱՐԵԳԻՆ. Խնդիրը քո պատվին է վերաբերում, նա պետք է մաքրվի (Սուլիկյանին) և թող ձեր ներկայությամբ լինի, որովհետև դուք ևս մասն ունեք: (Ներս է մտնում իշխանուհի Մարիամը: Սուլիկյանը մի անկյուն է քաշվում նրան չտեսնելու համար):

ՏԵՍԻԼ ԺԷ.

ՆՐԱՆՔ և ՄԱՐԻԱՄ

ՀԵՂԻՆԵ. Դարձյալ մի տարօրինակ այցելություն:

ՄԱՐԻԱՄ. Ձեր վարմունքը այնքան ինձ կատաղեցրեց, չկարողացա ինձ զսպել: Ի՞նչ իրավունքով եք դուք պահում իմ որդու երեխային:

ԳԱՐԵԳԻՆ. Իսկ ի՞նչ իրավունքով եք դուք հետ պահանջում:

ՄԱՐԻԱՄ. Հարցրու քրոջիցդ, նա շատ լավ գիտե: (Հեղինեի կողմը) խայտառա՛կ: Բավակա՞ն է, բերե՛ք այստեղ երեխային:

ՀՈՌՈՄ (Աջ կողմի դռներից դուրս գալով) Դուք նրա երեսը չեք տեսնի:

ԳԱՐԵԳԻՆ. Այո. բարեհաճեցեք հեռանալ, իշխանուհի՛, եթե չեք կամենում ձեր ազնվական կոչումը ստորացած տեսնել:

ՀԵՂԻՆԵ. Մայրի՛կ, երեխային տուր այդ կնոջը:

ՀՈՌՈՄ. Ի՞նչ:

ՍՈՒԼԻԿՅԱՆ. (Մեկուսի) Խեղճ մայր:

ՀԵՂԻՆԵ. Խնդրում եմ, երեխային հանձնիր այդ կնոջը:

ԳԱՐԵԳԻՆ. Հեղինե

ՀԵՂԻՆԵ. Ես այդպես եմ կամենում, Գնանք, իշխանուհի՛,ստացեք ինձանից իմ երեխային (Գնում է Հոռոմը և նրա հետևից Մարիամը դեպի աջ):

ԳԱՐԵԳԻՆ (Մեկուսի) Ես ապշած եմ այդ կնոջ համբերության վրա: Ի՞նչ է նշանակում այդ տարօրինակ սառնությունը, որ հանկարծ տիրեց նրան (Գնում է նույն դռներով):

ՍՈՒԼԻԿՅԱՆ (Մի քանի քայլ առաջ գալով) Ոչ, ես այստեղից չեմ կարող հեռանալ: Անշուշտ մի ծանր դժբախտություն պետք է տեղի ունենա այստեղ: Հեղինեն ուրվական է դարձել: Նրա ամուսինը պետք է գա այսօր: Թող ինչ որ լինելու է իմ աչքի առաջ լինի: Գարեգինն էլ այդպես ասաց: Առժամանակ դուրս գամ: (Գնում է միջին դռներով):

ՏԵՍԻԼ ԺԸ

ՀԵՂԻՆԵ (միայնակ)

ՀԵՂԻՆԵ. (Դուրս է գալիս աջ դռնից) Նրանք խլեցին իմ զավակին, իմ միակ հույսը և ապավենը: Վերջին անգամ սեղմեցի նրան իմ կրծքին, և վերջին անգամ ջերմ արցունքը շաղաղեց իմ հրատապ աչքերը: Վերցրեց նրան իմ սկեսուրը, տվեց ծառային ու տարավ: Նա, ձեռքերը տարածած դեպի ինձ, թոթով լեզվով, մայրի՛կ էր աղաղակում: Ես այլևս չպիտի լսեմ նրա ձայնը: Ուրեմն լրացավ իմ դառնության բաժակը: Ո՞վ պետք է նրան դատարկի: Եղբա՞յրս, օհ՜օ, սարսուռ է անցնում ամբողջ մարմնովս: Ն՞ա, ինչու ես պիտի թույլ տամ նրան այդ քայլը անել: Արյո՞ւն թափել, ե՞ս տեսնեմ նրա արյունը: Ոչ, եթե իմ մեջ մեռել է կյանքի հույսը, եթե ես կորցրել եմ իմ սերը, ամուսնուս, զավակիս, եթե զրկվել եմ անունից, պատվից, եթե աշխարհի մեջ անարգված, ստորոցած արարածի հռչակ եմ վայելում, բայց տակավին կա իմ մեջ սեր դեպի իմ եղբայր և մայրը և գոնե մի կաթիլ ինքնասիրություն: Ուրեմն վերջին հարվածը ինձ պետք է հասնի: Տամ այդ հարվածը, քանի ուշ չէ, քանի Գարեգինը չի հանդիպել այն մարդուն... Ահա նա, իմ միակ միջոցը, (ցույց տալով ձախ կողմի սենյակը) այնտեղ է, գնամ, վերցնեմ և ... արիացիր, դժբախտ կին: (Գնում է դեպի ձախ: Միջին դռներից անմիջապես դուրս է գալիս Անյուտան):

ԱՆՅՈՒՏԱ. Իշխանուհի , ա՜խ, ո՞ւր է նա, այսօր տարօրինակ հյուրեր են այցելում մեզ (շտապ գնում է դեպի աջ):

ՄԻՔԱՅԵԼ (Ներս մտնում միջին դռներից). Ո՞ւր է նա, որ ինձ կռվի է կանչում, թող գա, այսուհետև ինձ համար խտրություն չկա անարգության և մահու մեջ: Ամեն ինչ կորցրի՝ պատիվ, փող, դիրք և հույս ապագայի վրա: Եվ այդ դրության մեջ մի պատանի ինձ վերջին վերքն է տալիս: Զգո՜ւշ կաց, ահա նա եկել է քեզ իր պատասխանը անձամբ տալու: Բայց ուր են, այստեղ ոչ ո չի երևում, մի թե փախել են: (Միջին դռներից ներս է մտնում Սուլիկյանը):

ՏԵՍԻԼ ԺԹ

Միքայել և Սուլիկյան

ՄԻՔԱՅԵԼ. (Ապշած ետ քաշվելով): Դո՞ւ, այստե՞ղ:

ՍՈՒԼԻԿՅԱՆ. Չգիտեմ որն է ավելի զարմանալի՝ քո՞, թե՞ իմ այցելությունը:

ՄԻՔԱՅԵԼ. Ես եկել եմ վրեժ լուծելու:

ՍՈՒԼԻԿՅԱՆ. Իսկ ես եկել եմ զղջալու: Նայիր երեսիս: (Միքայելը նայում է) Անպիտան, ո՞ւր է քո խիղճը:

ՄԻՔԱՅԵԼ. Կաց: Դեռ մեկին պատասխանեմ, հերթը քեզ կհասնի:

(Աջ դռներից գալիս է Գարեգինը):

ՏԵՍԻԼ ԺԻ

Նրանք, Գարեգին, հետո ՀԵՂԻՆԵ, Հոռոմ և Անյուտա

ԳԱՐԵԳԻՆ. (Տեսնելով Միքայելին) Ա՜ա, ես ձեզ սպասում էի:

ՄԻՔԱՅԵԼ. Իմ վերջին պատասխանը ընդունելու, այդպես չէ՞:

ՍՈՒԼԻԿՅԱՆ. Բայց ոչ այստեղ. այդ տմարդության վերջին ծայրը կլինի: Ես պատրաստ եմ նրա (ցույց տալով Գարեգինին) փոխարեն ձեզ հաշիվ տեսնել: Գնանք ուրեմն: (Ուզում է գնալ. Ներս է մտնում ձախ դռներից Հեղինեն. մի տոմսակ ձեռին և նրանց առաջը կապում):

ՀԵՂԻՆԵ. Կացեք:

ՄԻՔԱՅԵԼ. (Մեկուսի) Հեղինե՞ն... ինչպե՜ս է փոխվել նա:

ԳԱՐԵԳԻՆ. Քույր ինչո՞ւ եկար, թող մեզ, որ գնանք:

ՀԵՂԻՆԵ. Երբեք, ես եկա վերջին անգամ տեսնելու այդ մարդուն: Սպասեցեք, դուք եկել եք վրեժ լուծելու, այնպես չէ՞: Շատ ուրախ եմ ձեր տեսությանը: Բայց մի՛ բարկանաք, մի քանի րոպե ևս, և ձեր վրեժը լուծված կլինի: (Դողալով մի քանի քայլ առաջ է գալիս: Բոլորն ապշած նայում են և անգիտակցաբար հետ կանգնում):

ՄԻՔԱՅԵԼ. Ի՞նչ են նշանակում այս խոսքերը:

ՀԵՂԻՆԵ. (Տոմսակն տալով) Կարդա և կիմանաս: (Միքայելը շփոթված վերցնում է տոմսակը):

ՄԻՔԱՅԵԼ. ... Ես դողում եմ: (Կարդում է) «Իմ մահվան համար ոչ ոքի չմեղադրել»... (շփոթված նայում է Հեղինեին):

ԳԱՐԵԳԻՆ. (Շտապով մոտենում է և բռնելով ձեռքը, նայում աչքերին) Հեղինե, ի՞նչ պատահեց... ա՜ա ... դու թո՞ւյն ես ընդունել:

ԲՈԼՈՐԸ. (Միաձայն սարսափած) Թո՞ւյն...

ՀՈՌՈՄ. Երկնայի՜ն աստված, աղջի՜կս, աղջի՜կս...

ԳԱՐԵԳԻՆ Հասկանում եմ, իմ սեղանից ես վերցրել... Աստվա՜ծ իմ , արդյոք ի՞նչ միջոց կա... (շտապով գնում է դեպի ձախ սենյակը):

ՄԻՔԱՅԵԼ. Նա թունավորել է, նա մեռնում է, օգնեցե՜ք, ազատեցե՜ք... օօ՜օ, ես չեմ համարձակվում մոտենալ նրան...Հեղինե, ես քեզ սպանեցի: Այո, ես քեզ զրպարտեցի, այն գիշեր ես հարբած էի, հարբած էի, խելքս գլխիս չէր, սուտ էի ասում, անգութ, անխիղճ սուտ: Հեղինե, դու անմեղ ես: (Սուլիկյանին) Ասա, որ անմեղ է նա, ասացեք,

ՀԵՂԻՆԵ. Ո՜ւշ է... ահա նա ազդում է և ինչպես արագ:

ԳԱՐԵԳԻՆ. (Հետ դառնալով, մի բաժակ ձեռին) Խմիր, Հեղինե, այս դեղը քեզ կփրկե:

ՀԵՂԻՆԵ. (Բաժակը հրելով) Երբեք... այսպես ավելի լավ է: Մայրիկ, եղբայր, ներեցե՜ք ինձ, ուրիշ միջոց չկար... (Միքայելին) Տես ահա այն կնոջ վերջը, որ քեզ սիրում էր անշենջ սիրով, որ քեզ համար զոհեց ամեն բան, ամեն բան: Ապրիր այժմ հանգիստ.....

ՄԻՔԱՅԵԼ. Ոչ, ես չեմ կարող կրել այս հարվածը... Հեղինե, Հեղինե (չոքում է նրա առաջ):

ՀԵՂԻՆԵ. Թողնում եմ քեզ մեր զավակին... պահիր, սիրիր, ես... կներեմ... (Մեռնում է: Փոքր լռություն):

ՍՈՒԼԻԿՅԱՆ. Մեռա՜վ, անարա՜տ կին, ի՞նչ մեղք ունեիր դու: (Միքայելին) Ստոր արարած, ահա քո տկարության զոհը:

ԳԱՐԵԳԻՆ. Քո՜ւյր, անգին քույր... (հեկեկալով ընկնում է Հեղինեի դիակի վրա)...